




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Մ. ԻՇԽԱՆ	Լեւոն Շանթի կեանքը
Մ. ՀԱՃԵԱՆ	Ահա թէ ո՛վ եմք
Մ. ՊԶԱՔՃԵԱՆ	17-39ի շոգեկտւոքը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Դարպասներուն անցեալիդ
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Մահուան իսկոյնէ
Պ. ՀԵՐԵԱՆ	Թախծառ շուրջալար հարսանեկան
ԳԱՐԵԳՐԻ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Հայ գիրքը՝ տազմապը հայուն
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Արդի գրականութեան դիմագիծը եւ տազմապը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Զօրայր խալաթեանի «Մհոնդ-յառնոզ»ը
* * *	Ժամգարմական վարչութեան գեղարուար հայերի յեղափոխական շարժումների մասին
Ա. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ	Տեղեկագրի մտքեր
* * *	Հերթական կամայականութիւն եւ անբարեխղճութիւն հերթական...
* * *	Մշակութային յորեր 21



Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՄՏԻ

Ի. ՅԱԲԵ. ԹԻՒ Ն. ՆՈՅՆԻՍԻՐ 1981 ԳԵՐԱԲԵ

Մ. ԻՇԽԱՆ

— Կարի-կարի հաւատած է, որ կը լե-
ցնէ կեանքը եւ կ'իմաստաւորէ զայն:

Այս էր իր գաւառակը, որուն կը հետեւէր
շիւտեղանքեղանք, աշխուժով եւ հաճոյքով:
Յաճախ կը սիրէր կրկնել:

— Աշխատեմք իմ հաճոյքս է, գուպարու-
թիւն, խազս. ինչպէս ուրիշներ հաճոյք կ'առ-
նեն քաջախազէն, եւ այ մեծ բաւականութիւն կը
ստանամ գրիչիս եւ քուղրերսն եւս խաղալէն:

Եսմք այն գրագէտներէն չէր, որ տառապա-
նով կ'արտագրէին: Այս հաստատումը չի նշանա-
կեր աճելու, որ ամենից եւ արագ գրող մըն էր:
Բայց գրելու, ստեղծելու գործըստիւնը կը հա-
նայացնէր զինք, կը լեցնէր իր ամբողջ կեանքը:

Մ. ԻՇԽԱՆ



ԼԵՒՈՆ ԾԱՆԹԻ ԿԵԱՆՔԸ

Ա.— ՍԿՋՐՈՒՆՔԻ ՄԱՐԴԸ

Շատ անգամ մեծ դժգոհութիւնը բաղկացած է քանի մը
չոր թիւերու յիշատակութեամբ, որուն վրայ կ'աւելնան իր հաշակը անմահ
պահող երկերու անուններ, վարած պաշտօններու թուարկում, ծնած ու թաղ-
ւած վայրերու արձանագրութիւն, եւայլն: Հիշատակահաշիւն այս գիծերը ան-
բաւարար են ապագայ սերունդներու աչքին ապրիցնելու բուն իսկ մարդը,
հինգանիս ու գործօն անձը՝ իր բնութեան յատկանշական կողմերով, իր

խառնուստձեռն տիրական առանձնայատկութիւններով եւ իր գումանած սկզբութեան կենսադործումով :

Գրագէտը, գիտունը կամ արուեստագէտը մահէն քոռորդ դար ետք շատ յաճախ կը վերածուի պարզ անունի մը կամ շատ-շատ՝ երկու քառի մէջ խտացած տարազի մը — «մեծ բանաստեղծ», «տաղանդաւոր երաժիշտ», «հանճարեղ նկարիչ» :

Ո՞ր է ՄԱՐԴԼ լակայն, ան՝ որ ի կենդանութեան կը դործէր, կը յուզուէր, կը բարկանար, կը ժպտէր, ուրիշ խօսքով՝ ինքնայատուկ ներկայութիւն ու նկարագիր մըն էր բնկերութեան մէջ :

Գիշ անգամ «մարդը» սեւեռող գրութեանքներ հասած են մեզի անցիւղէն : Պաշտօնական կենսագիրներն անգամ դժւացած են յաճախ բնշահարացումներով եւ գովաբանութիւններով : Կորիւնի դործը շատ աւելի ներբողական մըն է Ս. Մեքրոպի անձին նուիրում, քան բարբառն եւ գունազեղ պատկերացում :

Մեռնողը կը վերածուի առհասարակ անհայելի սրբութեան եւ բուն իսկ մարդը զերեզման կ'իջնէ իր ոսկորներուն հետ :

Անժառ անուն մը իսկապէս կենդանի պահելու լաւագոյն միջոցներէն մէկն է յուշագրութիւնը, պայծառաւ, որ գրուած ըլլայ հարապատութեամբ եւ աննախապաշար ոգիով : Առօրեայ պղտիկ դէպքեր, ենթակային կողմէ արտասանուած յատկանշական խօսքեր, վերաբերումի եւ հակադրեցութեան ինքնաշարժ կերպեր շատ աւելի գոյն եւ կենդանութիւն կու տան անհետացողի դէմքին, քան թէ երկարապատում վերլուծումներն ու զոյտասանքները :

Կեանքի բնական օրէնքով «մեծ դէմքերը», որքան ալ մեծ ըլլան, իբրեւ մահկանացու կը մեկնին այս աշխարհէն : Շատ չանցած կը մեկնի նաեւ այն սերունդը, որ ճանչցած էր զինք եւ իր գիտակցութեան մէջ յստակ կենդանագիրը ունէր այլ արժէքաւոր անձին : Եւ ահա յաջորդ սերունդներուն համար կը մնան լոկ չոր թիւեր, անուններ եւ ազատ ստուերազօներ :



Լեւոն Շանթ մեր գրականութեան յայտնի դէմքերէն է եւ մեր մշակութիւն ժառանգ ձգած է գրական արժէքաւոր հարստութիւն մը : Իր «կենդանագրական գիծերն» ալ գրի առնուած են շատոնց : Գոյութիւն ունի նաեւ անոր երկերուն մատենագիտական ուսումնասիրութիւնը : Գոյութիւն ունին իր մասին գրուած քաղմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ : Բայց ո՞ր է մարդը, ապրող ու գործող մարդը : Երիտասարդութիւնը անսեղեակ է այդ մասին :

Լ. Շանթ Պէյրութ ապրեցաւ աւելի քան 20 տարի, 1930էն մինչեւ 1951, այսինքն՝ մինչեւ իր մահը : Անոնք, որ զինք ճանչցան, հետք գործեցին՝ իրենց մտքին առջեւ ունին անշուշտ Լեւոն Շանթ մարդուն կենդանի պատկերը : Բայց անոնք ալ հաստատաբար պահպելու վրայ են : Ու վաղը, ապահովաբար զինք յիշող պիտի չմնայ : Շանթ պիտի դառնայ գրականութեան գիրքերու ընտելի եւ հեղինակի անուն :

Սո եղայ անոնցմէ մէկը, որոնք ամբողջ ժառն տարի ապրեցան իր ներկայութեան, նախ՝ իբրեւ աշակերտ, ապա՝ իբրեւ ուսուցիչ, Պէյրութի Հայ Ճեմարանին մէջ՝ ձիւղ այս պատճառով ալ խղճի պարագ կը գրամ քունի մը գրութեանքով կենդանացնել Լ. Շանթի պատկերը ապագայ սերունդ-ներուն համար : Կը խոստովանիմ, որ գիւրին աշխատանք չէ անկա, որովհետեւ Լ. Շանթ, իր բնատրութեամբ, վերապահ ու մեկուսի ապրող մարդ

էր, շատ քիչ կը բանար իր հոգիին վարագոյրը շուրջիններու աչքին: Քիչ կը յարաբերէր ուրիշներու հետ: Անոր սրբաւայրը աշխատանքներէն էր, ուր կը սիրէր փակուած մնալ ժամեր շարունակ, կտրուած աշխարհէն եւ մարդոցմէ: Ախուհանգերձ կարելի է յիշատակել կարգ մը գրուածներ, որոնք աւելի ցայտուն կը զարմեն իր անձն ու նկարագիրը:

Այլեւս առջեւ է ահա իր կերպարանքը, փոքրիկ մօրուքով, գլխուն ճաղատը ծածկող մազերու խուրձով մը, որ ձախ կողմէն առնուած փոխառութեամբ մը կը տարածուէր գէպի աջ, միշտ կոկիկ հագուած, մաքուր, փողկապը վզին եւ առանց կոթի ակնոցով մը, որ երբեմն կը թառէր քիթին, երբեմն թելով մը փար կախուած կը մնար քանկոնի լամբակէն: Այնան առաջին անձրեւներուն Շանթի ոտքերը պաշտպանուած կ'ըլլային ձգախէժէ կըրկնակոյճիկով եւ ուսին վրայ կու գար աւելնալու անխուսափելի վերարկուն: Աշխոյժ, եռանդուն, թեթեւաշարժ՝ միջահասակ իր մարմինը կրցած էր պահել միշտ բարեձեւ, առանց տարիքաւորները յատկանշող փոքր աշտուցքին: Ամէն անգամ, որ զուրկ էլլէր քայելու, անպայման ձեռքը կ'ըլլար իր գաւազանը ու մէկ թելին վրայ՝ վերարկուն: Աղուշաւորութիւնը կը նկատէր իր ֆիզիքական անձի պահպանման գլխաւոր գէնքը: Կր սիրէր յաճախ կտտակով կրկնել, ցոյց տալով իր գաւազանը.

— Ասիկա իմ երրորդ ոտքն է:

Անգամ մը, գարնան, ձեմարանի վերի դասարանի աշակերտութեան հետ քաղաքէն դուրս պտույտի պիտի գար: Օդը պայծառ էր, դաղը ու հաճելի: Լ. Շանթ ընկերացաւ աշակերտներուն իր անխուսափելի գաւազանով եւ վերարկուն թելին: Մտաշատիւնէն փութկոտութեամբ մեզմէ մէկը մօտեցաւ իրեն եւ ըսաւ.

— Պարոն Շանթ, տուէ՛ք ձեր վերարկուն եւ տանիմ:

— Ո՛չ, տղաս, ո՛չ, — պատասխանեց իւրայայտուկ կտրուկ շեշտով, — տէ՛ն մարդ իր մեղքը ինք պիտի կրէ:

Հանրածանոթ իրողութիւն է այն պարագան, որ Լ. Շանթ սկզբունքի մարդ է եղած: Անորեայ կենքի գաստաւորումն ալ խստօրէն կարգաւորուած՝ կը հպատակէր որոշ սկզբունքներու: Նոյն ժամուն ընթերցել, նոյն ժամուն մտնել աշխատանքներ, նոյն ժամանակաւրանը յատկացնել իր գրական աշխատանքներուն եւ նոյն ժամերը՝ հանգիստի: Այնքան կտրուկ եւ անզիջող էր իր այս կարգապահութեան մէջ, որ յաճախ վերաւորած է այս կամ այն բարեկամը, մերժելով տեսակցիլ հետը, եթէ ան ներկայացած ըլլար աշխատանքի յատկացուած այնքան թանկարժէք մէկ պահուն:

— Կը ներքէ, աշխատանքի ժամն է, չեմ կրնար ձգել գրասեղանս:

Այս կ'ըլլար իր չոր ու վճռական խօսքը չքմեղանքի: Բնաւ չէր մտաւորաւ գիմարելի կրած անախոյժ տպաւորութեամբ: Կտրուկը իրեն համար մարդոց կազմելիք կարծիքը չէր, այլ՝ աշխատանքի իր սկզբունքին կամ սովորութեան անխախտ պահպանումը:

Անգամ մը նոյննման կացութեան մէջ գտնուեցայ ես ալ: Լ. Շանթը շահագործող հարցի մը կապակցութեամբ մէկը յանձնարարեց, որ երթամ եւ իրեն տեղեկութիւն մը փոխանցեմ: Կարծեմ ամաբանոցի տան վարձումին հետ կապուած հարց մըն էր հաղորդելիքս: Ճամբուս վրայ բարձրացայ Լ. Շանթի բնակարանին սանդուղներէն եւ դարկի պանզակը, Բնաւ մտքէս չանցաւ, թէ աշխատանքի ժամն էր: Դուռը բացողը եղաւ իր կինը՝ տիկին Աստուհ: Ես յարմարեցի, թէ պարոն Շանթը կ'ուզեմ տեսնել մէկ վայրկեան: Տիկինը տատամեղութեամբ, չորս միտքով, տպաւորուած հարցուց.

— Կարենո՞ր խնդիր է :

— Այո՛, շատ կարեւոր :

Այնուհետեւ տիկին Զաւօ պնաց բախելու Շանթի աշխատանքներին
դուռը :

— Լեւոն, երիտասարդ մը քեզի հետ խօսիլ կ'ուզէ :

Ներսէն լսելի եղաւ Լ. Շանթի մետաղային ձայնը, բաւականին դժգոհ
եւ բարկացող շեշտով :

— Ասա՛, որ կ'աշխատիմ. չեմ կարող ընդհատել :

Տիկին Զաւօ վերադարձաւ յանցաւորի արտայայտութեամբ եւ շատ սի-
շալիք ու մեղմ ձայնով ըսաւ :

— Լեւոնը կ'աշխատի, չի կարող ընդունել. ուրիշ անգամ եկէ՛ք :

Ի հարկէ, դէպքը շատ զէշ ազդեց վրաս եւ երիտասարդ տղու արժա-
նապատեւութիւնս վիրաւորուած գգացի : Բայց եւ այնպէս՝ աշխատեցայ պա-
զարիւն մնայ եւ թոթովեցի :

— Կը ներէ՞ք, որ կը խանգարեմ, բայց խնդիրը իմ անձին հետ կապ
չունի. եկած եմ պարզապէս հաղորդելու, որ ամառանոցի ձեր բնակարանին
վարձքի խնդիրը կարգադրուած է...

Տիկին Զաւօ ներողութիւն խնդրեց եւ ճամբեց դիւ քաղաքավարու-
թեամբ :

Լ. Շանթի համար սկզբունքը շեղում չէր ճանշնար, ոչ ալ զմեղմացու-
ցիչ դէպք յանցանաց : Մահէն քուտառուն տարիներ առաջ լեարդի թեթեւ
անհանգստութեան մը պատճառով բժիշկները յանձնարարած էին իւղ եւ
տապակուած կերակուրներ չուտել : Գիշերօթիկի ճաշարանը, իր սեղանին վը-
րայ կ'ըլլար միշտ կտոր մը խորոված միս, մածուն, կաթնապուր եւ պտուղ :
Քառասուն տարի չէր շեղած բնաւ այս պահանջութենէն :

Օր մը միասին ճաշի էինք ձեմարանի խնամակալ մարմնի անդամնե-
րէն մէկուն տունը : Ծաշասեղանը ծածկուած էր ճոխ կերակուրներու բազ-
մաթիւ տեսակներով. — պլօրէլի, քլօֆթէ, զառնուկի միս, փիլուս, եւային :
Շանթ, սեղանին առջեւ կեցած՝ կը դիտէր զուարճութեամբ հիւրերու անյապ
կերութեամբ : Տանտիրուհին հազար կտոր կ'ըլլար, որ անուանի դրաղէտը
պատառ մը դռնէ առնէր համադամներէն :

— Բայց, պտրոն Շանթ, կերէ՞ք եւ տեսէ՞ք, շա՛տ համով է. մէկ պա-
տառով ի՞նչ պիտի ըլլայ :

— Այո, տիկին, կ'երեւի, որ համով են ձեր շինածները. շատ փորձիչ
է, սակայն հարցը սկզբունքն է. եթէ մէկ պատառ առնեմ՝ հոսեէն երկրոր-
դը պիտի դայ եւ սկզբունքը պիտի խախտի : Ներողամիտ եղէ՞ք եւ մի՛ ստի-
պէք :

Նւ Շանթ այդ գիշեր գոհացաւ մէկ շիշ խորովածով եւ պատառ մը
հացով :

Ամբողջ քառասուն տարի անշեղօրէն հետեւած էր այս խիստ պահանջ-
ողութեան :

Պատահեցաւ, որ 81-82 տարեկանին Մ. Նահանգներ մեկնի՝ ձեմարա-
նին ի նպաստ հանգանակութիւն կատարելու : Ընկերներու պնդումով հոն
Շանթ կ'ենթարկուի մասնագէտ բժիշկներու քննութեան, որոնք կատարելու-
պէս առողջ կը գտնեն իր լեարդն ու ցտամոքսը եւ կը զարմանան, որ քառա-
սուն տարի հետեւած է ամենախիստ ռեժիմի : Պէյրուի զարձին, ճաշասեղա-
նի վրա առջեւ պատմեց ամերիկացի բժիշկներու այս յայտնադործումը եւ
ափոսանքով աւելցուց :

— Երեւակայօցէք, ի դուր տեղ քառասուն տարի ինքզինքս զրկեք եմ համով ուտելիքներէ, ի դուր տեղ փախուստ եմ տուեր ճոխ սեղաններէ...

Շանթ երբ կը պատմէր այս դէպքը, ականջներուս մէջ կը հնչէին «Հիմ աստուածներդու կողմ վանակոնքին խօսքերը».

— Ի դուր հանեցիր պէտքերը...

Սկզբունքը։ Անխախտ պէտք է մնար սկզբունքը՝ Լ. Շանթի կեանքի բոլոր ելակէշներուն մէջ։

Եւ մնաց անխախտ։

Բայց սկզբունքի այս հաստատութիւնը, երբ քուրկ է որոշ ճկունութիւնէ, երբեմն մարդս կը հասցնէ ծայրայեղ ելոյթներու, որոնք կրնան մինչեւ իսկ միասնել դժբօխ յաջողութեան։

Սկզբունքը յարգած ըլլալու շանթեան կարծի կեցուածքէն տխուր յիշատակ մըն ալ ունիմ։

Մանկավարժական ինդիքներու նուիրած իր աշխատասիրութեան երկ-դորդ հաստատիւն մէջ, խօսելով դասավարութեան հիմնական սկզբունքներու մասին, Շանթ կը շեշտէ, թէ երբ զանգը հնչէ ու կարող սկսի, դասարանը եւ կեդեցիկ պէտք-սրբավայրի մը կը վերածուի, որուն արարողութիւնը, այսինքն՝ դաստաստումը որեւէ պատճառով պէտք չէ ընդմիջուի։

Պատարագիչ քահանան միթէ կրնա՞յ ընդհատել պատարագի ծէսը։ Ոչ մէկ պատճառ, որքան ալ կարեւոր ու կենսական ըլլայ, պէտք չէ արգելք հանդիսանայ դաստաստութեան կանոնաւոր ընթացքին։

Արդար եւ իրաւ։

Մանկավարժական տեսուիչտէն սկզբունքը առարկութիւն չի վերցնէր։ Դասարանին փակ դուռը զարնել, ուսուցիչը դուրս կանչել, հինգ-տասը վայր-կեանք հետք տեսակցութիւն ունենալ, աշակերտները անզրադ թողուլ, հակա-մանկավարժական երեւոյթ է անկասկած, որուն լաճախ ականատես եմք եւ զած նախկինքրաններու մեր կարգ մը դասերուն, երբ ժանուկ էինք։

Շանթ կը սիրէր դասը հարստարագելը եւ զասի ուարտին՝ մինչեւ մէջք-քը խոնարհիլ աշակերտներուն առջեւ ու ապա մեկնիլ։

Ես չաւ ծանօթ էի աթ սկզբունքին եւ իրատեսք կու տայի իրեն։ Սա-կայն չաք բախտէս օր մը ստիպուեցայ ընդհատել իր դասը, կարծելով, թէ ծառայութիւն կը մատուցածն էր իրեն։

Հարկ զօրէնս լուծուեց...

Շանթ դասի մթաժ էր եւ բարձրաճայն կը խօսէր 10-15 վայրկեանէ ի վեր։ Ես դասարանի դրան մօտջ սրահին մէջ դրուած սեղանին առջեւ կ'աշխատէի։ Այդ պահիւն նամակները եկաւ եւ յայտնեց, թէ՛ «միւստիքնին ու պահովագրուած նամակ կա՞ք. պէտք է ստորագրէք, օք նամակը սեանայ։ Առաջարկեցի, որ ե՞վ ստորագրեմ Շանթին տեղ, քայք արաք ցրուիչը մերժեց։

— «Ձեմ կրնար ուրիշին յանձնել, ինք անձնապէս պէտք է ստորագրէ»։

Դժուարին կացութիւն...

— Մտիկ ըրէ՛յ — ըսի, — կը լսե՞ս ձայնը, միւստիքը ներքը դաս կու տայ եւ չ'ուզեր, որ լղիճ խանդարեն։

— Եա՛, — բացառանշեց մարդը զարմացած, — վարկեան մը դուրս թող ելլէ, ստորագրէ եւ դարձեալ դասը շարունակէ։ Եթէ ոչ՝ նամակը ետ կը տանիմ եւ այլեւս պատասխանատու չեմ...

Լինե՞լ թէ չլինել, դուռը զարնե՞լ, թէ ցրուիչը ճամբել՝ նամակն ալ հետը։ Բայց նամակը տպահովագրուած էր, թերեւս մէջը չէ՛ կար, թերեւս շատ կարեւոր տեղեկութիւն մը, Հապա՛ եթէ կոխուէր։

Վերջապէս վճռեցի գուրը բախել եւ կարճ վայրկեան մը խնել Շանթի
 զպատարագծէն... յոգուա Ճեմարանի գերազոյն շահերուն...

Դուրը զարկի... լռութիւն... անգամ մը եւս զարկի զողոյց մասնե-
 րով: Այս անգամ Շանթ բացաւ դուռը եւ զայրալից գոռաց.

— Ի՞նչ կայ, ինչու կը խանգարէք դասս:

— Պարոն Շանթ, նամակաները... ապահովագրուած...

Շանթ թոյլ չտուաւ, որ նախադասութիւնս արժողացնեմ եւ շառա-
 շաճան փակեց դուռը:

— Տեսա՞ր ինչ եղաւ, — դարձաւ ցրուելին, որ քարէ արձան էր կըտ-
 բած:

— Ծաայայիշմա՞ւ, — ըսաւ ու մեկնեցաւ՝ տպահարգուած նամակը
 պայուսակին մէջ նետելով:

Մօտ կէս դար է անցած այս դէպքին վրայէն: Բայց այսօր կը խոր-
 չիմ, թէ աշխարհի բոլոր սկզբունքներն ալ գործադրութեան ընթացքին որոշ
 առաձգականութիւն պէտք է ունենան, որպէսզի դրական արդիւնքի հասնին:

Բ.— ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍԸ

Լ. Շանթ աշխատանքի ամենազօր ուժին հաւատացող մարդ էր: Եթէ
 չիմ սխալիմ, Կէօթէն է, որ ըսած է. «Համաձայն հարիւրիմ 80 տոկոսը աշ-
 խատանքն է»: Նոյն խօսքը կը սիրէր կրկնել նաեւ Շանթ հանդիսաւոր պա-
 ճերու կամ դասարանին մէջ:

Իրեն համար գրողները կը բաժնուէին երկու դասակարգի. — անոնք,
 որ ամիսներ շարունակ գրել ձեռք չեն տուեր, չեն արտադրեր եւ օր մըն այ
 յանկարծ կը նստին սեղանին առջեւ եւ մէկ բխումով, յանկարծական ներ-
 չնշումէ մղուած՝ երկ մը կը ստեղծագործեն: Այնուհետեւ դարձեալ ամիս-
 ներու եւ միշտ իսկ տարիներու ամուլ չըլտն: Անպարճ կորսուած ու վատ-
 նըւած օրեր...

Երկրորդ դասին կը պատկանէին անոնք, որ օրը օրին, յարատեւ եւ տըք-
 նալման աշխատանքով վատտակ կը դիպնէին: Ձեն սոյստեք նշանաւոր այդ ներ-
 չնշումին, որ կրնայ ուշանալ կամ բնաւ չգալ: Ներշնչումի ակն ու ազդիւրը
 կը դարձնեն աշխատանքի գրասեղանը: Շանթ կը պատկանէր անշուշտ այս
 երկրորդ դասակարգին եւ կը հաւատար նաեւ, որ ստեղծագործութեան ա-
 ոռջ ու բեղուն եղանակը աննահանջ աշխատանքն է միայն: Առաջին խում-
 բին պատկանողները շատ չեն առհասարակ եւ իրենց տուածն ալ քանակով
 քիչ եւ որակով՝ պատահականութեան ենթակայ:

— Կաթիլ-կաթիլ հաւաքուածն է, որ կը լեցնէ կեանքը եւ կ'իմաստա-
 ւորէ զայն:

Այս էր իր դաւանանքը, որուն կը հետեւէր քերականութեամբ, աշ-
 խութով եւ հաճոյքով: Յաճախ կը սիրէր կրկնել.

— Աշխատանքը իմ հաճոյքն է, գուարճութիւնս, իսկաւ. ինչպէս ու-
 րիշներ հաճոյք կ'առնեն թղթախաղէն, ես ալ մեծ բաւականութիւն կը ստա-
 նամ դրիշխ եւ թողիթերուս հետ խաղալէն:

Շանթ այն գրադէաներէն չէր, որ տառապանքով կ'արտադրեն: Այս
 հաստատումը չի նշանակեր անշուշտ, որ անհիշեալ եւ արագ գրող մըն էր: Բայց
 դրեւել, ստեղծելու գործողութիւնը կը հաճոյացնէր զինք, կը լեցնէր իր ամ-
 բողջ կեանքը:

Կարգ ու կանոնի սիրահար այս գրագէտին համար հարկ չկայ շեշտելու, թէ իւրաքանչիւր գործ թուղթին յանձնելէ առաջ մտքին ու հոգիին մէջ կ'ըլլար հասունցած, ճարտարագիտութեամբ, իրրեւ նիւթ եւ իրրեւ յատակագիծ: Սովորութիւն ունէր ամէն ընթրիքէ ետք ձեռքարանի հին շէնքի երկար պատշգամբին վրայ ճեմելու եւ խորհրդածելու: Սր մը, կը յիշեմ, խոստովանանքի պէս յայտնեց.

— Երբ ես մինակտ կը ճեմեմ, նորէն կ'աշխատիմ. միտքս անշարժ կը բանի նոր թատերախաղի մը տեսարաններուն եւ անձերուն վրայ: Սկիզբը ամէն ինչ մշուշի մէջ է, բայց ժամանակի ընթացքին լոյսը կը Ծագի՝ այդ մշուշը ճեղքելով:

Երկրաստորգութեան Շանթը ճանչցողները կը վկայեն արդէն, թէ զնիւն աստղաժողովներու նիւթն ու տեսարանները թաքին մէջ պտտացուցած է ամբողջ շորս տարի, նախքան թուղթին յանձնելը: Թատերախաղը աւարտած էր արդէն, երբ հեղինակը նստաւ զրի առնելու, մէկ ամսուան ընթացքին, օգտուելով հիւանդութեան մը պատճառով ստացած արձակուրդէն:

Լ. Շանթ ամենայն հաւանականութեամբ նոյն մեթոտը կիրարկած է իր միւս թատերախաղերուն եւ վէպերուն համար ալ:

Միթէ նոյնը չէ՞ն ընէր նաեւ Իրաէն եւ այլ գրողներ:

Աշխատանքը իր խաղն էր եւ գրաւարձութիւնը, սակայն առանց խաղատենքերու թեթեւ վերաբերումին: Աշխատանքը Լ. Շանթի համար որքան հաճոյք էր եւ գրաւարձութիւն, նոյնքան եւ սուրբ գործ, շատ լուրջ պարտականութիւն: Յաճախ լսեմ եմ իր բերնէն.

— Այն օրը, որ չաշխատիմ, այն օրը, որ առանց գրելու պարտաւ անցընեմ՝ խղճի խայթ կ'ունենամ. ինծի կը թուի, թէ յանցաւոր եմ եւ թէ՛ կեանքէս օր մը անկարճ կորսուեցաւ. զնաց: Աշխատանքի եւ արտադրութեան օրերն են միայն, որ չեն կորսուիր:

Մանկավարժական ասպարէզին մէջ ալ Շանթի նախասիրութիւնները կ'երթային աւելի աշխատասէր, ճիշդ թափող, պարտաճանաչ աշակերտներուն, քան թէ ուշիմներուն, շնորհալիններուն:

— Բնութիւնը, — կ'ըսէր, — ուշիմ աշակերտը օժտած է բնատուր ձիրքով. լաւ բան է անշուշտ խելացի ըլլալը, բայց ո՛ր է անհատական իր արժանիքը, եթէ չ'աշխատիր: Իսկական զնահատանքի արժանիները անոնք են, որ կամքի ուժ ցոյց կու տան, ճիշդ կը թափեն, կը յարատեւեն եւ կը հասնին...

Լ. Շանթի արդիւնաւոր աշխատանքին կանոնադրութիւնը հիմնուած էր բնաօտական եւ առողջապահական տուեալներու վրայ: Մանր ու ստեղծագործ աշխատանքի պահերը իրեն համար առաւօտեան ժամերն էին, ըսենք՝ 9էն 11 եւ կէսօրէ ետք՝ 5էն 8: Դէմ էր մասնաւորաբար ճաշիկէ ետք փոքր-ձրւած աշխատանքի ճիգերուն: Ընթրիքէն ետք մանաւանդ կը սիրէր թերթի թղթատել կամ գրոյց ընել քարեկամի մը տան մէջ: Աշխատելու կերպին այս կանոնադրութիւնը երբեմն կը փոխանցէր նաեւ աշակերտներուն, բացատրելով.

— Երբ ստամոքսը կը լիցուի, արիւնը ուղեղէն կը խուժէ դէպի վար, ստամոքսին շուրջ, մարտողութիւնը դիւրացնելու համար: Եթէ փորձենք ուղեղը լարել լուրջ եւ բարձր հարցեր լուծելու ճիգին, անպայման որ մարտողութիւնը կը խանգարուի եւ միտքն ալ շուտ կը յոգնի:

Լ. Շանթ Գերմանիոյ մէջ ամբողջ եօթը տարի հետեւած ըլլալով բնական դիտութիւններու, կենսքը եւ նոյնիսկ հոգեկան երեւոյթները բացա-

տրեւում համար իւրացուցած էր հարցերուն կենսաբանական մեկնաբանութիւնը:

Ըսի, թէ աշխատանքը Շանթին համար ուրախութեան աղբիւր էր եւ կենքի նպատակ: Այդ իսկ պատճառով կը հաւատարմօք իսկական աշխատանքին, կեդրոնացեալ հիգիւրուն: Այսինքն՝ ամէն արդիւնաւոր աշխատանք իրեն համար կը կատարուէր սեղանին առջեւ, հագուած, կոկիկ միճակի մէջ, նոյնիսկ կօշիկները ոտքին:

— Երբ մէկը կը հանուի, գիշերազգեստով կ'երկարի անկողինին վրայ եւ դէրձ մը կ'ստնէ ձեռքը, ատկեալ արդէն աշխատել չէ, այլ՝ ժամանակ անցընել, հանգչիլ, հաճոյանալ: Անկողինը քնանալու համար է, իսկ դրասեղանը՝ աշխատելու: Երբ մէկը կօշիկները հանեց եւ երկարեցաւ մահճակալին վրայ, կը նշանակէ դադարեցաւ աշխատելէ:

Ահա՛ «աշխատանքի հերոսը» եւ իր տեսակէտը, որուն հաւատարմօք սպասարկուն մնաց մինչեւ մահ:

Ու խորհիլ, թէ մեզմէ քանինե՛ր իրենց իրենց խաբկանքը կու տան աշխատելու, անկողինին վրայ երկարած կամ թիկնաթոռի մը մէջ թաղուած:

Ճեմարանի մէջ, իրիւր տնօրէն հաստատութեան, Լ. Շանթ չէր սիրեր միջամտել ուսուցիչներու գործերուն, յաճախակի քննութիւններ կատարել կամ երեւիլ այս ու այն առիթով: Այդ բոլորը ձգած էր մաս մը ընդհանուր հսկիչին, խոշոր մաս մըն ալ ուսուցիչներու ուսերուն: Իր մանկավարժական տեսակէտը կը բանաձեւէր հետեւեալ ձևով. «Լաւ տնօրէն (իր բառերով՝ տեսուչը) ան է, որուն մեքսիկական ինքնաշարժը չի մնչոր, չի տեսնուիր, չի ըզգացուիր: Գործերը այնպէս մը գլխէ կազմակերպել, որ առանց իրեն ալ կարծես վարժարանը կը քաղէ: Գոնէ այդ սպաւորութիւնը կը ստացուի»:

Սե ինք իսկապէս «անզգայի» տնօրէնն էր, որ կը միջամտէ միայն ծանրակշիւ պարագաներուն:

Եթէ այս տեսակէտին մէջ մանկավարժական խոշոր ճշմարտութիւն մը կայ, իր պարագային կար նաեւ գրական սիրած աշխատանքը տեսչարանի փակ դրան ետին շարունակելու տենչը: Այսպէս, օրինակ, մեզմէ ոեւէ մէկուն համար գաղտնիք չէր, որ Լ. Շանթ իր վերջին վէպին («Հոգիները ծալաւ») մեծ մասը գրեց Ճեմարանի տեսչարանին մէջ:

Խենթի պէս կը սիրէր ամարանոցը եւ տրճակուողի երեք ամիսները՝ Լիբանանի գիւղերէն մէկուն մէջ: Վերջին շրջանին, ինչպէս շատ մը հայերու համար, իր ալ նախընտրած ամարանոցը եղաւ Պուստըլ-Պուստըլը, ուր կ'ուսնանաւոր հին, բայց հանգստաւէտ տան մը մէջ, անտառակով շրջապատուած եւ կը լծուէր գրական աշխատանքի:

Աշխատանքը գերակշռող սէրն էր իր մէջ, առաւել քան ուրիշ որեւէ զգացում: Սե եթէ կը ջանար դպրոցը օր առաջ փակել եւ գիւղ բարձրանալ, կարելի եղածին չափ ալ ուշ իջնելու տնկէ, պատճառը աշխատելու եւ արտադրելու իր կիրքն էր, միախառնուած բնութեան գեղեցկութիւնը եւ առանձնութիւնը վաշխելու պահանջին հետ:

Հարկ չկայ չեղտելու, թէ տասը մեծագիր հատորներու մէջ ամփոփուած իր բանաստեղծական, վիպական, թատերական, մանկավարժական եւ գիտական վաստակը Շանթ կը պարտի կանոնաւոր, անընդմէջ եւ յօժարակամ աշխատանքին:

Գ.— ՈՒՂԱՍՄԻՏ ԵՒ ՎԵՀԱՆՁՆ

Իր յարաբերութիւններուն մէջ եթէ չոր էր, անհազորզ, Լ. Շանթ եղած է սակայն միշտ ուղղամիտ, շիտակ եւ վեհամեծ: Մանր հաշիւներու, ռիտմի, նախանձներու առջեւ փակ էր իր հոգին: Կարելի է ըսել, թէ նման սպրումներ գոյութիւն չունէին իրեն համար: Իր աշխատանքը երազանքի, կառուցողական ծրագիրներու, երկի ու երկունքի աշխարհ մըն էր, ուրկէ ներս մուտք չէին կրնար ունենալ կեանքի ընթացիկ տօրեան պղտորող հասարակ զգացումներ:

Ձէր հետաքրքրուէր բնաւ ըսի-ըսաւներով, մինչեւ իսկ եթէ անոնք վերաբերէին իր անձին եւ հասնէին ականջին: Կը նմանէր մէկուն, որ հասած է բարձունքի մը, ուրկէ վար մարդկային ակնարկը կ'ընդգրկէ լոկ բնական դեղեցիկութիւններ, լայն հորիզոններ, համադիր տեսարաններ: Մանրութեանը կը չքանան, տգեղութիւնները կը հալին եւ վնասակար սողուններ կամ ճճիներ թաքնուած կը մնան քարերու ետին:

Լ. Շանթ գիտէր անշուշտ, թէ ծագիկներու կողքին փուչիւր ալ կան, բայց դեղեցիկին ծարաւի իր հայեացքը կը սրէր ընդգրկել լայն տարածութիւններու ծագկաւէտ գոյները միայն:

Կը յիշեմ՝ հազիւ երկրորդ տարուան աշուկերս էինք ձեմարանի մէջ, երբ Լ. Շանթի վեհամեծ ու բարձր կեցուածքը ճանչնալու առիթ մը ներկայացաւ: Ինքնաբերաբար, Հաստատութեան մէջ ուսուցիչ մը կար, որ իր ջղալին խառնուածքին բերումով կը սրէր յաճախ բաժնետէլ Շանթը, անոր անձնակեդրոն կեանքը, անոր Հաստատութիւնը, եւայլն: Վերջին զտաւարանի տղաքս որ մը ընդվզեցանք ուսուցիչի այս ընթացքին դէմ. Շանթ մեզի համար ո՛չ միայն անօրէն էր եւ դասախօս, այլեւ՝ մեծ գրագէտ, անպակի նութրակաւութիւն: Որոշեցինք քանի մը հոգիով ներկայանալ իրեն եւ արտայայտել մեր պժգոհանքը՝ իր անձը պատկերներու ձգտող այս տգեղ ելոյթին առջեւ:

Պատանեկան անխորհրդէր փութկոտութիւն...

Վախով-դողով բախեցինք Լ. Շանթի սենեակին դուռը եւ ներս մտանք: Ձորահինգ պատանի՝ կեցանք անկիւն մը, սպասելով, որ մեզմէ մէկը խօսքը բանայ: Շանթ մեզի հայեցաւ զարմացած, նշմարեց հարկաւ մեր շփոթ վիճակը եւ հարց տուաւ.

— Հը, ի՞նչ կ'ուզէք, ինչո՞ւ կը ներկայանաք:

Լռութիւն...

— Դասերու հետ կապուած դժուարութիւն մը ունիք:

Մեզմէ մէկը վերջապէս համարձակեցաւ բերանը բանալ եւ կմկմալով յայտնել.

— Պարոն Շանթ, հաւանօրէն դուք ալ գիտէք, թէ մեր ուսուցիչներէն մէկը առիթը չի փախցնէր ձեր մասին...

Շանթ թոյլ չտուաւ, որ տղան շարունակէ. ձեռքը ամուր մը զարկաւ սեղանին եւ քաղաքանչեց.

— Թոյլ չեմ տար, որ սեւէ մէկը իմ ուսուցիչներու մասին գէշ արտայայտուի: Դուք իրաւունք չունիք նման հարցերով իմ քովս դալու: Ես կատարեալ փոտահութիւն ունիմ իմ ուսուցիչներու վրայ:

— Բայց, պարոն Շանթ, մեզի համար չատ անախորժ է, որ դպրոցին մէջ ուսուցիչ մը ձեր մասին գէշ արտայայտուի, — համարձակեցաւ աւելցնել մեր զասընկերը:

— Սուտ ու ճշգրիտ բաներ են տնտեսը, — բացառաբար ասելի մեղմ շեշտով, — ձեռնարանը մէկ ընտանիք է, այդ ընտանիքին բոլոր անդամները իրար կը սիրեն. դոյնէք եւ ձեր դասերով գրողիցէք. անգամ մըն ալ այսպիսի յիմար հարցերով քովս մի գաք:

Գլխահակ, ամօթահար դուրս ելանք սենեակէն. ինչ կը սպասէինք եւ ինչ գտանք: Մենք կ'ակնկալէինք, որ Շանթ մանրամասնութիւններ պահանջէ, միգի խօսիլ տայ, նոր տեղեկութիւններ հաւաքէ իրեն հակադրուող ուսուցիչի ընթացքի մասին, մինչդեռ շուրջ լսել անգամ եւ մեղ դուրս ճամբից:

Ծիւղ է, մենք ստացանք բարոյական ատկանք մը, բայց մեր տնտեսը ատկի մեծցաւ մեր աչքին: Այսօր, մօտ կէս դար հաջ, երբ տակաւին կը շքնալեւ ձեռնարանի մթնոլորտին մէջ, կը խորհիմ, թէ ընտանեկան ջերմ ու առողջ այդ մթնոլորտի տեղումն ու անաղարտ պահպանումը շատ բան կը պարտի Շանթին եւ իր նմաններու բարոյական ըմբռնումին եւ վեհագի կեցւածքին:

Այնուպէս խառնուածքով ազնիւ մարդ մըն էր Շանթ իր խօսուածքով ու վարուելակերպով: Ամէն տեսակի գոհակարանութիւններ, գոհակարանական ինքնազնայն շարժումներ խորշանք կը պատճառէին իրեն: Քաղաքավար կեցւածքն ու վայելչութիւնը մարդկային արժանաւորութեան եւ արժանապատուութեան հիմնական ստորագրութիւնները կը համարէր: Ոչ ոք տեսած է զինք շղարկելու վիճակի մէջ եւ կը խորհիմ՝ ո՛չ ոք լսած ըլլայ իր բերնէն դուրս ելած անպիտան ու վերաբերիչ խօսք մը:

Ձեռնարանը սովորութիւն ունէր կազանդի իրիկունները տօնելու դըպրոցի յարկին տակ, սեղաններու շուրջ թոյլտրուած, ուսանող եւ ուսուցիչ միասնաբար: Այն ատեն կարելի էր ասիկա, տրուած ըլլալով, որ ձեռնարանի բնակիչներու փոքրաթիւ ընտանիքը ի վիճակի էր նման մտերմութիւն ստեղծելու: Մեր դասարանի տղանքն ու աղջիկները գրաւած էին սեղան մը, իսկ Շանթ կը շրջէր սեղաններուն մէջ եւ ուրախ տրամադրութեամբ, ժպտալով դէմքին: Կերտ խում, կատակ, արտասանութիւններ, մենեքք եւ այլ զուարճալիքներ...: Լ. Շանթ յանկարծ նկատեց, թէ մեր սեղանին շուրջ նստած տղաներէն մէկը կուտ ու պիտտակ կը նետէր գլխաւոր գտնուող աղջկան երեսին: Դէմքի արտայայտութիւնը փոխուեցաւ խեղճ, յօնքերը պոստեց եւ մօտենալով սեղանին գոչեց.

— Այն ինչ որ կ'ընես, անկիրթ բան է, գոհակարար. նման պահերու եւ սեղաններու շուրջ իրարու վրայ ծաղիկ կը նետեն:

Լ. Շանթ իր կեանքի ընթացքին միշտ ծաղիկներ չէր ստացած: Բազմաթիւ այլ մատուցանանքներու եւ արուեստագէտներու պէս ինք եւս հնարարուած էր հրեման քննադատութիւններու եւ մինչեւ իսկ նուաստացնող հարցումներու: Հաստատապէս կարելի է րեւել, թէ նման վերաբերմանը մազաշափ մը չէին ազդեր վրան: Կը մնար իր մեծաւոր բարձունքին, անտարբեր՝ թէ՛ գնահատանքին եւ թէ՛ պարտաւին հանդէպ:

Եւ արդէն «Հանրային կարծիք» կոչուած երեսօթիին արժէք չէր տար: «Ամէն մարդ իմ փոխարէն կ'ազնայ իր կարծիքը վարած կ'անգործի ու ընած գործի մասին»: Այս էր կեանքի իր փոխտոմարութիւնը, թշնամի հետ դէմ աս դէմ, դուռն քեզի դատարար:

Այլամերձ այս կեցողութիւն մեկնելով կարելի էր զինք նկատել մեծամիտ, ինքնահաւան, երբեք Լ. Շանթ այն սակաւաթիւ անձերէն էր, որոնք չեն սիրեր իրենց մասին խօսիլ: Ո՛չ մէկ օր, ո՛չ մէկ առիթի լսած եմ, որ

մեծանուն թատերադիրը եւ բազմարդիւն մտնկալարժեք երկու խօսք ըսած ըլլալ իր ըրածին կամ ընկիւններու մասին: Արդէն չէր ալ սիրեր անձնական յուշեր պատմել, ինչ որ առիթ կ'ընծայէ շատերուն ինքնագովութեան: Շանթ ո՛ւն միայն չէր սիրեր իր գործին եւ արժէքին մասին նուազագոյն ակնարկութիւն ընել, այլեւ կը նեղուէր, երբ ուրիշներ իր ներկայութեան փորձէին իր անձն ու գործը խօսակցութեան նիւթ դարձնել: Կը խորշէր գովասանքէ այնպէս՝ ինչպէս ուրիշներ կը խորշին իրենց երեսին նետուած վիրաւորական արտայայտութիւնէ:

Հպարտ ու ինքնարա՛ւ: Հատնօրէն այս վերջին բացատրութիւնը տալիս պատշաճի Շանթի անձը բնորոշելու համար, Բայց ինք համեստութեան մարմնացումն իսկ եղած է կեանքի ընթացքին, խուսափելով ամէն տեսակ հանդէսներէ, ցոյցերէ, ծափերէ, յորհելաններէ:

Արտաքնակէս պարզուկ եւ շատ հոմեոս մարդը՝ խորքին մէջ հպարտ էր իսկական, լիարժէք ծանրութեամբը այն հասկերուն, որոնք իրենց գլուխը վար կը կտխեն:

Այս ճշմարտութեան բացատրութիւնը ինքն իսկ տուաւ օր մը, դասարանին մէջ, երբ խօսք կ'ըլլար համեստութեան մասին.

— Իսկական համեստ մարդիկը անոնք են, — ըստ մեր ուսուցիչը, — որոնք հողեկան կարիքը չեն զգար արտաքին յենարաններու, որովհետեւ ներքնապէս զոհացած են: Եթէ կ'ուզէք թուն հպարտները իրենց արժէքին գիտակից եւ այդ արժէքով զոհացած համեստներն են: Ինչո՞ւ հպարտութիւն պիտի ծախէ մէկը, որ ներքին աշխարհ մը ունի, ներքին հարստութիւն մը: Հոգեպէս ազգատներն են, որ հպարտանքի ցուցադրական արտայայտութիւններուն մէջ կ'որոնեն իրենց չունեցածը, իրենց ինքնամոխիթարութիւնը:

Բնական է, այս երեւոյթը առաջ կու գայ անգիտակից ձեւով եւ ենթացիտակից աշխարհէն բխելով: Ամէն մարդ փառասիրութիւններ կ'ունենայ. ամէն մարդ ծարաւը ունի իր բարոյական եռի գոհացման: Երբ մէկը իր վաստակով եւ արժէքով զոհացուցած է զայն, այլեւս կարիքը չի զգար ցուցական միջոցներով փառքի փրանքներ հաւաքելու:

Ահա թէ ի՞նչ բան կ'ուզէր Շանթ յայտարարելով, թէ՛ «Ամէնէն համեստ մարդիկը ամէնէն հպարտներն են»:

Կեանքի վերջին տարիներուն երբ առաջարկուեցաւ յորհեանք տօնել, Լ. Շանթ վճռապէս հակառակեցաւ այդ ծրագրին եւ ըստ.

— Յորհեա՞նք, ի՞նչ ընելու համար. հանդէս ու ճառ. յաւուր պատշաճի գովք ու ծափ... Օ՛ր, ո՛ւն, ինծի համար չեն այդ բոլորը. զուր ժամավաճառութիւն: Ա՛յ, եթէ կ'ուզէք իսկական գրչի մարդը պատուել եւ օգտակար գործ մը կատարած ըլլալ, որոշ գումար մը գոյացուցէ՛ք՝ ամբողջական երկիրս տպագրելու համար. լաւագոյն յորհեանք ատիկա կ'ըլլայ:

Այդպէս ալ եղաւ բարեբախտաբար: Այդ օրերու նեղ միջոցներով եւ նախնական տպարանով կարելի եղաւ Լ. Շանթի գործերը լոյս ընծայել 8-9 մեծադիր հատորներու մէջ:

Մ. ԻՇԽԱՆ

(Վերջը յաջորդով)

ԱՆԱ ԹԷ Ո՛Վ ԵՆՔ

Ահա կանաչագարդ առագաստներով յոգնարեկ թաւեր
 արմէ կը լուծուին հարկզունիմ մէջ
 կատաղօրէն փրփրող ալիքներու թաւազով
 մերք կը լայննայ մերք կը սեղմուի մեր տեսողութիւնը
 կը զարգարուիմ ջուրերն անտահման
 աչքերու հանգոյցներ կը փակուին յորձանապտոյտ փամփէմ
 հալածութեան սպիտակ ճայերու կռիւներն անգոյն
 լոնցիմ ծովափնայ տգեղ խարակներու լռերը
 կայի՞մ ջուրերն ու ամպերը կայի՞մ նաւերն ու խարակները
 մեր վկայութենէն առաջ կայի՞մ քէ ոչ
 անհունէն աւելի անհուն չէ՞ սա մեր միտքը
 որ կրնայ գրկել անտահման լինելութիւններու խորհուրդը
 ինչո՞ւ սակայն գետնառաջ ճնիներ կը դաւանին մեծ մեծ
 երբ աստուածներէն աւելի աստուած ենք
 ո՞վ դրաւ մեր մէջ արեւափրփի սերմը
 որ կը ճնշէ մեր կարծեքունն երբ ովկէանիմ դէմ եմք
 մեմք սկիզբն ենք ամէն գոյութեան
 եւ մեզի հետ պիտի հասնին տիեզերքն ու ժամանակը
 աշխարհներու անիմաստ լինելութեան եւ մեր ուղեղիմ
 իմաստներ ընծայեցինք ի գուր
 արմնք պիտի չարման մեզմէ քիչ ետք
 ովկէանը կրնայ ցամփի անպատիժ
 հովերը կրնան փշրուիլ ու փռիւնալ մեր վրայ
 մեր մտածումն է որ յաւիտեանակամ է հոս
 գերագոյն կատարելութիւն ծիայորդ
 հեղուկ տիեզերքին կշռոյթիմ անձնատուր
 ձանձորայք երկերես
 որ կանաչով կը պանծունուի
 ու սեւի մէջ կը լուծուի անխռով
 կանգնած գազափարի մը անդունդին եզրին
 կը պատրաստուինք լսել պատգամներ անհունէն
 մեմք շփաթած դաւ պակուցեալ անոմք արքեցեալ
 ո՞վ ենք արդեօք եւ ինչո՞ւ համար հոս նստած ենք
 ինչո՞ւ համար օդ ջուր կրակ կը գոյանան մեր բիրերուն մէջ
 եւ վազն ալ ապստամբ քշնամի կը դառնայ մեզի
 անգոյութեամբ կը զգեստէ մեզ
 երբ երազի մը ընթացքին անձնատուր կ'ըլլանք անոր

տարրերը կրնա՞ն աւելի տեսլ մեր մտածումնէն

ՄԿՐՏԻՉ ՀԱՃՆԱՆ

Մեքսիքո 1981

digitised by A.R.A.R.@

Մ. Պ Զ Ա Ք Ճ Ե Ա Ն

17.39-Ի ԾՈԳԵԿԱՌՔԸ

Կանգ կ'առնէ Վարանդ՝ թզուկ սառնարանին թառած ժամացոյցէն ժամանակը իմանալու ու, մա'նաւանդ՝ բթամատին ու ցուցամատին քլիկ մը հանգիստ պարզեւելու։ Կտնուխէն արթուն է։ Գործը որոշուած ժամուն աւարտելու պարտականութեան դիտակից՝ որոշած էր կտնուխ ձեռնարկել աշխատանքի, իսկ զինք արթնցնելու հաճոյքը աջադադէն ու զարթուցիչէն զողցած էր փողոցէն քարձրացող շիշերու հրաժշտութիւնը։ Քաղաքի երախին հասցէագրուած գինիի ու շամփանիայի շիշերը կը զնդզնդային բեռնակառքին վրայ, շարուելու գործողութեամբ եւ մեկնելու մտածումով դուհունակ։

«Շարունակէ, տղա՛ս, շարունակէ», կը քրթմնջէ, կրկին կ'առնէ փայտեայ զրթիլը ու կը հարուածէ կեղբոնացած։ Ինչ որ յանձն առած է՝ ճաշակ կը պահանջէ ու կ'ենթադրէ բծախնդրութիւն։ Մա'նաւանդ օրգանական աղերս ունի արուեստի հետ։ Ա՛հ, բթացած է գրիչը։ Կ'անցնի պատուհանին առջեւ ու կը տալէ։ Դիմացը պարտէզին մէջ, անհաւասար հասակով խոտերու միջեւ կը բարձրանայ միակ ծառ մը։ Կեռասնիկն, երկու փշաթիւներու ու պատի մը միջեւ կանգնած, շնորհները առատօրէն բաշխած, վերստին ծաղկելու խոստումով՝ պայմանաւոր հանգստեան կոչուած է։ Օր մը, ծառի մը ուղորդ բունին վրայ խաղցնելով ափը, յայտնաբերութիւնը՝ քնդի հպարտութեամբ, իզական սրունքի նմանցուցած էր զայն։ Առաջին համոյրի օրերուն էր, իսկ ծառը անպայման որ կեռասնիկ չէր։

Կը վերադառնայ աշխատանքի։ Զախ-

րող օդանաւի մը ու խորհրտարար անցնող շողեկառքի մը աղմուկները կը հանդիպին ուղեղին մէջ ու կը բարձրացնեն որոշ զգայնութիւններու փոշին։ Ժամացոյցին, սրտին ու գրիչին հարուածները կը համընկնին կատարեալ ներդաշնակութեամբ։ Թիք-թիք-թիք... Արուեստի՛ ապա միայն ապրուստի համար։ Կը շարունակէ ներկել հարուածելով։ Այդպէս է խաղին օրէնքը։ Վերականգնանայնել հարուածելով։ Սրբազան աշխատանք մըն է իրը։ Արեսն ներարկման համազօր։ Տրամադիր է նոյնիսկ անվճար կատարելու գործողութիւնը։ Արեւելքի արեւուն սիրոյն։ Անոր մէկ զլուխ-գործոցին համար։ Ունէ արուեստագէտի պէս ինք ալ երանգապակ ունի։ Ներկի սրուակներ։ Ծիածանի գոյներով։ Կրնայ օգտաւորօրէն ամբողջ տաղանդը, խառնել ներկեր ու կատարել գոյնի ոտնդադործութիւն։ Կրնայ նոյնիսկ բարեփոխութեան ենթարկել ծիածանը՝ նոր երանգներ աւելցնելով անոր կամորին։

Առաւօտեան տառն է տակաւին ու Վարանդ կը վառէ տասներորդ սիկարէթը՝ իններորդին կրակը օգտագործելով։ «Քոմիկ է...» Մէկ լուցկիով կրնամ ծըխել աշխարհի բոլոր սիկարէթները, մէկը միւսին ետեւէն, լուցկիի միակ շիւղով։ Մէկ լուցկիով կրնամ հրդեհել ամբողջ աշխարհը։ Մէկ մայր բաւարար է՝ սկսելու համար նոր մարդկութիւն մը։ Մէկ գրիչով, մէկ զաղափարով, մէկ Աստուծով...»։ Վար կը դնէ գրիչը ու նայում ըստ մը կը փորձէ կատարուած աշխատանքը գնահատել։ Քոտն օր է արդէն։ Այսօր է, որ ժամանակը կը դերաբ-ժեւորէ ինքզինք։ Ահագին գործ կայ,

սակայն մտքով օրը փառաւոր գործի մը նման կը փութի դիմացը: Ժամացոյցի դէմ մրցում մը պիտի ըլլայ: Առանձին է վաղըւղիին վրայ: Բայց մրցակիցներուն ածինէն անհերոջ ունի իրեն մըրցակից: Ամէնէն անտեղիտալին:

Յանկարծ, միջանցքին միւս կողմէն կը բարձրանայ կիթոռի մը ձայնը: Տըխուր եղանակը, ալքոյի նման անմիջապէս կը հասնի զգացումներուն: Ընտանապարհներ կ'երկարին, վարդեր կ'ընծիւղին, ճանապարհներ կը ճիւղաւորուին, կը փակուին: Անել: Կը յիշէ երկիրը, մայրը, բարեկամները: Կը յիշէ ընկերուհին: Կը դադարեցնէ աշխատանքը ու կը յանձնուի սեւամազ ճուղին, երբ դիտակցութիւնը կը միջամտէ կոպիտ ոտըն՝ ձգտութեամբ ու չ'արտօնէր, որ խորանայ թախիծին մէջ: Կից մը ու վարունգ կը սուրայ դէպի ներկան: Երբ յիշողութիւնը կը հասնի ներկայ կիսաւեր բնակարանը ու կը փորձէ կերպարանափոխուի իրականութեան, չի յաջողիր կանգ առնել ու, որոշ կայարաններ չկեցող շողեկոտքին պէս՝ կը միւրմուր ապաքային մէջ, աւազախորումի մը ճակատագրական նութեամբ:

«Ի՛նչ, լաւ, վերջ տուր», կը դռնայ ներքին ձայն մը՝ զդատութեան հրաւիրելով: Զուր կը դնէ օճախին ու կը վերադառնայ աշխատանքին: Գրիչը այս անգամ կը թփրտայ մատներուն մէջ, ինչպէս աղտունին կախարդի ձեռքին: Սա կայն զգո՞յ՞լ... Ներկի անտեղի կաթիլ մը ու կրնայ քանդուիլ արուեստի անկրկնելի դործը: Սխալ ձայնախիշ մը ու կը փնտնայ համանուագի կատարումը: Սահմանադրաւոր ջոկակի անճարաւորութենէն:

«Ներկէ, տղա՛ս, ներկէ»:

Զարդանշանները հետզհետէ աւելի ցայտուն կը դառնան: Կը վերածնին, Ծածկադրեր կան հոն: Ստորերկրեայ ճանապարհներ ու մարտններ: Գաղտնադողի պատուէր մը: Բայց ո՞վ է դայն երկնողը: Պատգամ մը փորձած է փոխանցել դայն ստեղծագործողը: Արքային առեւտնդուած ու արդեւափականած դժուարին է գործին հեղինակը: Հասած

է ծածկադիրը: Փրկուած է արքայադուտը:

Վարանդ նոր սրկարէթ մը կը վառէ, ուժով մը կ'առնէ սուրճէն ու կը դիտէ կրկին: Անմեկնելի նշաններուն կողքին քառակուսիներ կան, եռանկիւններ, շրջանակներ ու կիսարկրակներ: Սիրամարդի մը քով տերեւներ, անդին՝ ծաղիկ: Կի մը հեա զաշոյն մը կը փալիւսայ: «Փառաւոր երեսակայութիւն», կը մըտա մըտայ ու հարուածներուն տակ թառամած ծաղիկները կը վերակենդանանան, բթացած դաշոյնները կը սրուին, սո՞գուած գեղուհին տակաւ կը վերադառնայ կենսունակութեան:

— Եարունակէ՛, — կը պոռայ վարանդ, երբ կը դադրի նուագը:

— Ինչպէ՛ս, — կը հակադդէ ներսինը, ծաղրական դաշնաւորումով:

— Նուագէ՛, ինչո՞ւ կ'եցար:

— Իսկ ջեզի ո՞վ իրաւունք տուաւ ինձմէ բան պահանջելու: Ստորուկ չեմ ես:

— Այո՛, այո՛, դուն ազատագրուած անհատն ես: Դուն չես կրնար դերի ըլլալ...

— Պիտի ըսեմ, պիտի կրկնեմ, մինչեւ որ մտքով աշխարհ ըմբռնէ: Ես փշրած եմ զիս կաշկանդող շղթաները: Ոչ ոք կրնայ խաբել, ոչ ոք կրնայ լոյս գնել զիս: Ո՛չ ճարտասանը, ո՛չ պատրաստարանը, ոչ ալ պերճախօսը: Ոչ ոք կըրնայ վրաս բռնանալ: Ազատ եմ: Ազատ...

— Այո՛, այո՛, կը նախընտրես հընազանդել մուկերուն, ունկնդրել կոսպիկները, դուրսնանալ օձերուն հետ: Կը խօսակցիս ծառերու, ծաղիկներու, ջուրերու հետ ու պատդամներ կը ստանաս անոնցմէ: Տերեւի իւրաքանչիւր սրբփիւն իմաստ ունի ջեզի համար:

— Ոչ ոք ոչինչ կրնայ պահանջել ինձմէ:

— Գիտեմ, գիտեմ, բայց եթէ կ'ուզես շարունակել, քիչ մը մեղմ: Գիտես, որ այս երկրի մարդիկը տերաթմէ կ'ըլլան...

— Հա, հա, հա, դուն աշխատէ, շատ ալ մի հետաքրքրուիր ուրիշներու հանդիստով: Երբ իմ հոգիս խռով է, ոչ ոք

իրուեսնք ունի հանգիստի մասին երազելու իսկ: Դուք աշխատէ ու մի մասնահոգիք ուրիշներու հանգիստով: Ես բոլորին տալիք պատասխաններ ունիմ: Բոլորի՛ն...

Մինչ այս անգամ աղմուկ մը կը պոռթկայ կիթառէն, կից տունէն հասնող հեռախօսի անդուլ կանչը կը ջղադրողէ զինք: Երբ ոչ ոք կը պատասխանէ, կանչը կը կատրի յամառօրէն, աներեսօրէն, անսօրօթաբար...

— Կը բաւէ՛... Զգուեցուցիք... մարդ չկայ... չէ՞ք հասկնար...

— Ինչպէ՛ս, — կը գրոհէ ազատ հաբեանը դարձեալ:

— Քեզի չեմ... զո՛ւն ալ կը բաւէ... զգուեցուցիք... չե՛ս հասկնար: Լո՛ւ՛սը սլշեա...

Վարանդի մասնէրը արդարութիւն կը պահանջէ: Բթմամտէն դէպի դառնալու ուղղուող երակը կը կտտայ: Դա դար մը անհրաժեշտ է: Նոյնիսկ աչքերը կը ցաւին: Անհատները կը չարչիւղէ տեղաւորութիւնը: Կը դադարեցնէ յառաջխաղացքը ու ասի կը պտըտցնէ կտնդուն բուրդերուն վրայ: Իր ալ մազերը ոգնին կը յիշեցնեն: Կ'անցնի ննջասենեակ: Անկողինը հարազատ պատճենն է տազնապնդուն: Վերմակը գետինն է, ասանը իննսունամեայ ծերուկի մը կզակը կը յիշեցնէ, իսկ բարձր ձեռնարկած է փրնտըռուքի մը:

Շինչպէ՛ս կարելի է տարիլ տան մը մէջ, որ չէ բարձրացած քար առ քար, որ չէ տեսած որմնադիր, չէ տեսած քրտինք, չէ ունեւած կոշկոտ, քարկոփ, տուն մը, որուն պատերը, երդիքը, աստիճանները կանխապատրաստուած են, տուն մը, որ կանդուն է արուեստական կապով, քաղաքակրթութեան պտուտակներով, գիտութեան շաղախով: Այս ընթացքով պիտի անհետի իսկական սիրտը՝ անութիւնը ու սմբողջ աշխարհ պիտի վերածուի փրնփապրիէէ յարկերու, փրնփապրիէէ զաւակներու, փրնփապրիէէ ապրումներու:

Դատարի է փողոցը: Բայց ոչ: Ահաւասիկ ծերուկ մը, որ կ'անապարէ:

Ծերուկին ետեւէն նամակաբաշխն է: Անխառնաբաշխաբաշխ, նամակները յանձնած անտուկներու, դո՛ւնակ քրտածքով մը կ'անցնի ծերուկին քովէն, կը նկատէ ծերուկին ձեռքի պահարանը, կը թաւալի սակոյն անտարբերօրէն հեծանքին հետ: Ծերուկը չի փորձեր իսկ դիմել նամակարերին: Զի համարձակիր ձեռքինը յանձնել սնոր: Նամա՛կ... նամակաբաշխ, նամակատո՛ւն, քաղաքակրթութի՛ւն...: Նամակաբաշխ կտրուցուցած է արհեստին ազնիւ երեսը: Փոխանակ լուրերը յանձնելու անհատներու, պարզապէս դործ ունի տուփերու դռներուն մօտ դեռողուած փոքրիկ անտուկներու հետ, իսկ ամէն անտուկ դազազ մըն է ամէնէն առաջ: Երկար, անյիշատակ ժամանակէ ի վեր ոչ մէկ նամակ ստացած է Վարանդ: Ոչ ոք ունի իր հասցէն: Առժամայ հասցէն: Անշուշտ որ ունի: Վարանդ փրնդիւն, աշխարհ: Ահաւասիկ հանելուկ մը աշխարհի բոլոր նամակաբաշխներուն: Անիթ մը արհամարհելու տալովալի առօրեան ու մտնելու արկածախնդրութեան մը անկողն ուղիներուն մէջ: Զգրուած նամակներու պատճեններ կը թաւալին ուղիղին մէջ ու դուրս կու գան լրագրի մը առատութեամբ: Նամակներ, որոնք երբեք պիտի չզրուին: Նամակներ՝ ուղղուած փրնփապրիներուն, բանաստեղծներուն: Նամակ ունի մարդարէններուն, Քրիստոսին, Աստուծոյ:

«Զդէ այս յիմարաբանութիւնները, զնա նե՛րս ու գործիդ նայէ: Ամէն ոք իրեն վերապահուած դեր ունի: Յիմար հարցեր կը ստեղծես դուն քեզի համար: Նամակաբաշխն ու ծերուկին միջեւ երեւակայական, անգոյ կապեր կը փորձես տեսնել, յուզականութիւն կը ստեղծես, նամակներու շուրջ խորհրդածութիւններ կ'ընես, կը ծաղրես փրնփապրիէէ տուները, անոնց բուխերիկներէն իջնել մերժող Կաղանդ պապուկին շուրջ ճամբատակութիւններ կ'ընես: Եթէ հարցերուն նայիս առարկայնօրէն, առանց թատերականացնելու, պիտի տեսնես, թէ այդ տունները արդիականացած կենցաղի հաղապարտ արտայայտութիւնն են: Յետոյ,

մարդն է, որ բովանդակութիւն կու տայ տունին: Իսկ եթէ կը կարծես, թէ բողոքներդ պարունակող նամակներդ գրեւոր Համաք ամբողջ կեանք մը անբաւարար է, պարզապէս ինքզինդդ կը խաբես: Եթէ կրնաս մտնանալ միակ աղէտ մը, որ մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով քեզի է, որ կը պատահի, ես պատրաստ եմ յաւիտեանս լըռութեան դատապարտելու ինքզինքս: Հրաժարէ աւելորդ արանութիւններէդ, ներս մտիւ ու աշխատէ:

Գէտորուան մօտ է, բայց ճաշի սեղանին երեւակայութիւնը սնուցանող գիծեր կոն: Կը շարունակէ հարուածել: Այս անգամ հարուածները փամփուշտներ են... բայց Վարանդ միշտ ալ հակակրօնք ունեցած է թնդանօթներու, ուռմբերու, փամփուշտակներու հանդէպ: Ինք ալ մասնակցած է մարզանքներու: Զինամարտութեան նոյնիսկ: Ինք ալ ենթարկուած է հրահանգին: Մական երեք չէ սորված զէնքի մը վերակազման ճարտարութիւնը: Պարտականութեան պարտադրանքով կրցած է մասնաւոր գայն, բայց չէ սորված զնկուղայն կրակելու կազմ ու պատրաստ վիճակին: Ուրիշներ, փակ աչքերով, ակնարկի մը մէջ, յիսորտ շարժումներով եւ կը մասնատէին, եւ կը հաւաքէին զէնքը, ինք, ժամանակին հետ, ներաշխարհին մասնատումին առնթեր, կու գար այն եղբայրացութեան, թէ Հիմնական, արժանապատիւ մեկնարանութիւն մը կար այս բոլորին մէջ: Ինք ատակ չէր վերակազմելու զէնք մը, գործածելու զայն, վերջ տալու մարդու կեանքին: Ինչ կարեւորութիւն, եթէ նշանաւորութեան մէջ միշտ ալ զոհացուցած ըլլար մեծաւորները:

— «Առաջինն է դժուարը, վերջը այնքան կը դիւրանայ...»:

Բաւեր, որոնք կը շարունակեն դողանջի ներողամտութեան սուրբին համար բարձրացուած տաճարին մէջ:

— «Ներ առաջինն է, կը պօքաս...» Կը վերածուիս զգուշութիւն: Վերջը սակայն, երբ կոկորդէ մը ժայթքող արեւուն կը հօսի աչքերուդ մէջ, կը պահանջ

ջնո նոր արեւն, առաւել արեւն, թմրեցունքի բաժանորդի մը նման...»:

Փակուած էին դատարանները: Բացուած էին բանտերուն դռները:

Առաջինն է դժուարը, վերջը... վերջը... ճիշդ առաջին համայնքին պէս...

Փողոցէն անցնող համայնակուէ կառքին աղմուկը ընդոտտ ոտքի կը կանգնեցընէ Վարանդը: Կրկին մոռցած է: Կ'առնէ աղբամանը ու կը խոյանայ դուրս: Բայց, արդէն, արդէն ուշ է: Հիմա, Հիմա պարտաւոր պիտի ըլլայ նոյն աղբը, նոյն աղտեղութիւնը պահելու երեք օր եւս, մինչեւ յաջորդ զարուստը: Բաւարացիին հաւերուն երկունքի ցաւերը կը հասնին մինչեւ խոհանոց: Բայց քանի՞ անգամ կ'ածեն առնէ: Երեք անգամ... Միջապան՝ աղբազրին արհամարհական նայուածքները ուղղուած արեւելակուած նապաստակներուն, պարզապէս արգահատանք կը պատճառեն:

Ուշադրութիւն, զգո՛յն... Վարանդ հաղիւ կը զսպէ սրտակներու ալեկոծումը: Վա՛յ իրեն, եթէ, վա՛յ եկեր է իրեն, եթէ... Բայց ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ ներկերը թափին դորդին վերայ, հոսին միաբերան ու ծնունդ տան նոր զարդանշաններու, նոր բոլորակներու: Նոր, բոլորովին նոր գորգի մը:

«Պարզապէս Արեւմուտքը սրբազան կ'ըլլայ Արեւելքը», կը մտածէ Վարանդ, կը ժպտի, մինչ ձեռքը կը շարունակէ աշխատիլ, արհամարհելով դաստակին, կոնակին ու աչքերուն մէջ զառանգող ցուր:

Շուն մը կը հաջէ հեռուէն: Ուրիշ մը կը պատասխանէ: Փոխադասութիւնը կը շարունակուի բաւական երկար, երբ աւելի ուժեղ հալոց մը լրութեան կը դատապարտէ զանոնք: Լռութիւնը կը տեւէ զինազարարի մը տեւողութեամբ: Այս անգամ ուժեղ հալոցը կը չէզոքանայ համերգի մը մէջ: Երբ ուշագիւր կ'ունկնդրէ Վարանդ, կը ճանչնայ բոլոր մեներդոյները: Իւրաքանչիւրին հետ առանձին մտերմութիւն մը ունի: Կամ առնուազն

ծանոթութիւն մը: Մանաւանդ այդ վաւարատը, որ արհամարհելով զգառոտութեան հրահանգները, քնքշօրէն կը յարձակէր տիրող շքեղ սրունքներուն վրայ, հեշտանքի խոստումով կը խաղցնէր լեզուն ու փարթամ այդ միտքուն չմնացելու մասհոգութեամբ ժանդերմեր ներս քայած, վարժութեան ճամբան կորոնէր: Ու լա լա լա լա լա: Անոնց մէջն էր նաեւ միւսը, ժամանակի մրցակիցը: Այդ օրերու ընկերունքին կը գրկէր զայն, կը սեղմէր կուրծքին, երեսը կը ծածկէր դժգուանքներով ու կը համբուրէր յախուռն գեղումով: Վարանդ այդ պահուն իսկ կ'որոշէր վերջնականապէս հրաժարիլ այդ շրթներէն, առանց երբեք խոստովանելու, թէ հովուերգութեան քայքայումին հիմնական պատճառը դունչն էր քաղաւած համբուրն էր:

«Վերջացան պատմութիւններդ, համերդներդ: Ինչո՞ւ անպայման տարօրինակ բաներ կ'ուզես տեսնել բնական զէպքերու ետին: Մարդ-շուն կապը միշտ ուլ ուսեղ եղած է: Ու ակէի տեսակուն: Գիտես, որ աստապելական է լուսնորու հաւատարմութիւնը: Աղջկայ մը հետ ունեցած տխուր արկածախնդրութիւնդ պէտք է՛ ստուերէ տրամաբանութիւնդ: Այդ կենդանիին հանդէպ համակրանքդ ալ պէտք է՛...»:

Ինչ, հակադրանք... Ահաւասիկ ուրիշ պատմութիւն մը, ահաւասիկ ուրիշ շունք, տոհմային առեւտրայինութիւններով, անզուգական յակասիչներով: Ահաւասիկ համայնարան մը ու քիչ անդին գաղթականներ: Շամփոնիս, մրցանակներ, ժիւռի: Ու ուժեղութիւն: Ահաւանդ, օղանաւ ու ուժեղ: Բայց կեանքը իր ճամբով, մահը՝ իր: Պէտք է շարունակուէր շունքի գեղեցկութեան մրցումը: Ի՞նչ կապ անոնց եւ գաղթականներու մէջ պայթող ուղեղներու միջեւ: Ինչո՞վ յանցաւոր էին խեղճ կենդանիները: Ոչ մէկ ստուեր դատաւարի վճիռին վրայ: Ուրեմն թող շատըրուանեն շամփոնիսները, դուստ, պուստ, երիցս պուստ...:

Ձեռքը կը հարուածէ բռունցքի ուժանութեամբ: Կ'եռեւեփի ուղեղը: Գ'ուզէ

գուրս գալ դանկէն: Ժայթքել ոսկրեայ այդ պատեանէն: Բուրբուռահաճաւ այդ արկիւղէն: Փոխանակ կոշուղիներէ անցնելով ուղեղակու դէպի գոհարեղէնները, ինչո՞ւ չէին բարձրանար դէպի վեր, դէպի աւելի վեր ու պայթեցնէին փռուքի դիրքով, ամպշուրի մը ներքեւ գետեղւած գանձը: Ինչպէ՞ս սղերգութեան մը դիմաց ուղեղներ անասան կը մնային ու, մանաւանդ՝ ուղեղային նոր գիտեցումով գանկ փշրելու նոր ձեւեր կ'որոնէին: Բայց ինչո՞ւ չէր պայթած իրը տառաջին հերթին...: Վարանդ չէր կրնար ջնջել տառերէ գիտեցումը պատկերը յիշողութիւնէն: Յիշողութեան ներկայէն: Երկատարող էին քուրսն ալ: Դեռտոտի այրեր, դեղին, կապոյտ, սրճագոյն վերնապսակներով: Անճաշակ, անճաշակ, անճաշակ: Միակ կ'էր մը կտր անոնց մէջ, զիւղացի մը յայտնապէս: Գոռակին վերայ ինկած կնոջ վրայ կտր այր մը, որ իսկական պատկերով մը, մարմնով ու բազուկներով կը փորձէր պաշտպանել զայն: Անոնք ինչպէ՞ս գաղթականներէ կլլելով հասած էին մինչեւ հոս: Ինչպէ՞ս կրցած էին անցնիլ գեղեցկութեան մերսցումին մասնակից լուսները: Կնոջ դէմ պատուար բարձրացուցած այրը...: Բայց Վարանդի ընկերունքն անշուշտ պիտի ներէր իր մեկնումը, եթէ գիտնար, թէ օր մը փորձած էր հեռախօսել իրեն, կարելի եղած չէր հաստատել կապը, պաշտօնեայ աղջիկը հետաքրքրուած էր իրմով, մտերմիկ հարցումներով ուղղելով հասկացուցած էր, թէ պատրաստ էր ամուսնու վիշաք, տրամադիր՝ առնելու հիմնականին տեղը, եթէ, եթէ...: Ինչ ոչ մէկ տկարութիւն յայտնաբերած էր: Դիմաւորած էր նաեւ շողեկառքի այս անգամ գիմացը նստած աղջկան, որուն նեղ բաճակէն յորդող ազատ միտքը զգայնութիւններ արթնցուցած էին մէջը, անոր դրկին մէջ խայտացող ճերմուտան տոբիք ընծայած էր, որ խոսակցութիւն մը սկսեալն բանաստեղծին շուրջ, հանդիպումը վերածուի գուստի մը ուրիշի, գուստի մը սուրճը՝ երկրորդ հանդիպումի, ապա, ապա, ապա ոչինչ: Այդքան: Պիտի ուզէ՞ր հասկնալ ընկերունքն...: Զափա-

զանց երկար ամիսներ յաջողած էր գոյատևել հեռու կնոջական հպումէ։ Կըրոցած էր վերապրիլ։ Ժամանակին հետ մարմինը սկսած էր վարժուիլ զրկանքին, սակայն երբեմն պահանջը տուայտանքի կը վերածուէր։ Մանաւանդ առաւօտուն, երբ երեսն վրայ պոսկում, մարմինը կը ճնշէր անկողնին, ծունկերուն ոսկորները կը կպէին իրարու, ասկայն կը շարունակէր վերմակը ու անմիջապէս ետեւը լուսով դուրս կը նետուէր։ Կիրքին վրայ յաղթանակ տանելու գինովութենէն տարուած՝ կը դիմադրէր։ Գիտի հասկնա՞ր ընկերուհին...։ Բայց այդ տասներեք դիակներու պատկերը յաճախանքի վերածուած էր։ Մանաւանդ այդ այրը, որ իր մարմնով, էութեամբ ուզած էր պոռպոկանիլ կենը...։ Իր ընկերուհին ալ տեսած էր նման դիակներ...։ Լաւ, պիտի խոստովանէր, պիտի խոստովանէր, թէ մէկ անգամ, միայն մէկ անգամ որոշած էր դրաւել սիրուն աղջկայ մը ուշադրութիւնը։ Շատ երկար ժամանակուան մէջ առաջին ու միակ անգամը ըլլալով, նոր շապիկ դնած էր, նաւաստիի յատուկ օձիքով ու կապոյտ, հորիզոնական դուզահետ գծերով, որոշած էր լաւագոյնս յարգարուիլ, սափրուիլ, բազմիք ունել, ապա միայն ներկայանալ հաղորդորդին աղջկան։ Առաջնորդուած էր հանգստեան կոչուած սափրիչի մը տունը։ Տան միջանցքին մէջ, պատահական աթոռի մը վրայ, արագաշարժ մարդ մը առաջ տարած էր գործողութիւնը, «Հայելի», հիմա հայելի ուրկէ՞ բերեմ», ըսած էր, «ձիշդ ուղածիդ պէս եղաւ, ապահովուցած ու ճերմ տուն երթաւ, ուղածիդ շափ կը նայիս հայելիին» կրկնելով ճամբու դրած էր գինը։ Սենեակ չհասած՝ վարանդ դիտած էր ինքզինք ծաղկավաճառի մը խոշոր հայելիին մէջ։ Գիտած էր ու չէր ճանչցած։ Գիտած էր ու խորշած։ Գիտուն վրայ ստեղծուած էին աշխարհի՜ ունհարթութիւններ, ուր ոչ մէկ օդանաւ տրամադիր պիտի ըլլար էջք գործելու։ Նման կերպարանքով զո՞վ կըրնար գրաւել։ Անգործ հայհոյանք կուգար բերնին, բայց անբարաբար սխա-

լը գործուած էր։ «Մազս շուտ կ'ածի, որիչ սափրիչի պէտք է երթամ», մխիթարուած էր, սակայն հաջադորդին աղջիկը հմայելու ծրագրին ու ջնջուած էր վերջնականապէս։ Իսկ կատարուածը պատահական չէր կրնար ըլլալ։ Լուս մեղսակցութիւն մը պոռպոկուն ունեցած պէտք է ըլլար սափրիչին ու անոր շնանցած, հաղարար մղուններ հեռու գոնըւող ընկերուհին միջեւ...։ Այս բոլորը պատմելէն հետք, ընկերուհին պիտի ուզէ՞ր հասկնալ...

Ժամը երկուք պէտք է ըլլայ, կը մըսածէ վարանդ, երբ կը լսուի աքաղաղին միշտ նոյն ժամերուն բորժրոցող կանչը։ Իսկ ներոն կամուրջներու մասին ուսերէն երգի մը բառերը կը հասնին։ «Յայտու նոյն նաւ կարելով նստիլ, փքսյու նոյն քալտուէք քիմնաքա...»։ Վարանդի նախընտրած երգն է։ Գիտէ, որ անխուսափելիօրէն անոր պիտի յաջորդէ մենախօսութիւն մը։

— Այո, կը սկսի արդէն։ Մարդիկ սարուկի վերածուած են, իսկ ես պիտի, պիտի չտրեմ, պիտի չլուսալուսիմ։ Յուսացին, սր կրնամ անձնասպան ըլլալ։ Նա ու թշնամիներս լաւ կը ճանչնանք գիրար։ Առաքելութիւն մը ունիմ ես։ Մինչեւ որ չ'ըսողործեմ այդ նպատակը, պիտի մնամ այս մոլորակին վրայ։ Հակառակորդներս ժամանակաւոր յաղթանակներ կրնան արձանագրել միայն։ Անոնք չեն տեսներ իրենց սպառնացող վտանգը։ Մինչեւ հիմա զգուշացուցած էի գիրենք, բայց անոնք չեն ուզեր հասկնալ։ Նոյն իսկ կ'ուզեն խենթի տեղ գնել գլխ։ Բայց կարեւորութիւն չունի։

— Ինչ որ պիտի ըսես, շո՛ւտ ըսէ։ Ինչ որ պիտի ըսես, անապարէ՛, — կը ծայրէ վարանդ հեղանքով։

— Մարդիկ գործ կատարած ըլլալ կը կարծեն աշխատելով։ Կ'աշխատին։ Ինչի՞ համար։ Բայց բնութիւնը առանց աշխատանքի ալ կը հայթայթէ մարդուն կարեւորները։ Կ'աշխատին։ Որո՞ւ հաշտոյն։ Հո՞ն է հարցումը։

— Յայտնէ գաղտնիքը ու վերջա-

— Նախ պէտք է յարգուին պայմաններս :

— Այսինքն՝ նախ մարդիկ պէտք է դադարեցնեն աշխատանքը, յետո՛յ...

— Զեմ կրնար մանրամասնութիւններու մէջ մտնել :

— Ուրիմն երդ մը երդէ, ուսերէն երդը անգամ մըն ալ : Պի՛ս, պի՛ս...

— Մի աժանցներ հարցը :

— Հաւ, բայց թող որ աւարտեմ սա աշխատանքը : Վերջը կը խօսինք վարդապետութեան մասին : Թերեւս առաջին հետեւորդը ըլլամ : Առաջին աշակերտդ :

— Կրնաս փակել խոհանոցին դուռը ու մտիկ չընել : Ես հետեւորդի կարիքը չունիմ : Եւտոյ, խնդրեմ, զիս մի չփութեր ուրիշ հետ :

Վարանդ կը փակէ խոհանոցին դուռը ու կը վերադառնայ աշխատանքին, երբ հարեւանը կը խուժէ ներս : Կիսամերկ է : Առանց բառի, կ'առնէ գաւաթ մը ջուր, քանի մը կաթիլ խորհրդանոր հեղուկ կը կաթեցնէ անոր մէջ ու կը սկըսի խմել առանց անապարանքի, գոհունակութեան հասնանքներով :

«Մոխրամանը, մոխրամանը, — կ'ըսեմ ուշադիր, — վերցուր գորգին վրայէն» : Զգուշացու՛մը կ'անտեսուի : Փանի մը կաթիլ ալքով կ'աւելցնէ որուակին մէջ ու կը շարունակէ կերակրել քուրդի տըժուդունած խոպուպիկները : Վրձին գործածել արգելուած է : Ներկի չափազանցւած քանակութիւնը կընայ մատնել ունոր չարարուած ըլլալը : Մէջքին ցաւը խաղի բերելու համար, կը շտկէ կոնակը, կը մնայ այդպէս ու կը շարունակէ ներկել : Վաղը կը սկսի ամառնային արծակուրդը : Կը փակուին վաճառատունները : Ինք ալ արձակուրդի մէջ է : Տարօրինակ զբոսալիւիկ մը : Ունեցածը սպառելու կը մօտենայ, իսկ անորոշութիւնը կը թանձրանայ ասկա : Խաչմերուկի մը վրայ, դիմացը անցուցանակ ճանապարհներ կ'երկարին : Կանգնած է լլմորած : Զի դիտեր ո՛ւր երթալ : Միայն դիտէ, թէ չ'ուզեր մնալ խայմերուկին վրայ : Անցուցանակ հանապարհները չափազանց շատ լսուի ունին երթելու կանոնադրող : Իսկ իր դիմաց միայն կար-

միւր լուսեր կը վառին :

— Կարմիր լոյսը շտեմա՞ր...

— Տեսայ, քեզ շտեմայ...

Կարմիր լոյսը տեսած էր ու անցած, որովհետեւ ոստիկանը, ծառի մը ետեւ ծուլարած՝ ուղած էր խաղի բերել զինք : Պատասխանած էր անկեղծ, իսկ իր երկրին մէջ անկեղծութիւնը կը պնդատուէր : Փոխանակ տուգանելու, քահանած էին երկուքով ու բաժնուած համակրանքի փոխադարձ բարեւանքով : Բոլոր վարորդներն ալ ճարպիկ էին, սրամիտ ու, մա՛նաւանդ՝ անկեղծ :

Մինչեւ որ վերջ տուած էին հանրապետքեւ գոյութեան ու կուպրով ծածկած անոր երկաթուղիները :

— Գիտե՛ս ինչու վերցուցին հանրապետքը :

— Որովհետեւ ուղիդ եւ սրբուած գիծէն ընթացող միակ բանը մնացած էր...

Մարդիկ համարձակած էին ծաղրելու փոխադրութեան այդ միջոցը, արհամարհելու, մինչեւ իսկ անպատուելու զայն : Աւելի պարկեշտ պիտի չըլլա՞ր քանդել, քան թէ երկուքը վերածել երրորդական ճաշարանի, իսկ մնացեալը լքել բացատի մը մէջ, որովհետեւ մարդիկ գործածեն զանոնք իրեւ ճեմի կամ սեռային արագ սպասարկութեան պատահական երդիք : Մինչ անտէր կը մնային այդ խորհրդանշանները, մարդիկ կը շարունակէին պատուար բարձրացնել իրենց սեփական կալուածներուն շուրջ : Ի՞նչ կրնար պատահիլ, եթէ աշխարհ վերադառնային բոլոր անմեղ զոհերը, այդ զոհերուն ուրուակները հալել պահանջելու : Ի՞նչ պիտի ընէին դահիճները, ի՞նչ պիտի ընէր անոնցաւոր ուսանողը, եթէ վերադառնային բոլոր ժամանակներու բոլոր ժողովուրդներու զոհերուն ուրուակները ու բոլոր ժամանակներու ամէնէն խիտ, ներդաշնակ ու ուժեղ բանակով սրբազան պատերազմ չղթալագործէին : Ուրուակներու բանակը կ'ուշանար, բայց կը շարունակէր իր շարքերը խտացած տնոնել նոր զինուորադրեալներով :

Տրամս ֆիքսը իլ է քրաւս գ'էտ :

A.R.A.R.®

Գաւաթ մը գինի կը լեցնէ Վարանդ՝ զիմացը կայնած Հարեւանին արարքը հաւատարակչու համար: Ընտրութիւններ կան տեղ մը, երկրաշարժ՝ ուրիշ տեղ: Տեղատուութիւն ու ժակընթացութիւն: Ձէնքէ վաճառքը կը ծաղկէ: Տեղ մը Համալսարանային Երրորդ, բայց սահմանափակ մարտը կը շարունակուի: Դաշտային, լեռնային ու ծովային գիւղերը կը շարունակեն կրակ արձակել Հիւսիսային, արեւելեան, Հիւսիս-արեւմտեան ու կեդրոնական ճակատներու վրայ: Միայն մէկ ճակատ կը պահէ իր լուսթիւնն ու լրջութիւնը:

Երբ նոր սիկարէթ մը կ'ուզէ վառել Վարանդ, մատը կը մնայ պարապութեան մէջ: Ժամանակ չունի անցնելու կամուրջը: Առանց ծխախոտի անտանելի պիտի ըլլայ կեանքը մինչեւ գործին աւարտը:

— Ես գիտէի, զգուշացուցած էի ալ, բայց...

Պատկերներն ստեղծելու հարեւանին ճիգը կը բախի Վարանդի անտարբերութեան:

— Կը բաւէ շարունակեալ գրաստի աշխատանք: Ի՞նչ հակեր ես քուրջի այդ կտորին վրայ ու անոր առջեւ օրերէ ի վեր երկրաշարժի զէրք առած կը փնտրեմ տեսողութիւնդ, առողջութիւնդ, ինքզինքդ: Գ'անգրադառնա՞ս, որ ոտքերու տակ զրոտելու սահմանուած այդ բանը բարձրացուցած ես այն սեղանին, որուն վրայ կը գրես ու կը ճաչես ալ:

Գինիի ու մպերուն ու սիկարէթի բացակայութեան միջամտութեամբ զորդին նկարները կը պղտորին պահ մը կրկին անգամ պայծառանալու ու այս անգամ վերածուելու երկրաշարժի տարածութիւններու, գրախանութիւն, տան, երկրին: Երկրորդ պատերէն հետ աղէտին ու հաւորութիւնը կը բազմապատկուի ու մեծամղձութիւնը կը փորձէ ընկճել հոգին: Երկիրը քանդուի իր մասնակցութիւնը համեմատութիւն կը փոխէ: Մէյ մը կը նայի ժամացոյցին, մէյ մը պատերուն սպիտակութեան, մէյ մը քմծիծաղով գինք զիտող երիտասարդին: Մաղրանքի իսկական առարկայ մըն է: Գորգը լան մը

նետուած սիկարի կտոր մըն է...

— Կը բաւէ կենսա գլխուս վերել... Ձի՛ս կը ծաղրես... Նայէ՛, հաւերը կը կողտան, կեռասներն ալ պատգամներ ունի տալիք... Ներս դնա ու շարունակէ ուսումնասիրութիւններդ... Փրկէ մարդկութիւնը, բայց մոռցիր գիտ...

— Դուն իրաւունք չունիս այդ ոճով խօսելու հետ: Իրաւունք չունիս ինծի պէս մէկը անարգելու: Դուն տակաւին չես ճանչնար դիտ:

— Ձիս առանձին ձգէ, կը հասկնա՞ս:

— Դուն ալ բոլորին պէս ես:

— Գնա՛, գնա՛ գործ մը գտիր:

— Ինչպէ՛ս... Ինչպէ՛ս... Բայց այս մէկը չեմ կրնար ներել...

Հարեւանին գլխի ծակերը կ'ընդլայնեն, կը ցցուին ճակտին երակները ու Վարանդ պահ մը կը վախճայ, որ ձեռքի դաւաթը արձակէ գլխուն: Բիւրտ ուժ գործածելու փոխարէն կը վազէ ներս ու ահեղ կշռոյթով նուազի մը կը վերածէ պայրոյթը:

Կը դադրեցնէ աշխատանքը, կը նայի սրտակներուն, ալքոլի շիշին, փայտեայ գրչիկին ու գործին յիմար պարապմունք մը ըլլալը առաջին անգամ ըլլալով կը բախի գիտակցութեան:

Արուեստի համար օրգանական կապ ունի, չէ՞...: Ներկարարութիւն ըսէ սուտը...: Բանտարկեալի տաժանակիր աշխատանք...: Երանգապնակ... հը...: Վան կող...: Ռընուար... Միածան... Նոր դոյն... Միծաղելի եմ, իսկապէս ծիծաղելի... Գործ մը, որ ո՛չ տաղանդ կը պահանջէ, ո՛չ շնորհ, ո՛չ իսկ սովորական կարողութիւն... Ներկէ-ներկէ-գնա՛, ներկէ-ներկէ-գնա՛...

Կը խմէ Վարանդ ու կը ներկէ, կը հայհոյէ ու կը ներկէ, կը տառապի ու կը ներկէ, դաւադրութեան մասնակցութիւն կը բերէ ու կը ներկէ:

«Հալածութիւն սեւ մագնիս,
կարմիր պայտ շատ քանցէք,
կարմիր պայտ շատ քանցէք,
Փեսամ խաբեցէք...»:

Աշխատանքին անհետեւութիւնը կը

բախի խոհեմութեան ու, կարճ մենամարտէ մը հտք, կը վերադառնայ պարտուած: Ամբողջ կեանքը պայքար մըն է եղած դիտակցութեան մենատիրութեան զէմ: Ձէ յաջողած նոյնիսկ մէկ արարք դործել անոր հակակշիռն դուրս: Յմած է, ուղած է աւելի խմել, քիչ մըն ալ, բայց խոշորագոյն մը տեղ մը արդելք հանդիսացած է յառաջխաղացքին: Բիւրեղացած չէ ոչ մէկ մղում: Սովորական հարցերու մէջ լայնօրէն օգտուելով հանդերձ ալ յատկութեան, անսովորը նուաճելու համար անհրաժեշտ եղած է ձերբազատել յաղ պատուհասէն ու անոր ծառայէն: Գիտակցութիւն ու խոհեմութիւն, զինտակից ունենալով մէկ քանի մեղսակից ուժեր, շարունակ զսպած են իր մէջ զսպանակուած թոյլքը: Արդեացած է ծրագրերն եր, երազած է նուաճումներ, բայց բոլորն ալ արգելադրուած են իրապաշտութիւն կոչուող լծակներէ: Սորված է լողալ, մնացած է կեդրոնը, հեռու ախոյանական կատարներէ: Կրցած է լողալ գորտի մը պէս ու թիթեռնիկի, յաջողած է մեծ տարածութիւն կտրել աւազանի յատակէն, բայց հիմնական բան մը դաւանանած է իրեն: Ժամանակ մը յափրչտակուած է դաշնակով, տարիներով հետեւած է դասի, բայց մատները մերժած են թրթռալ: Նոյնիսկ փինկ-փոնկը ճնշած է զինք: Հոն ալ ձախը մնացած է ձախաւեր, իսկ ինքն իսկապէս որ միշտ թերի: Ուղած է ընել բան մը, զոր իրմէ առաջ ոչ ոք բրած ըլլար: Առաջնութիւններու հետամուտ, ուղեղը եւ մարմինը դաւած են անդուռ ու զլացած անհրաժեշտ մղումը:

Ճնշակէ, տղամ, ներկէ...: Գիտես, որ ժամանակը չի խնայեր: Ի՞նչ կադ ունին զիտակցութիւնն ու խոհեմութիւնը փինկ-փոնկին հետ: Յանկութիւններ միայն դուն չէ, որ կ'ունենաս: Կամենայլ միշտ ալ կարենալ չէ: Դադրէ կացութիւնը որդ որդալէ: Արեւին նայէ, որպէսզի շուրջը հտնե մնայ, կը թելադրէ փիլիսոփան: Արդէն հիմա փիլիսոփայելու ատենն ալ չէ: Պէտք է իրատես ըլլալ: Ի՞նչ իմաստ ունի բոլորստեսալ վերը դրոտած

այդ դիւրազգաց հիսկէններուն զէմ, լըպըրծուն ալ անդամին: Սխալ բան չկայ երկրագունտին վրայ: Ուժերու հաւասարակշիռութիւնը կը շարունակէ յաղթանակել: Կը կրկնեմ, ո՛չ մէկ սխալ շարժում կայ տիեզերքի ներդաշնակութեան մէջ: Մի փորձեր խորանալ ու, մա՛նաւանդ՝ մի փորձեր ինձմէ անկախ բաներ, ալապէս, ալապէս...: Իսկ ինչո՞ւ անպաճման կ'ուզէիր արուեստ տեսնել այս աշխատանքին մէջ: Զիչէ է, որ այդ խորկանքը ես առթեցի քեզի, որովհետեւ կ'ուզէի, որ աշխատիս: Ոչ մէկ պատճառ ունիս անտեղի յուսախաբանութեան: Գիտեմ, որ տաժանելի է, սակայն ապրուստ ձաւելու համար պարտաւոր ես բան մը ընել: Շարունակ դեռ կը մեղադրես...: Կը նախնարէիր մնալ հոն ու... ու...»

Հոն, հոն արդէն ընտելացած էր կեանքի հիմնական գաղափարին հետ: Վերածուած էր ան առօրեայ կատակի, Ինք ալ կտրած էր երկաթուղիի գիծը, հոն՝ ուր ամէն օր կ'ինկր ու ալքեր կ'իյնային: Ինք ալ ծաղրած էր այդ արձակալէնը:

— Տղա, ո՞ւր մնացիր:
— Եկայ:
— Երեք հոգի ալ մորթեր են:
— Մորթեր են՝ մորթեր են, ի՞նչ ընեմ:
— Ինչո՞ւ այդ կողմերը կ'երթաս:
— Ի՞նչ պիտի ըլլայ որ:
— Մորթեր են...
— Պիտի մորթեն, հապա ի՞նչ պիտի ընեն:
— Քեզի ալ գէշութիւն մը կը պատահի...

— Թող պատահի, ի՞նչ ընեմ: Ամէն օր այսքան մարդ կը մեռնի, ես ի՞նչ ունիմ անոնցմէ աւելի:

Մա՛նաւանդ մարդիկ կը շարունակէին կտրել մահուան կամուրջը: Անհրաժեշտ արագութիւն ապահովելու համար, հետեւ կու գային իրենց ինքնաշարժներով, պահ մը կը մնային անշարժ, կը հաղորդէին խորհուրդին հետ, ապա կը ստերային՝ խաչակնքելէ հտք: Անցաւ... Զարնը-

ւեցաւ... Դպաւ... Անցաւ... Զկրցաւ...
Անցաւ... Փամփուշտներու տարափը
Հասողութեան որոշ միջոցի մը մէջ հը-
րեմն կը յաջողէր ծակծակէլ անցնող ինք-
նաշարժը։ Ոչինչ, պարզապէս մահուան
հետ ժամագրութիւնը յարգուած կ'ըլլար։
Յետոյդը... Ո՛վ էր յաջորդը։ Ատանց կա-
րեւորութիւն ընծայելու նախորդի ար-
դիւնքին, Վարանդ կը ձեննարկէր նոյն
արկածախնդրութեան։ Դէպի ետ, դա-
դար, խաչակնքում ու՛ Ալլա մաալէ...
Անցաւ, Կէցիր նայինք։ Անցաւ։ Անցաւ։
Անցաւ...

Ահա տախիկ աղջիկ մը սակայն։ Ռաւ-
միւրայ մը։ Պայուսակ մը ձեռքին, ծեփ-
ծեփուն, կը ձեռնարկէ կամուրջը հետիո-
տըն անցնելու քաջագործութեան։ Ատոր
մըայ չնն կրակեր... Անանկ ալ կը կրա-
կեն, որ... Կը տեսնես... Դո՛ւն ալ հոս
ես, ես ալ հոս եմ... Փոխանցիկ ապ-
շահը վարակած է բոլորը։ Աղջիկը կը
քալէ սակայն։ Կը յառաջանայ, ինչպէս
սկսանուած արտի մը մէջէն։ Նայուածքը
դէպի առաջ, կը քալէ դէպի նպատակ,
երբ կ'արձակուի առաջին փամփուշտը։
Ուսնապահար՝ աղջիկը կը կորսնցնէ հիւ-
սիսը։ Փոխանակ վազելու դէպի ապահո-
վութիւն, կ'աճապարէ դէպի արձակա-
ղէնները։ Երկրորդ փամփուշտ մը դարձ-
եալ կը ծակէ լուսթիւնը։ Փամփուշտնե-
րու տարափը չ'ուշանար։ Կը վրիպին, կը
վրիպին բոլորն ալ։ Պայուսակը սեղմած
սրտին, աղջիկը կ'ընդունուի հոռուներով
ու ծափերով։

— Մոխրաման կու տա՞ք։

— Գետին նեակ, կոխէ վրան։ Նետէ՛,
բսինք։ Դիտկներու վրայ կը կոխեն այս
օրերուս։

— Քիչ առաջ մէկը բերին հիւանդա-
նոց։ Քերեւս հարիւր կտոր եղած էր...

— Դիտիկ մը կայ ծովեզերքը... Կըն-
նակին վրայ պառկեր է մարդը... Պառ-
կելիք տեղն ալ դտեք է...

Ու այսպէս փամփուշտը կ'անցնէր
մէկուն սրունքներուն արանքէն, որիւրի
մը ականջին քովէն, երրորդի մը կզակին
տակէն, իսկ չորրորդի մը ուղեղին ճիշդ
կեդրոնէն։

Բայց նոյն աղջիկն է, որ կրկին կ'ուղ-
ղուի դէպի կամուրջը վերադարձի գոր-
ծողութիւնը կատարելու։ Այս անգամ
բեռնաւոր է ան։ Կը քալէ դանդաղ, խը-
րոխտ, անվրդա՛վ։ Հերոսի իսկական կեց-
ւածքով։ Կը շարունակէ քալել։ Բազմու-
թիւնը գուրգուրոտ նայուածքով կը հե-
տեւի։ Բայց աղջիկը կը քալէ առանց կա-
րեւորութիւն ընծայելու լուսթեան։ Ամ-
բողջական դիւցազներգութիւն մըն է կա-
տարուածը։ Հիմա վտանգին ճիշդ կեդ-
րոնն է։ Կանգ կ'առնէ յանկարծ։ Մանր է
րեւը։ Կը հանդիս պահ մը, ուս կը փոխէ
ու կը քալէ կրկին։ Կը քալէ անախայճ։

Ոչ մէկ փամփուշտ կ'արձակուի։

Իսկ Վարանդ պիտի ուզէր նոյն քա-
ջագործութեամբ անցնիլ իր եւ հոգիին
միջեւ երկարող կամուրջը, ապա օդը հա-
նել զայն։ Միջոցը կամուրջ մը, որ զայ-
րոյթը կը դարձնէր անհամոզիչ, կը ին-
զաթիւրէր ուրախութիւնը ու լացը բո-
նադրօտիկութեամբ կը յափրացնէր։ Պիտի
ուզէր վերջնականապէս տապալել զայն,
սպաննել այդ միջոցը։ Զգուած էր անոր
հետ ըլլալէ։ Պէտք չ'ունէր յուշարարի։
Գննադատի։ Պէտք չ'ունէր կատարի։

Պիտի ուզէր ազատագրուիլ։

Պիտի ուզէր ազատագրուիլ, մինչ ոչ
մէկ ոստիկան զինք չէր կանչեր միջանց-
ներուն մէջ։ Ոչ մէկ ստիկան տուիթ կու
տար իրեն վէճի բռնուելու, մեղադրանք
տարազելու, ամբաստանութիւն ընելու։
Ու կը շարունակէր հիանալ բոլոր անոնց
վրայ, որոնք կը մասնակցէին ուրիշ ժո-
ղովուրդներու ազատագրական պայքո-
րին։ Կը կարդար աքսորուած, արդելա-
փակուած, հայածուած մարդոց մասին ու
կը նախանձէր։ Կը գոհանար հիանալով։
Գաղութիւնը ուղեղէն դուրս կը չէղորա-
նար ամբողջովին։ Յաղթանակը միշտ ալ
իզացած ընդդիմութիւններուն կը պատ-
կանէր։ Իսկ Ասիւրիկէն իրեն համար Բա-
րեյուսոյ Հրուանդանն էր, Վիքթորիա
Ղեճն ու Քիլիմանճարոն։ Ոչ մէկ խափշիկ
ճանցած էր կեանքին մէջ։ Նոյնիսկ այդ
խափշիկ պոռնիկը, որուն մօտ մտած էր
հետաքրքրութեան համար, երբ աճապա-
րանքին մէջ սիկարէթը բերանը մոռնա-

լով, ծայրամասին հաւաքուած մոխիրը կայծով կ'իյնար կնոջ դէմքին, կատաղած ցուլի մը նման կը շարտէր զինք վրայէն, լուստանքներու հատընտիրով մը կը հրէր մինչեւ դուռ, զգեստները կը նետէր երեսին ու կ'անպատուէր ամբողջ սպիտակ ցեղը։

— Հոս առաջին կարգ է, իսկ ձեր տոմարը...

Քիչ առաջ, երբ մտած էր այդ կատաղէն ներք, երկու անհատներ ստնտուիչ կրծներով դարեմբար կը խմէին։ Վարանդալ կը սրէր դարեմբարը։ Պատահած էր, որ այդ թիթեղէն պարպէ վեց-եօթը հասար։ Համակրական նայուածքին ոչ մէկ պատասխան տուած էին ոսկայն անոնք։ Քանի մը վայրկեան հոգ, երբ շոգեկատաքը կը շարժէր, անոնցմէ մէկը զլխարկ մը կը գնէր զլիւսուս ու ուղղակի կու գար գէպի իրեն։

Բացատրութիւնները կը մնային անընդունելի։ Վճռած էր տալանել։ Զբոսեցի խոտեր ընդունող պաշտօնեայ չէր ինք։ Զեր ինքնութեան թուղթը կամ որեւէ փաստաթուղթ։ Քաղաքը զաղթականներով լցուած է, ուրեմն...

Կրկին կայարան։ Այս անգամ, քնիւն մը խափշիկ մը ձերբակալած էր։ Ձեռք ինքնութեան թուղթը, կամ...։ Մեւտմորթը կը մերժէր, մինչ քնիւնը կը պընդէր։

— Թող տուր բանկոնս։ Թո՛ղ տուր կ'ըսեմ։ Ո՛չ, առ ուրեմն, ա՛ռ...

Բուռնցքի հարուածը կ'իջնէր քնիւնի երեսին։ Շոգեկատաք արդէն կանգ առած էր, երբ ուրիշ քնիւններ կ'ուղղուէին դէպի իրենց պաշտօնակիցը։

— Առ, առ, առ...

Այս անգամ կից մը ու քնիւնը կը տապալէր, խափշիկը կ'օգտուէր իրարանցումէն ու կը փախչէր Վարանդի Հիացումին առջեւ։ Իր վրէժն ալ լուծուած էր։ Թափշիկը լուծած էր նաեւ իր վրէժը։ Ափրիկէն իրեն համար նաեւ նեղոսն էր, Սեւեկալն էր, Մատակասքարը։ Ոչ մէկ սեւամորթ ճանչցած էր, բայց ահա այդ խաւարէն հկած մէկը կը հարուածէր իրենց հասարակաց հակառակորդը։ Քանի մը

բուլլ ու գոհունակութիւնը կը քողազերծւէր։ Պատեանին մէջ դառնութիւն կար։ Ինչպէ՞ս ինք առած չէր բռունցքի տղահարուածը։ Նոյն առիթը տրուած էր իրեն ալ։

Ինք պէտք է լուծէր իր վրէժը, բայց առեւարական մարդի յաջողութիւնը կը սահմանափակէր խլրտացող ցանկութիւններու արտայայտութիւնը։ Կը կարծէր, թէ իրեն սակսողը պարզապէս տառապանքն էր, թէ գոռարին կեանք մը կըրնար յղկել հոգին, կընար լարել կարողութիւնները, քանզի տատամաւթի պատուարները ու ժամանակին հետ կըրնար ունենալ փորձառութեամբ յափառցած ուղեղ մը։ Ու, վերջապէս, զբոսը բանաստեղծութիւնները պիտի կարենային լիցքաւորել իսկական զննումով, աննախընթաց յանգերով, ինքնատիպ պատկերներով։ Պիտի շնամէր ոչ ոք։ Դոնէ այդ մարդին մէջ պիտի շմար բազմութիւններու մէջ։ Պիտի ըլլար պատանդանին արձանը։ Եթէ չէր կրցած շտիմատի ախոյեան ըլլալ, թերեւս ըլլար...

Վերսի ինծի պակսող տաղող փորձառութիւնն է։

Բայց ինչպէ՞ս։ Գործը յաջող է, զիրքերու վաճառքը՝ լաւաբեր։ Առօրեան կը հոսի, ինչպէս համբիւնի հատիկները վարժ մատներու մէջ։ Կը կենայ հայելիին դիմաց ու ոչ մէկ խորշով կը նկատէ ճակատին, ոչ իսկ մէկ թիւ սպիտակ մազ անոր վերեւ։ Երբ Հրդեհուած է գրախանութիւն, անորոշութեան յանձնուած ինքնաշարժը, երբ ամիսներէ ի վեր վաչկատունի կեանք մը կը քաշքշէ, հիմնական օչ մէկ փոփոխութիւն կը նկատէ։ Բայց ի՞նչ է տառապանքը։ Կարելի՞ է հրովարտականերով տառապանից պահեր ստեղծել ու մտնել մէջը, ինչպէս քրտնեղու համար մարդիկ կը մտնեն թրքական բաղնիք մը։ Զու՛նի տառապանքը կարողութիւն։ Ահա՛ եզրակացութիւնը։ Այրող զգայնութիւններ կը մերժեն տաղել զինք։ Երեւոյթներէն ազաւորութիւն, այդ տալաւորութիւններէն հարցեր ստեղծելն ու զանաք միջոցներ տալանալումներ հասցնելը չեն կրնար իսկական տառապանք ենթադրել։ Տառա-

պիւն ալ տառակութիւն կը պահանջէ։ Մահուան ճանապարհներէ անցնելէ ետք նոյնիսկ, չունի փոխուած ըլլալու զգացումը։ Բայց ինչո՞ւ չկարենալ տառապելու այս տառապանքը։ Տառապանքը չը կարենալ տառապելու։

«Ձկարենալ տառապելու տառապանքը... Բայց, բայց այս չէ՞ փնտռած»։
— Կը հոտէին, կը հոտէին դարչինի տոնէն։ Կը հոտէին շոգեկառքին մէջ, օդանաւին մէջ, շոգեկառքին մէջ։ Փողոցը, պարտէզը, ամէն տեղ։ Մարդիկ ինչպէ՞ս կը հանգուցեն այս դարչինահոտութիւնը, մինչ կը խորշին հոտոգոտքերէ ու բերաններէ։ Ինչպէ՞ս կ'արտօնեն, որ բարոյական...

Բայց իսկապէս ո՞վ է սա պարտադրուած, պատահական հարեանը։ Յեղեկատա՞կ մը, թէ մակարոյ՞ մը։ Ուղեղային խանգարման զո՞հ մը, թէ նոր օրերու տեսանող մը։ Ինչպէ՞ս կը գոյատեւէ, երբ շուտեղ գրեթէ, չի քնանար դըրեթէ, այլ միայն կ'երգէ, երաժշտութիւն կ'ունենդրէ միայն, կը մենախօսէ ու կը գրէ անհասարկ նամակներ։ Որո՞ւ կը գրէ ան։ Ինչ կը գրէ։ Որո՞ւն կ'ակնարկէ, երբ կը խօսի մարդկութեան թշնամիներուն մասին։ Ո՞վ է մարդուն թշնամին։ Ինչո՞ւ կը շարունակէ լեզուներ սորվիլ։ Աշխատանքն է մեղաւորը։ Ինչո՞ւ յաճախ այնքան ծիծաղելի է ու անհամոզիչ...

Առաջին իսկ հանդիպումին Վարանդ ուզած էր գիտնալ անոր անունը։ Դեռ ուրիշը չէր։ Անունը ինչ է ըսել կ'ուզեմ, հետապնդած էր գուարճանալով։ Ձեռքը մը անգամ զայրացած էր ան։
— Անցադրիդ մէջ անուն չէ՞ նշանակուած։

— Ուրիշներու ինծի տուած անունը զիս չի պայմանաւորեր։

— Ձըլլայ թէ սպասուած Մեխիւս ըլլաս։

— Նման հարցերու մասին չեմ տիրեր կատակելու...

Վարանդ դարձեալ կը փակէ խոհանոցին դուռը, կը տալէ գրիչը ու կը շարունակէ գործը։ Կը խմէ ու կը հարուածէ։

«Քեզ տեսնեմ։ Զիչդ ժամանակին պիտի վերջացնես։ Շտկէ կոնակդ քիչ մը»։

Կը շարժէ գլուխը ու կ'աշխատի։ Եթէ կարենար վերջնականապէս լուսնիկ այդ տաղտկալի միջամտութիւնը, այս վայրկեանիս իսկ կրնար յարձակիլ թիք-թիք աշխատող ժամացոյցին վրայ, ջարդուփշուր ընել զայն մինչեւ որ գուրս հոսէին ժամանակին աղիքները, գլորէին անոր ատամնաւոր ու անատամ բոլորակները, ջարդալիկներ կը ընդ ահուաները, մինչեւ որ ազատագրուէին զպանակները, ապա նստէր հանգարտութեամբ, առաջին խաղաղութեան մէջ, առանց միջամտութեան, ու շինէր նոր ժամացոյց մը, աննշան ու անթուանշան, ժամացոյց մը, որ պիտի երթարկուէր իրեն, դրամ-ցիրին, մարդուն, թաւալէր գէպի ոտաջ կամ գէպի ետ ու կանգ անէր բոլորովին, Լիթէ այդ էր ցանկալին։ Եթէ ըստ-բուկը չըլլար խոհանոցին, պիտի չըրջէր հիմա բոլոր սրուակները գորգին վրայ, կրակի տար զայն, անոնց հետ նաեւ այրէր աշխարհի բոլոր գորգերը, բազմաթոռներն ու վարդալոյսները։ Պիտի ուղիւ ոչ իսկ սու մը ունենալ գրպանին մէջ։ Սակայն կրկին խոհանոցի մէջ կ'սկսէր զսպասուած էր, որ կարէք չուսնանար փողոցը նետուած ծխիկներու։ Ուսեցած գումարը թէեւ կը հոսէր վախճանին, բայց որ դարձ ներկելու գործ մը կը յայտնուէր ու ինք կրկին դրամ պիտի ունենար։ Ամբողջ կեանքի մը ընթացքին ոչ մէկուն հայհոյած էր Վարանդ, ոչ ոքի երեսին դուռ չբխկացուցած էր, ոչ իսկ մէկ անգամ բռնեցքը իջեցուցած սեղանին։ Իսկ զէնք մը չկարենալ վերապահելու անկարութիւնը խորունկ իմաստ պէտք է ունենար։

Գիտիլի չորրորդ գաւաթը գրգռու կուտայ բորբոքած հոգիին։ Ազատագրուելու պահն է։ Կը բարձրացնէ որուակները ու... Ինչո՞ւ ինք ալ պիտի չունենայ անփական փոխադրութիւն, պիտի չդադրեցնէ աշխատանքը, չպայքարի մարդոց ստրկութեան դէմ ու չփնտռէ անոնց ապրիմանկութեան դադարները։ Ինչո՞ւ պիտի չհետապնդէ ազնիւ նպատակ մը ու ըլլայ հարեանին նման... Ինչպէ՞ս...

Հարեւանի՞ն նման... Հաւանարա՞ր...
Բայց հարեւանը, այդ տխմարը ո՞վ է...
Իր երկրորդ ա՞նձը կը ներկայացնէ...
Ներկերու տուփը ական մըն է, զոր կը
պատրաստէ տրճակելու ու օդը հանելու
կամուրջը, այլապէս կրնայ պայթիլ ձեռ-
քին մէջ ու...

«Աշխատէ, ժաղճիկ... Նաեւ դադ-
րեցուր խմելը: Կը գոնգաւոր, թէ չես
կրնար գիշնոյնալ: Ի՞նչ է կատարուածը:
Ինչի՞ կ'ուզես, որ վերադրեմ գորգեր այ-
րելու, ստիկան ապաակելու մոլուցքդ:
Կորսնցուցիր ունեցածդ, կը հասկնամ:
Բայց դուն չէ՞ր հիացողը գրախանու-
թիւ քովիկը դիւք բռնած կաղ ներկադա-
րին, որուն սնտուկը առնուազն շաքաթը
երկու անգամ կա՛մ պիտի ջարդուէր, կա՛մ
բոնագրաւուէր, իսկ տն, առանց լաւատե-
սութիւնը կորսնցնելու, առանց յուսա-
հատելու, միշտ ալ նոր սնտուկ շինելով
մարտահրաւէր կարդար ստիկաններուն,
դարձեալ կենար նոյն արգիլուած դիր-
քին, մինչեւ որ իշխանութեան մարդիկը
մանձրանային դինք հետապնդելէ: Ի՞նչ
խօսք է բազկաթոռներու սա պատմութիւ-
նը: Իսկ նախ վար դիր նայիմ այդ ներ-
կերու տուփը: Անուշադրութեամբ մը
կրնաս ամէն ինչ խանգարել: Կուզը մըրը
կը նախընտրէ... Որ բոլորն ալ իրեն պէս
կո՞ւզ ըլլան, թէ իր կուզը չտկուի... Ամ-
բողջ աշխարհի հրդեհումը կը ցանկաս,
կարծելով, թէ աւելի դիւրին է ամբողջ
տիեզերքը փոշիացնել, քան... Կուզն ալ
նոյն տրտմարանութիւնը կը դրժածէ...:
Վա՛ր դիր ըսի այդ սրտակները: Կը տես-
նեմ, թէ նոր ցանկութիւններ կը ծնին մէ-
ջը: Կ'ուզես ժամանակին ատամները
ջարդել, նոր ժամացոյց սարքել: Տա-
րիներ առաջ ալ զոյացուցած էիր այն
համոզումը, թէ գոյութիւնդ աւելի իմաս-
տալից պիտի ըլլար, եթէ ծնած ըլլայիր
պատմական շրջանին: Նոյնիսկ օր մը Բ-
սիւր, թէ եթէ Գաղիկ Երկրորդի խորհրդ-
դականը ըլլայիր, պիտի շարածնէիր, որ
ան ընթացիկ երթար բիւզանդացիներու
հրաւէրին, այլ՝ մնար Անի, ժողովուրդին
հետ, թաղաւորութեան ղեկավար: Քիչ մը
երկար լռելով արտօնեցի, որ խորանաս

յիմարաբանութիւններու մէջ, բարդոյթ-
ներու վերլուծում կատարելով ծնունդ
տաւ նոր բարդոյթներու: Տառապիլ կ'ու-
զես, հա՛... Ահա դիւտ մը, որ միայն
քեզի կրնայ պատկանիլ: Ինչինքէ արդէն
իսկ ազատագրուած պէտք է համարես:
Նոյնիսկ չաշխատելու մասին կը մտածես:
Կ'արտօնես, որ հարեւանդ ծուլութիւնը
փլիխոփայելով տպաւորէ քեզ ու մզէ իր
հետեւորդը ըլլալու: Աշխատանքն է կեան-
քին օրէնքը: Աշխատանքը կեանքն իսկ է:
Ասիկա կրնայ քեզի աշխարհի ամէնէն օ-
թեկ խօսքը թուիլ, բայց հիմնական միակ
համարութիւնն է: Կեղեցողներ միշտ պի-
տի գտնուին, դարձահոտ բերաններու
պիտի հանդուրժէ մարդկութիւնը, իսկ
մարդոց ապերժանկութեան զաղտնիքը
պիտի շարունակէ խորհուրդ մնալ: Մի
նախանձիր սուտունող օղանուերուն, սու-
րացող հրթիռներուն: Առեւտուրէն դուրս
փորձեցիր լատ բաներ, բայց մարդե-
ցար: Զախողեցար, չէ՞: Կը թուի, թէ
բանաստեղծ ըլլալու համար ուլ արդէն ուշ
է: Մինչ կը կարծես, թէ քեզի պակասող
լուի տառապանքն է, վերջնականապէս
պէտք է համոզուես, որ գրականութիւնը
բազմիմ մը չէ, որպէսզի անկէ ներս իւ-
րաքանչիւր մտնողին երզը քաղցր հնչէ:
Հիմա մոռցիր ամէն բուն ու աշխատանքդ
վերջացուր»:

Չուզիր հաշտուիլ այս թելադրանք-
ներուն հետ, բայց կրկին քաջութիւնը կը
դաւաճանէ: Ըմբոստանալու պատահու-
թիւնն է, սակայն կը շարունակէ հար-
ւածել: Նոյնիսկ բժանդրութեամբ, ար-
ւեստի ու ապրուստի համար: Մեղեդիի
մը հնչիւնները կը վաշնակցին դինի վեր-
ջին ուժայերուն հետ: Բիրտ արարքին ի-
րադործումը յետաձգուած է, բայց ինչ
որ կը կատարէ առժամեայ է: Անցողա-
կան: Ու կը ժպտի: Վերջին լաղթանակին
հաւատացողի թախծոտ ժպիտով: Կը
հարուածէ չընհայեացութեամբ: Կը հառ-
ցրնէ ներկը արժատներուն: Կը անուշանէ
զանոնք իր նորածինը դիեցնող մօր մը
պէս:

Միայն շարժում մը ու սրտակները կը
ցնցուին... Կը սարսափի: Հազիւ կը մի-

ըմտե՛ք: Ապահով է գործը: Կը մնայ նոյն աստատուող տղան: Ախտառնքը աւարտին կը մօտենայ, երբ խաւարացի աքաղաղը կը կանչէ վերջին անգամ: Պատուհանէն դուրս կը ձգէ նայուածքը: Աջի մեծակեացը ձագարով մը կը փորձէ հատուցանել երկինքի ժլատութիւնը:

— Զըլլայ, յըլլայ, թէ հողդ ծախես օտարին կամ նոյնիսկ վարձու տաս, — կը պոռայ Վարանդ:

— Զիս մահափորձի իսկ ենթարկած են: Միշտ փրկուած եմ ապակին: Ես կը նախազգամ փամփուշտին ուղղութիւնը: Ան պիտի չհասնի նպատակին: Եանթարգել ունիմ ուղեղիս մէջ: Հիմա սակայն յոգնած կը գզամ ինքզինքս, շատ յոգնած:

Ծտեմարանէն սնտուկի ու շիշերու նոր ձայներ կը հասնին: Հեռախօսը կը հնչէ կրկին ու կրկին, օդանաւեր կը ծողրեն դինք: Գործ մը վերջացուցած ըլլալու խարկանքով երբ մոռցուած կէտեր կը փնտռէ, ապա գործը ամբողջովին կը փոխէ տախտակամանին ու կու գայ ծունկի, կը թուի, թէ վերականգնացած նշանները, անխմանալի շարժերը, գործուածքները վաւերական պատուէր մը ունին: Ինչպէս հանէն կամ խորասանէն հտած այս գործը բանտարկուած իշխանուհի մը պատգամը չէ, որ կը պարունակէ: Պարզապէս իրեն ուղղուած ծածկագիր նամակ մըն է ան: Իրեն հասցէագրուած կոնգակ մը, յիշեցնելու, որ պէտք է շարունակէ հաւատալ Ախոյեանին:

«Կր դերպանցիս ինքզինքդ՝ ինքնախաբէութեան գլուխ-գործոցներ հիւսելու մէջ: Կը խօսեցնես գործը, փաստաբանի մը նման մտածումներդ կը գրես անոր վրայ ու կը կարծես պատուէրներ ստա-

նալ անկէ, ինչպէս դրացիդ, որ իր պատուէրները կը կարծէ ստանալ բոյսերէ, արջերէ, աղբիւրներէ: Հիմա ժամանակը չէ երկար խօսելու: Մալէ գործը, կապէ ու ինկիր ճամբայ: Անապարէ, որպէսզի հասնիս 17-39ի շոգեկառքին: Յաջորդը կրնայ ուշ ըլլալ: Անապարէ՛, կ'ըսեմ: Կ'ենթադրեմ, թէ տակաւին շատեղծեցիր ժամանակը կասեցնելու մեքենադ:

Վարանդի արտայայտութեան ամբողջ տարածքը կը դրաւուի ծամածռութեան մը կողմէ: Ժամանակը կասեցնելու մեքենան...: Երբ աչքերը կը բարձրանան, հարեանին յոգնած քմեծաղը կը ցնցէ ողջ էութիւնը: Որքան ծիծաղելի է ինք այդպէս ծունկի, որքան շնչին: Մինչ պարզապէս հսկայ միւս է դիմացինը: Կը նայի ժամացոյցին: Որոշ կայարաններ կանգ շտնոյ շոգեկառք մը կ'անցնի մօտակայ կայարանէն: 17-39ի շոգեկառքը...: Զինք կը սպասէ 17-39ի շոգեկառքը: Երբ օդանաւ մը այս տեղամ կ'անցնի ցածէն, շատ ցածէն, ուղղակի Վարանդի ուղեղի մէջէն, կը ցատկէ ան խնայարուած, կը բարձրացնէ ներկի տուփը երկու ձեռքերով ու սրուակները կը պարպէ գորգին վրայ: Ձայնասփռութիւն խօսնակը անդոյն ձայնով մը կը յայտնէ, թէ հեռաւոր երկրի մը մէջ, հարեւր երկու օրուան հեռոսական դիմադրութենէ մը ետք, կեկ-րոսական Ամբոցը ինկած է:

Ետեւ մը կը հաջէ հեռուէն: Ուրիշ մը կը պոտապոտեն: Փոխասացութիւնը կը շարունակուի բաւական երկար, զինադադարի մը տեւողութեամբ, երբ աւելի ուժեղ հաջոց մը լուռութեան կը դատապարտէ դանտը:

ԴԱՐՊԱՍՆԵՐՈՒՆ ԱՆՑԵԱԼԻԴ

Ես կը մեկնիմ համբարդի պէս գիշերային
անբռնաբեր սանդուխներով
եւ ասի կ'առնեմ հին ցանկութեամբ հրավառուած՝
նոր սրտմալութեան դարպասներուդ շիրմատուներ:

Երեւային խորութեան մէջ անցեալիդ,
որուն փառքի եւ բերկրանքի ականներում
հակառակորդն արդ կը սփռէ
մոռացումի հագար կնդրով ռսկեփռի՝
կը տուայտինք մենք մայն ցաւով ակտաժէտ,
նայն հեզմանքով հրախոց,
դուն՝ տնիմաց երազանքով,
ես՝ տագնապով իրական...:

Մասունքներուդ վիմաքարին սրբատաշ
կը ընկնուի մարմնքն իմ թէժ՝
իբրեւ խաչքար:
Ազերասեմն լուսնեան մէջ երգերուդ
կը յամբան տալերն իմ բորբ՝ իբրեւ յուշերգ:

Կը պարագրեն բացասները կարօտիս,
քու աչքերուդ ծիածանէն հեռաբաւկուած՝
հագար տեղեր յարկադաշտի,
հագար խռիւր խռիւրդաստուեր
եւ գերթ ասեր անբաժան՝
կ'այլանդակուինք մենք կարծես
եւ կ'ազարինք միտունդ,
կտորակուած սանդաններուդ պէս հեռամոյն,
շքեղանքիդ պէս փաշթաղ:
Կտտամքին մէջ այլափոխման այս յարափոխ՝
կը տառապինք մայն տփուքեամբ կարեկէր,
նայն դիպումով զգեսպառ,
դուն՝ էութեամբ հեղանիւթ,
ես՝ գոյութեամբ հաղեղէն...:
Կը սօսափեմ շուրջն իմ ձայներ մոլորում,
որ վերածուած
հողիդ անլուր ձայներգութեան,
վերափոխուած կսկիծներուդ էակից
եւ վերքերուդ մշտաբորբ՝
կ'ազաղակեն յամկերզն աղու,

digitised by A.R.A.R.@

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ,

Ն. Դ Ի Մ Ա Ք Ս Ե Ա Ն

ՄԱՀՈՒԱՆ ԲԱՂՁԱՆՔ

Ես կը մեռնիմ
քայց դաւք անմահ կը մնաք
որովհետեւ դեռ չէք ծնած

Վ. ՕՇԱՊԼՆ

Ծննդաբերութեան ատեն կ'ակնկալէր, որ իր կիներ մեռնէր։ Ակնկալի՜ ճիշդ չէ։ Ակնկալութեան տունն ասուող պատճառներ չկային։ Պարզապէս կը սպասէր, որ մեռնէր։ Կը յուսար։

Այնպէս որ, երբ կիներ պատգարակին վրայ դրին, անոր նայեցաւ, ինչպէս կարծէք առաջին կամ վերջին անգամ կը տեսնէր։

Զարմացաւ, երբ հիւանդապահուհին ըսաւ, թէ մանուկը ծնած է, բայց չհարցուց, թէ մայրը ո՞ր է։ Իր մաքին մէջ յստակ էր, որ մանուկը պիտի ծնէր, իսկ մայրը, ընդհանրապէս պէտք, անմիջապէս հաք, պիտի սկսէր տարանջատուիլ եւ յետոյ մեռնէր։

Եւ երբ պատգարակին վրայ կիներ դարձեալ բերին ու մահիճին վրայ երկարեցին, հայեցաւ անոր գունատ դէմքին եւ յուսաց որ, ահա ուր որ է, կը մեռնի։

Աչքերը բացաւ, «պապա եղար» ըսաւ եւ ձեռքը երեսին մօտ երկար առնէն պահեց։ Զգաց տաքութիւնը, բայց չընդհատեց։

Բռունցքները սպառնազին ճօնեցին իրարու դիմուն։ «Համա՛ւ պընա...»։ Դէմքերը զայրոյթէ կծկուած էին։ Հիմա, ուր որ է, դանակ մը, դաշոյն մը, գէնք մը երեսան պիտի գար եւ անոնցմէ մէկը պիտի սպաննէր միւսը։ Թե՛րեւս երկուքը՝ իրար։

Մարդիկ միջամտեցին։ Կուտողներէն մէկը աւելի յոռմախ կը սպրդէր անոնց ձեռքէն։ Կը յարձակէր։ Լուտտները կը տեղացնէր։

Մարդոց գումարը բաղնիք-քարի ծանրութեամբ ճնշեց։ Կոխը հեղձամահ եղաւ։ Կիրքերը մեղմացան։ Ա՛ն՝ որ աւելի յանախ կը սպրդէր եւ լուտտները աւելի կը տեղացնէր, աւելի շուտ մեղմացաւ։ Մօտեցան իրարու՝ կարծէք ոչինչ պատահած էր։ «Շերեֆ»ի չես գիտեր ինչ հասկացողութեամբ համարուեցան։ Նայեալ Ֆլլոյ չկար։ Օճի բարկացայտ Ֆլլոյ։ Կար խաղաղութիւն եւ հաշտութիւն։

Ըսուեցաւ, որ անոնք նախկինէն շատ աւելի տերտ բարեկամներ եղան անուհեան:

Եւ այսպէս, նորութիւնը, զղայացունց նորութիւնը, որուն կը սպասէր անդադար, չպատահեցաւ:

Նայեցաւ մանուկին եւ ահա նո՛ր, բոլորովին նոր աշխարհ մը բացուեցաւ իր առջեւ: Խաղաց անոր հետ: Մանուկը ջղային էր, անհանդարտ, քրտնալքոտ: Եւ պահանջկոտ եւ պահանջին զոհացում՝ անմիջապէս կ'ուզէր:

Միտեց զայն. բայց նկատեց, որ իր սիրտին մէջ իսկ պահանջկոտութիւն կար. անհանդարտ, ջղային, քմայքտ պահանջկոտութիւն մը: Կարծէք բուն մը կը փնտռէր անոր մէջ. կ'ուզէր, որ ըլլար բան մը, բայց ճիշդ թիւն՝ չէր գիտեր:

Ի վերջոյ, յայտնութեան պէս, զայս մանուկը եւ եմք ըսաւ: Եւ յայտնութիւնը չուրախացուց զինք: Ընդհակառակն, տրտնեցաւ: Շո՛րտախոս եւ դժգոհ պիտի ըլլայ՝ ըսաւ: Կամ հակառակը:

Եւ յետոյ մտածումը մղձաւանջի պէս կրծեց զինք. «ա՛ն կրկնութիւն է եւ շարունակութիւն»: Եւ բի՛րտ հարուածը՝ «նորութիւն չէ»:

Օրերը դարձեալ նախկինին պէս թուայիլ սկսան: Ամէն անգամ, որ կնոջ կը նայէր, կարծէք յուսախար էր, որ չէ մեռած: Զմեռնելով՝ կինը դաւաճանած էր իրեն, կը թուէր:

Ի՞նչ տեսակ մարդ եմ ես: Ո՞վ եմ ես, հարց կու տար ինք իրեն:

Ե՞րբ դուրս պիտի գամ այս խռով հոգեվիճակէն: Միշտ դժգոհ, միշտ տնհանդարտ, միշտ անդիմադ, միշտ կռուազան:

Ամէն ինչ կը ժանձրացնէ զինք: Միայն, երբ դրասեղանին ետին կը նստէր, ժամերուն անցնելը չէր զգար:

Բայց դարձեալ. հո՛ն եւս: Վայրենի կատաղութեամբ կը տեսնէր հարցերը, ինքզինք: Ժամերը կը սառչէին, գիշերը ցերեկին եւ ցերեկը գիշերին կը խառնուէր, բայց հո՛ն իր պայքարը կը շարունակուէր: Ամէն բանի դէմ եւ ամէն բանի ի խնդիր:

Քանի՞ անգամ բարեկամներ ներութեամբ, բարեկամաբար իր ուշադրութեան յանձնած էին, որ չափը կ'անցընէ: Բայց զինք կը մղէր իր կամքէն իսկ վեր տարերք մը, որուն առջեւ եւ միայն անոր առջեւ գինաթափուած կը զգար:

Որովհետեւ, երբ տարիներ անաջ առաջ ուղղութեամբ ընթանալու սկըսած էր, կարծած, սպասած, յուսացած էր, որ հիմա, ո՛ւր որ է, բան մը, զղայացունց, շատ կարեւոր, բայց ամէն պարագայի մեծ բան մը պիտի պատահէր, շարժէր, փոխուէր:

Այս տարիքը միայն նորութեան կը մօտեցնէր զինք եւ սակայն, նոյն առաջ տարիքը, տարիներու փորձառութեամբ, այնքան մտերիմ ապրում մը դարձած էր, որ թէեւ անխուսափելի, սակայն հին, հին, հին եւ սովորական բան մը դարձած էր:

Միւրոյ, հաշտութեան, խաղաղութեան եւ անդորրութեան, բայց նաեւ թմրած սովորածոյութեան բոլոր կայքերը անողոք հարուածներու կ'ենթարկուէին, թերեւս ի խնդիր գերագոյն մէկ սիրոյ, հաշտութեան, խաղաղութեան եւ անդորրութեան:

Բայց, ցաւը զգացողը միայն կ'ընդգիւցէ անողորմութեան դէմ: Եւ ահա
Հակադրութիւններ, թշնամանքներ եւ խղութներ:

Առկախ հարցեր:

Հիմա առկախ հարցերը լուծելու ատենն է:

Դիմացը նստած է մէկը, որ կրնայ լուծել, կամ թիւք կը կարծէ, որ
ան կրնայ լուծել, կամ ան կը կարծէ, որ կրնայ լուծել:

Միջոցառում հարցերը յաւիտենական են, դրուած՝ այժմէականներն դիմաց:
Այդտեղ կայ իրական գոյութեան եւ վերացական էութեան, ծրագրուած աշ-
խատանքի եւ տարերքի, առարկայի եւ ենթակայի հակադրութիւնը: Համա-
դրութիւն՝ այս պայմաններուն մէջ կարելի չէ: Պէտք է թեքիլ դէպի առա-
ջինները, որպէսզի իրադարձելիք սահմաններուն մէջ մնայ մարդ եւ անոր
աշխատանքը: Աւելորդ քիմիանդրութիւններ յատկանշուին: Վէճեր պտուղ
տան:

Եւ այնուհետեւ, ահաւասիկ, լուծութիւնը չես գիտեր ուրկէ՝ կը սողոս-
կէ, կը մագլցի, կը փաթթուի երկուքին վիզին եւ ո՛չ ճայն, ո՛չ ծպտուն
դուրս կու գայ: Նոյնիսկ զսպուած հազ կամ հեծկտուք չկայ: Անշուշտ, կա-
րելի է շատ անմեղ բաներու մասին խօսիլ: Սուրճի լեզի է կամ քաղցր, աս-
փիլիմը ասփիլոյճն ազդու է կամ հակառակը, բայց նոյնիսկ ա՛յդ՝ լուծութիւ-
նը եւ անոր միջոցաւ երկուքին միջեւ ստեղծուած պատուարը չի քանդուիր:

Լաւ է մոռնալ, հաշուել, չխօսիլ, չմտնախալ, լուի եւ դարձ-
եալ լուի:

Մովորութեան օրէնքն է, կեանքի օրէնքն է:

Իսկ նորութիւնը, ստեղծագործ աշխատանքը, զոհաբերումը, վրէժի
զգացումը, ներքին հղօրսնքը, որ անզգարում եւ անողորմ քննադատու-
թեամբ եւ ինքնաքննադատութեամբ պէտք է իրադարձուի...

Կամ ա՛յս... կամ ոչի՛նչ...

Ոչինչը աւելի տհաքու էր, աւելի անողորմ՝ քան անհասական ընտրե-
նութեան մահը:

— Մենք, — կ'ըսէր խօսակիցը:

Եւ այդ բառին ետին դրուած համոզումէն դառնելով, կը կործուէր,
որ ժողովքը պիտի գլորէին, լեռներ պիտի յաղթահարուէին, լուծեան պա-
տը պիտի քանդուէր...

Թող ըլլար... Եւ ոսկայն...

Ինք չէր կրնար չընել եւ չըլլալ այն բաները, զորս ցարգ ըրած էր եւ
եղած...

Ատենէ մը ի վեր, յանկարծ, խլրտուքներ սկսած էին ծայր տալ: Նո-
րութեան նմանող բաներ: Անուղղակի խողովակներով ազատնալիքներ կը
հասնէին իրեն: Լաւ էր, նորութիւն էր:

Արիթմով մը ձերբակալուեցաւ: Կեցութեան արտօնագիրին մղձաւանջ
դարձած հարցը: Այլապէս՝ այլապէս... Լաւ էր: Դարձեալ քիչ մը նորութիւն
կար: Նոր փորձառութիւն էր բանտը: Կարելի է ըսել նոյնիսկ հաճելի:

Բայց երանի, գիրքերն ու թուղթերն այլ հոն ըլլային: Նաեւ յատակ
դառնար, թէ մինչեւ ե՛րբ հոն պիտի մնայ: Ո՛չ մէկը կար, ո՛չ միւսը յըս-
տակ էր: Առկախ հարց մը նաեւ այս:

Իսկ այս առկա ժիճակը տարիներէ ի վեր, առկա չարացերով, առկա չաշխենքով, առկա ակնկալութիւններով, նորութեան եւ նորոգութեան առկա բաղձանքներով նոյնը կը մնար: Ոչինչ կը փոխուէր. ոչինչ կը շարժէր:

Եւ օր մը, դուռը բանալուն, ձեռնառումը մը պայթեցաւ: Լաւ էր: Ապակիներ փչուեցան, դուռը խորտակուեցաւ, բայց ինք, կինը, մանուկը սնվեալ դուրս եկան:

«Լաւ պրծանք», ըսաւ, բայց աւելի ուրախ էր, որ նոր բան մը ի վերջոյ կը պատահէր: Շարժում, կեանք, եւք կար: Ինք արդէն ի՞նչ կ'ուզէր:

«Յիմարի պէ՞տ տրախութեամբ ի՞նչ կը քրջլտո», կը պոռար մանուկը կուրծքին սեղմած կինը ներսէն:

Իսկ ինք կը մտածէր, որ առկա չարացեր եւ առկա ժիճակներ, ի վերջոյ, որեւէ ձեռով, լուծուելու խոստումը կու տային: Սպասումի ահաւոր անձկութիւնը վերջ գտնելու վրայ էր:

Բարեկամներ իրենց դուռները ճօճեցին, ցաւակցեցան, ենթադրութիւններ ըրին, բայց ոչ ոք նկատեց այն թաքուն խայտանքը, որ կուրծքին տակ կ'ուռէր: Ի վերջոյ, ի վերջոյ...

Աղլամուղլ էր:

Գիշերը դրամեքենան կակտացուցած էր անդադար: Հիմա՝ դործի կ'երթար:

Տակաւին աններկ նոր դուռը բանալէ ետք, իջաւ այն նեղլիկ նրբանցքը, ուրկէ փողոց պիտի ելլէր: Կիսամութին մէջ հազիւ կրցաւ նշմարել ուրաւագիծը այն տիպարին, որ տորճանակը ձեռքին կը սպասէր:

Հազիւ ակնթարթ տեսեց: Բայց այդ ակնթարթը յոտակատես ակընթարթ մը եղաւ:

Նախ յիշեց մանուկին ծնունդը եւ կնոջ հանդէպ իր սնուցած մահուան բաղձանքը: Տարօրինակ էր, որ մինչ այդ չէր մտածած իր իսկ սեփական մահուան բաղձանքին մասին: Այո, բաղձանքած էր զայն, բայց այդ բաղձանքը այսքան յոտակ երբեք չէր պատկերուած իրեն: Յետոյ յիշեց առկա չարացերը, որոնք ահաւատիկ կը լուծուէին եւ նորութիւնը, նորութիւնը, որուն կը սպասէր, ահաւատիկ կու գար:

Ոչ իսկ հակադարձեց: Միայն, առաջին անգամ ըլլալով, թեթեւ, հաշտ ժպիտ մը ուղղեց տորճանակին տիրոջ եւ նոր անդրադարձաւ...

Նոր անդրադարձաւ, որ իր փնտած նորութիւնը սեփական մահն էր:

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԹԱԽԾՈՏ ՇՈՒՐՋՊԱՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Ազգիկներու աչքներուն մէջ,
Թէ խնայքի տեղանին շուրջ,
Ո՛ւր որ եղայ՝
 նայն պարապին չառնները
 հետեւեցան պարանոցիս,
 երբ,
 ի վերջոյ,
Ժամանակի եւ բնութեան մշուշներէն
Քառասնակ ու քառասուն օրեր եկան
 կտրատեցին չառնները քայլերուս
Ու քարճարքերճ պարապներէն ինկայ հողիդ՝
 խռնաքիւղոյն պտուղն իբրեւ քու շինական մշակներուդ:

Ազմուկ չկար.
Լուկ մեղուներ կը բզզային
Ու նաքինջի պարտէզներուդ
Եւ ձիթենեաց բայրը համով
 տարածուեր էր կարկաչդ ի վեր,
 որուն ի լուր
 Հայաստանի հալածական եղհիկները
 յոներ էին դարձի ճամբան:
Եւ ես հանգիստ ու երջանիկ
Պառկեր էի շուտներուդ,
Երբ շուրջպարը քեզաց յանկարծ,
 հրազէններ տրտացին
 ու ես բնդոտո՛ւ արիւնատար կածաններէդ վեր ցատկեցի:


Աստուածներուդ կատա՞կն էր այս,
Թէ պարզապէս չեզմէ սերած իմ մարմինս էր լերան փոխուեր,
Որուն ամէն մէկ մասնիկէն կը բխէին խորհուրդներ
Եւ վերփռի իսկ ցանկութեամբ ու քառասուն լեզուներով
 յաղթանակդ կը պռոպին...
Մինչ ես փոխան տարծնալու՝
 մեծութեանդ ծանրութեան տակ կը դողայի,
 երբ քու անգիր պատգամներէդ չիրագործուած՝
 գոյութիւնդ հաստատելու համա՛ր միայն
 եկեր էի:

Հայրս էր եկեր մեծ հօրս հետ,
 Եկեր էիմ մեռած ու ողջ
 կերտիչներն ու ծնունդները ցատումիդ,
 որոնք տակաւ մրմնջեցին,
 մրմունջները դարձան խօսքեր,
 ու խօսքերը՝ գոռ աղաղակ:
 Ու բարբարոս ազմուկ մը յորդ՝
 Աննախընթաց ու խժալուր, ու սարսաղեցիկ,
 որում դիմաց հազարդուեցան
 գոչումները կատաճ ծովուն,
 իսկ ցանկութեան միջեւ երկու
 մտախոտող չդիմացաւ, եւ հասկցաւ, որ ի վերջոյ
 պէտք է մեկնի
 հո՛ն՝

Ուր երկու բզմակներու ուժգնութիւնը կը փռուի...

Յայնժամ բոլոր ազմուկները շիջեցան,
 Երբ կանգնեցար Միջերկրական ունդի ափին
 Զինաթափուած, այլ չուղիղալի
 Ֆետայու պէս, Մուսա՝ լեռ,
 Պատերազմին յաղթական, այլ վիրաւոր արփայի պէս,
 Երբ ծովերէդ, երկինքներէդ
 կռուտանան շարականներ մազուեցան
 ու մերթ ընդ մերթ, առնց կռօքիմ,
 այնքան քախծոտ ու քովիչ
 հարսանեկան շուրջպարիդ ելեւէջներն հնչեցին...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ



Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ. Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ՏԱԳՆԱԴՐ ՀԱՅՈՒՆ

Շաբաթ, 17 Հոկտեմբեր 1981ին, կիրակիմուտի կրօնական տարա-
զույթեցեց նախ. Անթիլիասի կաթողիկոսարանի շրջափակէն ներս բա-
ցումը կատարուեցաւ Հայ Գիրքի Գ. Յուլիանեանի, համընկողնաւ-
րեամբ Եսթէն Ա. Հայրապետի եւ Գարեգին Բ. Աթառիկի կաթողի-
կոսին: Ներկայ էին նախկինապետներ, վարդապետներ, մատարաններ
եւ բազմաթիւ գրասէրներ:

Բացման իստքը կատարեց վարդապետ Հրակելեան, իսկ
օրումը պատգամը տուաւ Գարեգին Բ. Աթառիկի կաթողիկոս, շնչող
դնելով իսկ գիրքին այսօրուան ապրում տալեալին վրայ:

Ստորեւ կու տանք վեհապառն իստքը:

Ահա հեղ մը եւս Հայ մարդը կանգնած է Հայ Գիրքին դիմաց: Հրա-
շաղիկ պատկեր...: Աչքը բացուած ու սլաքուած՝ արեւին...: Այսօր, եւ
այստեղ, եւ այժմ մարդ կը դիմէ գիրքը- գիրքը կը դառնէ մարդը...:

Այս չորրորդ անգամն է, որ այսպէս, Անթիլիասի Կաթողիկոսարանի
մայրավանքը կը վերածուի գրավանքի: Գրահանգէ՛ս է այսօր: Հայ Գիրքի
օ՛րն է այսօր: Անթիլիասի օղը խունկի փոխարէն՝ գի՛րք կը բուրէ: Հայ
Գիրքն է, որ սա պահուն իրրեւ հիմնականէր ներկայութիւն տեսողական եւ
գիտակցական այիբաւորումով կը բացուի այս ցուցատախտակներէն ու սե-
ղաններէն եւ կ'իջնէ ձեր աչքերէն միտքերուն եւ սիրտերուն:

Իրենք են խօսքն այսօրուան: Ինչ որ ըսուի իրենց մասին՝ յառաջա-
րան է պարզապէս, կամ լուսանցքալին նշմար, ստորիջնան ծանօթութիւն
կամ յաւելում: Մայր էջը մեր այսօրուան կեանքին՝ գրաւուած է իրենց-
մով, եւ՝ միայն իրենցմով:

Մեր այս բացման խօսքը պարզ նախամուտ մըն է իրենցմով իմաստա-
ւորութեւ եւ չքեղագարդուած գրահանգէսին:

Իրենք են այսօրուան համոնուադը. մեր խօսքը՝ նախերգանք մըն է
լոկ:

Իրենք են իշխանական պատգամն այսօրուան. մեր խօսքը՝ նախաժա-
նուցում իրենց պատգամի իշխանականութեան եւ հզօրաւիշտ ու հրամանա-
րարարու մեծութեան:

Իրենք՝ իշխան. մենք՝ մունեակիկ...:



Ձեռք ուզեր կրկնել այստեղ ա՛յն՝ որ անցեալ ցուցահանգիւններուն
չեղանալ բառերով ըսինք Հայ Գիրքի կենսունակութեան, արժէքին եւ դերին
մասին: Միայն կը յիշեցնենք ձեզի այն երեք բառերը, զորս ընտրեցինք Հայ
Գիրքի եւ Հայ մարդու յարաբերութիւնը բնորոշելու համար՝

Հայ Գիրքը՝ փառքը հայուն

Հայ Գիրքը՝ պատիւն հայուն

Հայ Գիրքը՝ պարտքը հայուն:

Այս չորրորդ ցուցահանգիւսին, կ'ուզենք քանի մը հաստատումներով
բնութագրել եւ ընդգծել ա՛յն՝ որ կը հաւատանք, գիրքերը կը զգան — Տագ-
նապը Հայ Գիրքին: Եւ իբրեւ խորագիր մեր այս տարուան խօսքին՝ կ'արժա-
նագրենք — ՀԱՅ ԳԻՐԲԸ՝ ՏԱԳՆԱԳԸ ՀԱՅՈՒՆ:

Տագնա՛պ — crise:

Ի՞նչ բանի մէջ:

Հայ Գիրքի ստեղծման մէջ. ա՛յ:

Հայ Գիրքի արտադրութեան մէջ. ա՛յ:

Նայեցէ՛ք այս սեղաններուն եւ ցուցադրութեաններուն.

— Պատաստանած կեանքով Լիբանանին մէջ Հայ հեղինակներու ստեղ-
ծագործական թափը չէ՛ կոտրած:

Նայեցէ՛ք սա գիրքերու խիտ — նոյնիսկ խճողեալ — շարքերուն, հո-
գեւոր, իմացական, մտաւորական, սպառնալից կեանքին տնունդ մատակարարող
համեղանաչակ սա խորաթիկներուն:

— Հայկական հրատարակչական տունները, տպարանները անդուլ կը
թաւալին եւ կ'արտադրեն:

Հայ Գիրքը կը հրճուի իր գոյաւորման ընթացքին մէջ:

Ո՛ր է տագնապը, ուրեմն:

— Տագնապին պիտի հանդիպին մեր աչքերը գրապահեստներուն
մէջ... Ետեմարաններու մէջ զիջուած են գիրքերը: Կր տառապին մինակու-
թենէն: Քով քով են շարուած, իրարու վրայ են զետեղուած: Փոշին ցկսած
է հանդիստ տեղ գտնել անոնց վրայ: Տեղունացումը իրենց սպիտակ էջե-
րուն՝ խոր կը խոցէ իրենց հոգին: Այո՛, գիրքերը հոգի՛ ունին. կը զգան.
իրենց զգալը դուք կը զգաք այն տունն միայն, երբ ձեր ձեռքերը հպին ա-
նոնց, ձեր աչքերու լոյսը իջնէ անոնց վրայ եւ ձեր միտքերն ու հոգիները
հաղորդուին անոնց հոգիին հետ, միախառնուին ա՛յն ապրումներուն, պաղա-
փարներուն, ճամարտութիւններուն, որոնք իրենց մէջ մարմին են զգեցած
ճառագայթումներովը զրոյններուն:

Անոնք ալ տուն կը փնտռեն, տաք օճախ եւ դուրգուրտ ձեռ-
քիւր: Ինչպէս մարդուն, նոյնպէս եւ մարդն արտայայտող գիրքին համայն
լքուածութեան զգացումը մահէն աւելի ծանր զգացում է: Երբ մարդ որք մեայ
մարդէրէն, զուրկ մնայ երկրի մը ջերմութենէն՝ կենդանի մեռեալ մըն է.
կեանքն անոր համար՝ զերեզմանէն աւելի դաժան, խոժոռ ու մռայլ պարու-

նույն մըն է՝ Գերեզմանին մէջ գէթ հանդիստ կը գտնէ՝ լքուածութեան վիճակին մէջ անձկութիւնը, անյուսութիւնը իր դժոխքն են երկրի վրայ։ Շտեմարանը չէ՝ Հայ Գիրքին տունը։ Ձեր տունն է իր տունը, իր տեղը, իր հասցէն։ Հայ Գիրքը Հայ մարդը կը փնտռէ։ Վերջո՛ւ զիս ծնաւ Ս. Մեսրոպ», կ'աղաղակէ, «եթէ զիս պիտի լքէին մեարդածին Հայ ազգին այսօրուան գաւազանները»։

Ընթերցո՛ւմ, ընթերցո՛ւմ, ընթերցո՛ւմ...

Ահա՛ փրկութիւնը Հայ Գիրքին, ահա՛ բուն իսկ կեանքը հայկական մատենաներուն։ Ահա՛ նաեւ փրկութեան ու կեանքի ճամբան Հայ մարդուն։ Ի՞նչ հոգեկան պայծառակերպող զօրութեամբ օժտուած գործօնութիւն է ընթերցումը մարդէակին համար։ Գիրքերու հետ մտերմիկ զրոյցը հոգեկան վայելքի աղբիւր է, մտաւորական ինքնահարստացումի կենսունքաց եւ ազգային ինքնագիտակցութեան ամրապնդումի դարբնագործութիւն։ Այն մարդը եւ այն ազգը, որ կը կարսնին զիրքէն աշխարհէն՝ շոք անապատ ու տափառտան կը կը դառնան, ուր միայն փուշն ու տատաւը, օժն ու կարիճը տուն կը գտնեն... Գիրքի աշխարհին մէջ ապրող մարդն ու ազգը իրենց կեանքը անուր կը վերածեն, ուր կենդանութիւնը կանաչալաւ կերպարանք կը զգեն ու պտղաւորաւ բեղմնաւորութեամբ կ'իմաստաւորուի եւ հրուսալից կենսաբովանդակութեամբ կը գեղեցկանայ։

Այս է պատմութեան վճիռը։ Այս է եղած յառաջդիմութեան ճամբան։ Որեւէ այլ փաստարկութիւն ընդդէմ այս ճամբարութեան՝ սոփեատութիւն է պարզապէս։

Վերջերս համաշխարհային վարկի հասած վիպագիր մը կը կարգայի — Morris West —, որ գիրքի մասին կարճ տողի մը մէջ ամբողջ այս ճամբարութիւնը կը խոսացնէր՝ հետեւեալ սեղմ լատերով. «Կրնամ զայն այլիւր թայց չեմ կրնար զայն մտնել»։ Գիրքը այրելը, զիրքը փճացնելը ամէնէն դիւրին գործն է։ Լուցկին տուր եւ զիրքը մոխիր կը դառնայ։ Քի՛չ գիրք այրեցին մեր թշնամիները Հայաստան աշխարհին մէջ... Բայց կարդացուած գիրքը չի՛ մոռցուիր։ Կը խառնուի մարդուն էութեան հետ, կը տարբանայ անոր կեանքին երանկներուն մէջ եւ կը դառնայ նոր գիրքերու ստեղծման աւել։ Կարգալ՝ գիրքը կեանքին խառնել, գիրքով աղնուանալ, անմահութեան երթին թափօրակից դառնալ կը նշանակէ։ Աւելի խորատես հայեացքով՝ դարձեալ կեանքի իմաստութիւնը մեր այսօրուան կեանքին մէջ ներկայ ընկուած ամէնէն ազգու միջոցն է ան։



Այս բոլորով հանդերձ, պէտք չէ մոռնալ, որ գիրք կայ եւ՝ գիրք կայ...։ Ամէն տպուած հատոր անպայման գիրք չէ այս բառին խորագոյն եւ նուիրական իմաստովը։ Գիրքերու մէջ ընտրութեան հա՛րց կայ, մտնաւոր այսօր, երբ աշխարհը ողողուած է գիրքերով, եւ Հայ Գիրքի անգառաւանին մէջ ալ դրելը եւ հրատարակելը երբեմն դարձած են աշխատանքի արգիւնք եւ փառասիրական ու շահադիտական աղղակներէ եւ նպատակներէ թելադրութեամբ գրաւոր եւ տպագրական գործօնութիւն։ Գրական քննադատութեան մարդը յաճախ պատուած վիճակ մը ունի այսօր հայ գիրքի մասին կալին մէջ։ Ամէն տեսակ գիրք, որ գիրքի արտաքին ձեւ ունի՝ կ'անցնի այդ թաղէն։ Մտնաւոր՝ երբ անհատներ փորձեն անձնական շահադիտական ախորժակներու ծառայեցնել Հայ գիրքը, այն ատեն գիրքի այն նուիրականութիւնը, որ հայը ճանչցած է հայերէնով գրչադրութեամբ եւ տպագրութեամբ գիրքին հան-

digitised by A.R.A.R.®

զէպ՝ կը կորսուի եւ գիրքը կը դառնայ վաճառականական ապրանք, յաճախ լիւթերով կամ յակումայից, դժգոհութեամբ գնուելու դատապարտուած:

«Ինչ է գիրքը», հարց կու տայ համաշխարհայնորէն ճանչցուած կեանքի իմաստասէր մը՝ Էմերսոն: Ու կը պատասխանէ. «Ամէն ինչ, կամ՝ չէ՛րինչ: Ամառ հայոդ աչեքն են համայն ինչ»: Կարդացողը, տեսնել գիտցող, ընտրել կրցողն է, որ գիրքին բուն էութիւնը կը չինէ: Գիրքը կը գոյաւորուի մարդուն համար՝ մարդուն մօտեցումովն անոր:

Զմոռնանք. հայ ժողովուրդին կեանքին մէջ գիրքը ծնած է Սուրբ Գրքով, Աստուածաշունչ մատենով: Հայ Գիրքը ստացուած է երկրիւնքէն եւ կամ երկնուած է երկնայնացած միտքին մէջ հայոց երկրէն ծնած եւ երկիրը երկրիւնքին կամարակապած մարդու մը տեսիլքին մէջ: Եթէ Երբայեցի ժողովուրդը իր Օրէնքը երկրիւնքէն առաւ՝ Սինայի բարձունքէն զայն պոկելով, հայ ժողովուրդը իր Գիրքը երկրիւնքէն ստացաւ՝ Ս. Մեսրոպի աշգրէն զայն քաղելով...: Այս տեսլապաշտական ճամբարութիւնն է, որ կը հռչակէ սրբազան հայ վարդապետը, երբ Ս. Մեսրոպին ձօնուած իր շարականին մէջ խօսքը Սուրբին ուղղելով կը ներբողէ երգաձայն.

«Նմանեալ Մովսէսի Տէր Վարդապետ,
Բերելով ըզգիր օրինաց ի Հայաստան աշխարհ,
Որով լուսաւորեցան ազգ արգաւց Թորգոմայ»:

Այո՛, սրբութեան, նուիրականութեան օծումն ունի իր մէջ Հայ Գիրքը: Գիրքը գիրքէն աւելի բան մըն է հայուն համար, մանաւանդ՝ Սփիւռքի անհոգ եւ անյատ հայութեան համար:

Հայրենիք է գիրքը:

Վարդանանց բանակ են հայ տառերը:

Խորենացիական պատգամ են հայ պատմախօս մտտեանները:

Նարեկեան աղօթք են հայ բանաստեղծութիւնները:

Երգի բարձրացած մեղեդիներ են Շնորհալեան տաղերը:

Զգո՛յ՜ լոկեր, հայ մարդ, երբ կը նայիս Հայ Գիրքին ու Հայ Գիրքին: Մաքրէ՛ ձեռքերդ, երբ կը մօտենաս անոնց եւ կամ երբ գրիչ կը շարժես: Մտքէ՛ աշգրէդ, երբ նայիս ու կարդաս զանոնք: Ընտրէ՛ ցորենը որոճէն եւ գիտցի՛ր այնպիսի հայ գիրքի հետ բարեկամանալ, մտերմանալ, որ քեզ կը բարձրացնէ, կը մօտեցնէ Աստուծոյ, կը շաղախէ հայրերուդ ոգիին հետ, կը լուսաւորէ ճամբող եւ քեզ կ'առաջնորդէ դէպի պայծառ հորիզոններ:

Իմ ականջիս միշտ կը հնչեն ու թող ձեր ականջին այսօր հեղ մը հեւ հնչեն այժմ հրեշտակներու մեղեդիին հետ տարրալուծուած ձայնը անմահանուն Զարեհ Ա. Կաթողիկոսին, երբ 19 տարիներ առաջ երկրաւոր իր բամբ ձայնով, Ս. Մեսրոպ Մաշտոցի 1600ամեակին առիթով իր խօսքը կ'ուղղէր հայ ժողովուրդին վրդովուած հոգիով՝ ի տես Հայ Գիրքի եւ հայ լեզուի չորս գործածութեան...:

«Մտահան պէտք չէ ընել, երբե՛ք, որ երկարատեւ խոկումը, ներշնչումը ու հոգեկան երկունքի արդիւնք հղող հրաշալի գիւտը Ս. Մեսրոպի, հիմնական նպատակ ունէր Աստուածաշունչ մատենանի հայերէն թարգմանութիւնը, որպէ՛սզի այդ ճամբով հոգեպէս եւ մշակութի մարդէն ներս ի մի գային Հայաստան աշխարհի բոլոր բնակիչները: Երեւուն եւ վեց տառերը հայոց լեզուին զարձան անխորտակելի կնիքը մեր ազգին ու անոր յաւիտեականութեան գլխաւոր

digitised by A.R.A.R.®

երաշխիքը: Ուստի, ամենակապակցված Ֆլամարտուքում է, որ մեր գիրքերը հ՛արանցան սուրբի մը կողմէ եւ սուրբ թղտակներու իրազեկութեամբ համար միայն: Ու մենք չունինք իրաւունքը, երբե՛ք, դանոնք զործիք զարձնելու անտուրք մտածումներու տարածման համար: Ու հայ ազգին հանգչող դաւաճանական աններելի արարք պէտք է նկատուի միայն, եղբայրութիւն եւ սէր յառաջացնելու մաքուր նպատակով հնարուած տառերը ծառայեցնել լրացումով, խոսկալութեամբ եւ քայքայումի աւերիչ մտածումներուն: Մեր գիրքերը չեն հնարուած սուտ կամ հայհոյութիւն արտելու համար ու անոնք պէտք է միայն որբութեան իրենց վիճակին մէջ: Զանոնք գործածող սպասարկումները մշակոյթի եւ յատկապէս մամուլի պայտարկումները, պէտք է երկիւղածութեամբ ու խանգարից բծախնդրութեամբ մտնենք անոնց, եւ զանոնք ծառայեցնեն Ֆլամարտութեանց հաշակութիւն, աստուածային պատուէրներու տարածումի եւ ազգային մեր առաքինութիւններու անաղարտ պահպանումի համար միայն: Ս. Մեսրոպ Մաշտոց եւ Թարգմանիչ վարդապետները մեր, կրնայի՞ն հախառնել արդեօք վիճակը մաքրամաքուր եւ սուր մեր գիրքերուն, եւ բարոյական մակարդակը մեր օրերու հայ մամուլին...: Վստահ ենք, որ անոնք, ի տես մեր ներկայ ողբալի կացութեան, որդար ցատուով մը պիտի հոգեպէս ցնցէին իրենց ծանր պատասխանատուութեան անգիտակ բոլոր շարաշահները գրի եւ գրչի, անոնց հոգեկան ականջն ի վեր պոռալով. «Վա՛յ այնքան, որ գրեն գլարիս» (ԵՍԱՅԻ, Ժ. 1):

✽

Հիմա Հայ Գիրքին ու Հայ Գիրքին դիմաց կանգնած ես, հա՛յ մարդ, Հայոց վանքի այս դրանակետը բակին մէջ: Մօտեցի՛ր անոնց, դիտե՛ր երկար, ձեռնէ՛ հանդարտ, ա՛ռ, քո՛ւկդ ըրէ՛, տո՛ւնդ տար, բա՛ց զաւակներուդ աչքերուն առջեւ, խօսէ՛ անոնց հետ երեկոյեան հանդարտ մէկ պահուն, երբ օրուան խոնջէնքէն պարտասած՝ տուն կու գաս ու պատաս մը հաց կ'ուտես զաւակներուդ հետ: Մի՛ մոռնար Հացեկացի վարդապետին խմորէն եփուած ու միշտ եփուող այս հացը հայասնունդ:

Այսօր տանդ մէջ ռատիօ ունիս. ունկնդրէ՛ երբեմն: Թեյէ՛վդիտն ունիս՝ նայէ՛ երբեմն, վիտէօ ունիս, դիտէ՛ երբեմն: Բայց ըլլա՛յ, որ ականջներդ ու աչքերդ դամուած մնան եւ միտքդ ու հոգիդ գնի տաս անոնց: Աչքերդ կը ցտիւն: Հոգիդ կ'աղտոտանայ: Միտքդ կը դունտթափի: Կեանքդ կը մակերեւսայնանայ: Աչքերդ կ'աղտոտած պահէ՛ ա՛յն գիրքին, որուն համար երբ թուղթ պակսեցաւ՝ հայ մայրը աւագը թուղթի վերածեց, երբ դպրոց պակսեցաւ, անապատը դպրոցի վերածեց՝ Տէր-Զօրի իր հոգեվարքին մէջ հայուն գիրքին հոգեվարքը շտեմելու համար...:

Երբ այս վանքէն հեռանաս այսօր՝ մինակ չմնաս, որք չմնաս Հայ Գիրքէն. ան քեզի ըլլա՛յ ուղեկից ու խօսակից, եւ զաւակներուդ համար ուղեցոյց եւ ուսուցիչ՝ Հայոց Մեծաց Ուսուցչապետին յաւերժական աշակերտութեանդ մէջ:

Խոնարհի՛ր գիրքին առջեւ, որպէսզի բարձրանաս գիրքով...: Աշակերտի՛ր Հայ Գիրքին, որպէսզի աշակերտես զաւակներդ հայ գիրքով:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԱԹՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

digitised by A.R.A.R.®

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ ԵՒ ՏԱԳՆԱՊԸ

ՎԱՌՈՒՑԱՑՈՒՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լանկաժը, ինչպէս տեսանք, դրութիւն մըն է նշաններու, որոնք կը հա-
մադատասխանեն հնչիւններու ու ձայներու, եւ որոնք, իրենց կարգին, կը
կազմեն խօսքին բաղադրիչ մասերը:

Լանկաժին միջոցով մարդ արարածը հաղորդակցութեան մէջ կը մտնէ
իր շրջապատին հետ, կ'արտայայտէ իր հրահանգները, իր պահանջները,
բայց նոյն տանն այդ լեզուն, այդ լանկաժը իրեն արտայայտել կու տայ դա-
դարներ, որոնք նախապէս իրեն անծանօթ էին: Այսինքն՝ լեզուն հաղոր-
դակցութեան միջոց է, արտայայտութեան միջոց է եւ ստեղծագործութեան
բանալի:

Լանկաժին այս բաղադրան յատկութիւնները որոշ չափով գուշակած
էին լեզուաբանները, բայց լանկաժին կարողութիւնը յայտնաբերողները ե-
ղած են հոգեկերտածողները:

Լանկաժին, այսինքն՝ քանի՞ն կարողութեան փաստերը շատ են հին ա-
ռասպելներու, սուրբ գիրքերու եւ նաեւ նախնական ժողովուրդներու աւան-
դութիւններուն մէջ: Բառը իր մէջ կը պարունակէ մոզական եւ ստեղծագոր-
ծական ուժ մը, որ ընդհանրապէս կախում ունի զայն արտասանողին յատ-
կութենէն, բայց երբեմն՝ իր կազմէն եւ պարունակած գաղտնիքէն:

«Ծննդոց»ի մէջ, երբ Աստուած կ'ըսէ «Թո՛ղ լոյս ըլլայ», անմիջապէս
դոյութիւն կ'առնէ լոյսը: Աւետարանին մէջ, երբ Յիսուս բարձր ձայնով կը
հրամայէ «Տալիթա կու՛մի», մեռած պարմանուհին յարութիւն կ'առնէ: Հոս
հարկաւ կարեւոր է այդ բառերը արտասանողին ինքնութիւնը, այսինքն՝
Աստուած եւ Աստուծոյ Որդին:

Սակայն կը պատահի, որ հասարակ մահկանացու մը, եթէ կտրենայ
պէտք եղած առողջանութեամբ հնչելի գաղտնի բառը՝ կ'իրագործէ ա՛յն՝ որ
պիտի իրագործէր այդ բառը ստեղծողը: Այս ուղղութեամբ, ամէնէն ծանօթ
օրինակը կը գտնուի «Ալի Պալա եւ Բառասում քոզերը» հեքիաթին մէջ: Երբ
գողերուն մեծը, կանգնելով քարայրի մուտքին առջեւ, կը հրահանգէ՝ «Աեզա՛մ,
բացու՛՛», գանձերու քարայրին դուռը ինքնիրմով կը բացուի: Արդիւնքը նոյ-
նը կ'ըլլայ, երբ Թշուառական Ալի Պալան, որ լսած էր այդ բառը աւազակ-

հերոս պետիկ բերնէն, կանգնելով քարայրին առջեւ, կը հրահանգէ՝ «Մեզա՛մ, րացուէ՛ն, առանց հասկնալու իր արտասանած բառերուն իմաստը:

Եթէ անցնինք արդիական ժամանակներուն, ուրկէ բացակայ է նուիրականութեան եւ հրաշքի գաղափարը, կրկին կ'անդրադառնանք լեզուին, բառին ամենակարողութեան:

Մեր արդի ժամանակներու հրաշագործները գիտնականներն են եւ, մա՛նաւանդ՝ հոգեվերլուծողները եւ հիփնոսացնողները:

Երեսունական թուականներուն անկողունէ հիփնոսացնող մը իր տիրապետութեան տակ առած էր զգայուն եւ ամուսնացած մանկամարդուն մը եւ անոր դիտակցութիւնը արգելափակած էր տեսակ մը ամբողջ մէջ, որուն երեք դուռներուն բանալիները երեք շինծու եւ արտառոց բառեր էին: Այդ բառերը գիտէին միայն հիփնոսացնողը եւ մանկամարդուն: Երբ հիփնոսացնողը այս բառերէն մէկը կամ միւսը կ'արտասանէր, մանկամարդուն կը զործէր ուսուոր արարքներ: Առաջին բառը սեռականութեան բանալին էր: Մանկամարդուն, որ պարկեշտ կ'էր մըն էր, կը դառնար պերճադէմ եւ կը յանձնուէր իրեն անծանօթ տեւէ մարդու, զոր կը ժամանէր հիփնոսացնողը եւ կը դանձէր մանկամարդուն անպատուութեան զինը: Եթէ հիփնոսացնողը երկրորդ բառը արտասանէր, կը բացուէր անձնասպանութեան դուռ եւ մանկամարդուն կը նետուէր դեռ կամ պատուհանէն վար: Երրորդ բառը կը բանար մահուան դուռը, այսինքն՝ մանկամարդուն կը փորձէր սպաննել հիփնոսացնողին կողմէ մատնանշուած անձը, նոյնիսկ եթէ այդ անձը կենդանի էր:

Հրաշագործ հոգեբոյ մը քննեց մանկամարդուն եւ հասկացաւ անոր վիճակը: Ինչ եւս զիմեց հիփնոսացման եւ, բազմաթիւ փորձերէ ետք, կրցաւ գտնել այդ բառերը, որոնք կը բանալին մանկամարդուն ներաշխարհին դուռները: Այսպէսով կարելի եղաւ քողազերծել այդ անկողունէ հիփնոսացնողը եւ զայն յանձնել արդարութեան: Մանկամարդուն վերադարձած էր իր բնականոն կիսանքին:

Ուրեմն՝ վերլուծելով ու մեկնաբանելով հեղինակի մը գործը, արդի քննադատութիւնը կ'աշխատի երեւան հանել այդ գրութեան զանազան իմաստները եւ հեղինակին ներաշխարհին գաղտնիքները:

Հարկաւ բոլոր գործերը շունին իմաստի այդ հարստութիւնը, ուստի՝ պէտք է լուս հոտառութիւն ունենայ եւ ընտրել լաւագոյնը:

Հանկաժի մեծագոյն տեսարաններէն մէկը՝ Ռուլան Պարթ, կուսուցային մեկնաբանութեան ենթարկած է Հոնորէ աը Պալպէի շատ քիչ ծանօթ: Բայց խորք ունեցող «Աստագին» պատմուածքը:

Այս ընտրութիւնը դիպումածի մը արդիւնքը չէ, որովհետեւ ուրիշ շատ մը հեղինակներ ունին նման խորք ունեցող խորհրդաւոր պատմուածքներ: Ոստըր ասանք Ռուլան Պարթի:

«Շատոնց կը փափաքէի վերլուծել կարճ պատմուածք մը իր ամբողջութեամբ մէջ: Այդ օրերուն սեղանիս վրայ ունէի ժողովրդական «Ներկնէի կապուտը» հատարը: Ձայն քթաւսելու պահուն, այժիս գարկու էր մը, ուր տըրւած էր գործերու ցանկ մը: Այդ էջին մէջ ժողովրդական Պաքայ կ'ըսէր:

«Ամէն մարդ կը սիրէ պատմութիւնները, վեպերը, որոնք իրեն կը յայտնաբերեն կեանքին քաղցրեւ ճշմարտութիւնները: Այդ պատմուածքը, որ գրուած է հեղինակին կատաղութեամբ մէկ պահուն, կը յայտնաբերէ անսանձամբ կարելիութիւններ: Հեղինակը, անկարելի տառապանքներ հեղինակին կու տայ միջոցը (ուսանելու այն հետաւոր տեսիլքը, որ կ'անկախաբար ընթեր-

ցողին կողմէ: Եւ յափշտակութեամբ կարգացուած այս գործերը միայն ընթերցողը դէմ յանդիման կը բերէ ճակատագրին հետ:

Յետոյ՝ Ժորժ Պարթայ կը ներկայացնէ այդ յատկութիւնները ունեցող գործերու ցանկ մը, որոնցմէ կը յիշենք Էմիլի Պրոնթէի «Ողորտացող քարձուռներ», Քաթրինայի «Դատարարութիւն»ը, Սթանտալի «Կարմիրը եւ սեւը», Տօսթոեւսկիի «Ապաշխար», Պալզաքի «Սատագին»ը եւ շատ մը ուրիշ գործեր:

Երեսուն էջ հաշուող այս հատորը մեկնարկանելու համար՝ Ռոլան Պարթ գրած է ամբողջ հատոր մը, որուն մէջ գործը կը վերլուծէ նախադասութիւն առ նախադասութիւն:

Վերլուծումի տրամանի գրութիւնները Պարթ կ'որակէ «յազմակի գրութիւն»: Պարթ կը ժխտէ նաեւ դպրոցներու մէջ ցարդ կատարուած մեկնաբանութիւնը, որ Հիմնուած էր պարբերութիւններու վրայ: Ինչ կը գոհանայ նախադասութեամբ մը եւ նոյնիսկ նախադասութեան մը մէկ անդամով:

Մեր նախորդ էջերուն մէջ հակիրճ կերպով տուած էինք «Սատագին» պատմութեան նիւթը, որ հետեւեալն է. Հոռմի մէջ երիտասարդ քանդակագործ մը կը սիրահարի գեղեցիկ երգչուհիի մը՝ Ջամպինելլայի, որ թակայն ընդունելով հանգերձ երիտասարդ քանդակագործին սէրը, անոր հանդէպ ունի խոստափողական եւ անհասկնալի կեցուածք մը: Քանդակագործը կը կասկածի, կը տառապի եւ, վերջապէս, կ'իմանայ, որ Ջամպինելլա ներքինիացած երիտասարդ մըն է:

Իր յառաջաբանին մէջ Ռոլան Պարթ կը յայտնէ, որ գրութիւն մը մեկնաբանելու վերջնական ու կաղտկարուած ձեւ գոյութիւն չունի, որովհետեւ մեկնաբանութիւնը ստեղծագործական արարք մըն է, որ կը կատարուի ընթերցողին եւ գրութեան հեղինակին գործակցութեամբ եւ կրնայ տարբերի մէկ ընթերցողէն միւր:

Ահա մեկնաբանութեան քանի մը օրինակներ, քաղուած՝ Ռոլան Պարթի «S/Z» հատորէն:

«Իւզակկարը կը ներկայացնէր Աստիսը՝ ընկաղմանս անիւծի մորթի մը վրայ: Ձարդախուցին մէջտեղը կախուած եւ ալապատարէ լուսամտի մը մէջ առնուած լամպը այդ նկարը կը լուսաւորէր մեզմ լոյսով մը, որուն շնորհիւ կարելի էր ըմբռնել լկարին քաղաք գեղեցկութիւնները»:

Այս երկու նախադասութիւնները Պարթ կը մեկնաբանէ՝ առանձին-առանձին, ըստ իր մեթոտին: Մենք զանոնք միացուցինք, որպէսզի ընթերցողը իր աչքին առջեւ ունենայ ընդհանուր տեսարանը:

Աւանդական քննադատին համար՝ այս պարբերութեան մէջ արտաստիկոր ոչինչ կայ: Ան պիտի անդադառնայ նախադասութեան կշռութիւն, բառերուն ճշգրիտ գործածութեան եւ միեւրոտին: Իսկ ընթերցողը, նոյնիսկ փորձառու ընթերցողը անոր վրայէն պիտի անցնի արագօրէն:

Հիմա տեսնենք, թէ նոր քննադատութեան այս վաւերական ներկայացուցիչը ինչիւ պիտի գտնէ այդ ըստ տողերուն մէջ:

Լամբին ափուած լոյսը արտաքինն է նկարին, բայց փոխանակական դարձուածքով մը, անիկա կը դառնայ գծուած տեսարանին ներքին լոյսը: Սեղմ ու ճերմակ ալապատարը կը նոյնանայ նկարի լուսնին հետ, որ կը լուսաւորէ երիտասարդ Հովիւը: Այսպէսով, Ատոնիս կը դառնայ լուսնային տարփածուն: Սակայն Ատոնիսի այս նկարը, ներշնչած է դիպապաշտ նկարչութեան վարպետներէն Ժերմէի հանրապետական Վանիմիանի Բուլը: Փիւնիկեցի երիտասարդ դաստիարակ, Ատոնիս, սիրուեցաւ Աֆրիթիտէի կողմէ՝ Աֆրեայի անտառներուն մէջ. իսկ երիտասարդ յոյն Հովիւը՝ Անտիմիոն սիրուե-

ցում Սելենէ կամ Արտեմիսի կողմէ՝ Հիլլադայի լեռներուն մէջ: Սելենէ աստուծուհիին խորհրդանշանը լուսինն է: Անտիմիոն այնքան զեղեցիկ էր, որ Սելենէ Զեւսէն խնդրեց, որ անոր պարգեւէ յաւիտենական քուն, որպէսզի ան մնայ մէկա երիտասարդ ու գեղեցիկ:

Ասկէ մեկնելով՝ Թրուան Պարթ Հանդիսութիւն մը կը տեսնէ Ատտիսի նկարին եւ Զամպինելլայի միջեւ, որուն կը պատկանէ այդ նկարը եւ զարգացումը: Անտիմիոնի վերածուելով՝ Ատտիս բուն մը կը կորսնցնէ իր անակնթիւներէն: Անտիմիոնի անշարժ մարմինը կանացիութեան պատրանք մը կը ստեղծէ: Անոր մազերը երկար են ու դանդաղ եւ մարմնին գիծերուն մէջ տիրապետող կորութիւնն է, այսինքն՝ ունի կանացի մարմնին յատկութիւնները: Անոր մորթին զոյնը ճերմակ է, ինչպէս էր մորթը այդ օրերու կիներուն եւ երիտասարդներուն, որոնք կը կրէին երկար մազեր: Սիրոյ չարածճի աստուածը՝ Էրոս, վերցուցած է այն ճիւղերը, որոնք կը ծածկէին անոր մարմնին վարի մասը, սակայն անոր սեռային անդամը անորոշ կը մնայ, որովհետեւ Ժիրոտէի Հանճարեղ վրձինը շուքի մէջ ասած է զայն: Ժիրոտէի Անտիմիոնը, որուն սեռը անորոշ կը մնայ, կը պատկերացնէ ուրեմն Զամպինելլային, որ ամէն զնով կ'ուզէ զազանի պահել իր իսկական սեռը:

Սելենէ, այսինքն՝ լուսինը, գիւերով կ'այցելէ իր քնացած տարփածուն: Անոր լոյսը կը փայփայէ երիտասարդին ճերմակ ու ինքնամատոյց մարմնին: Լուսինը, Թէեւ էգ, որդեգրած է ներգործական դեր, իսկ Հոմիւրը, Թէեւ արու, կը դառնայ կրակոտական դիւրի մը մէջ:

«Երիտասարդ ֆանդակագործին զգայարանները առաճգակամացամ փամփլիլի երաշալի երգին շեշտներէն: Հարաւորօրէն ընդելուզուած իտալական այս ձայններուն (աւագուն ինքնատուփիւնը զինք պարտիցիմ զգլխի յափշտակութեամ մը մէջ»:

Իտալական երաժշտութիւնը ձայնի արուեստ մըն է: Թէեւ Էրաթիք արտայայտութիւն մը, իտալական զգայական այդ ձայնը կ'արտադրուէր կրտուած երգիչներու կողմէ: Այս երգիչներուն խլուած սեռականութիւնը կը կեդրոնանար իրենց հագագին մէջ, եւ սրահներու մէջ կը ստեղծէր էրոթիք մոլեգնութիւն մը: Քանդակագործ Սառապին սիրահարած է Զամպինելլայի մարմնական կառարելութեան, բայց անոր ձայնն է, որ իրեն հնչեցնէ կը պատճառէ:

Կիմէ մը աւելի բան մըն էր, ցլախ-գործոց մը:

Գեղեցկութիւնը ամբողջութիւն մըն է, որ չի կրնար նկարագրուիլ մէկ անգամէն եւ բացարձակ կերպով: Գեղեցկութիւնը կը լրացնէ զինք՝ դիտողը եւ կը հիփոսացնէ: Հեղինակը կը ստիպուի զայն վերածել մասերու եւ նկարագրել այդ մասերը: Մէկ խաղով՝ Հեղինակը կը ստիպուի գեղեցիկ մարմնին ճնթարկել սքրիպ-քիպի: Մանրամասնութիւններու նկարագրութիւնները երբեք չեն յանդիւր ամբողջութեան մը, այլ կը բարդութիւն իրարու վրայ: Գեղեցկութեան ամբողջական դադարաւոր տալու մէկ ելք միայն կը մնայ հեղինակին, իր նկարագրելէք մարմնին նմանցնել արուեստի գործի մը, աւելի ճիշդը՝ արուեստի ծանօթ գլուխ-գործոցներուն: Եւ երբ յափշտակութիւնը հասած է զազաթնակէտին, հեղինակը կ'երթայ աւելի հեռու, ըսելու համար, որ իր պաշտած Զամպինելլայի մարմնին գլուխ-գործոց մըն է, բացարձակ գլուխ-գործոց մը, այսինքն՝ այն նախատիպերը, որ օրինակ ծառայած է արուեստի գլուխ-գործոցներուն:

Այսպէս, Թրուան Պարթ 220 էջոց գիրք մը գրած է՝ մեկնաբանելու համար 30 էջոց գործ մը, հաստատելու համար Փօլ Վալերիի այն խօսքը, Թէ

«Բնագրաբանը գրականութիւն ըմբել է գրականութեան վրայ»։ Նոր քննադատութիւնը կը զանազանուի աւանդական քննադատութենէն իր հետապնդած նպատակով։ Նոր քննադատութիւնը նոր գործ մը կը ստեղծէ՝ մեկնելով գոյութիւն ունեցող գործէ մը։ Իսկ ընթերցումը նաեւ պէտք է ըլլայ ստեղծագործական, գիտակից ընթերցողը, այսինքն՝ քննադատը պիտի չհետեւի հեղինակի քայլերուն, այլ պիտի տեսնէ զայն եւ թափանցելով գործին մէջ, նոր գործ մը մէջտեղ բերէ։ այնպէս որ՝ իւրաքանչիւր ընթերցողին մեկնաբանութիւնը պիտի ըլլայ միւսէն տարբեր, որովհետեւ, ինչպէս կը գրէ Յեան Թոտորով։

«Գրական իւրաքանչիւր գործ կառոյց մըն է, որ կրնայ մեկնաբանուիլ բազմաթիւ ձեւերով։ այդ մեկ արանաբանները կախում ունին անոնց քանաձեւումի վայրէն, քննադատի խառնուածքէն, գեղագիտական տեսութիւններէն։ Ժամանակակից ազգութիւններէն, եւ այլն։ Միւս կողմէ, մեր պարտականութիւնն է տալ նկարագրութիւնը սնամէջ այդ կառոյցին, զոր կը լեցնեն Բնագրաբաններու եւ ընթերցողներու մեկնաբանութիւնները»։

Իր գիրքին յառաջաբանին մէջ, Ռուս Պարթ կը ճշդէ արդի քննադատութեան չափանիշը, որ տիպար միօրինակութիւնը չէ, այլ՝ այլազանութիւնը։ Ուսումնասիրելէ ետք գոյութիւն ունեցող պատմութեան քննադատական քննադատները կ'ուզէին ստեղծել տիպար պատմութեան մը կազմակերպում, ինչպէս գերմանները ունին խառնաբառէ կազմակերպումը, զորս կը զետեղեն կերպարին միջոյ, զայն կտրելէ առաջ։ Մինչդեռ, կ'ըսէ Պարթ, ասիկա կը սպաննէ գրութեան այլազանութիւնը, որ անոր գլխաւոր յատկանիշն է։

Բայց ինչպէ՞ս գնահատել գրութիւն մը, ի՞նչ չափանիշ գործածել։ Գրութիւնը։ Բայց գիտութիւնը չի գնահատեր։ Գաղափարը։ Բայց գրութեան մը բարոյական, գեղագիտական, քաղաքական երանդը անոր էութեանն է, այլ՝ անոր ցոլացումը։ Ուրեմն, կը մնայ գրութիւնը, իր էութեամբ, անձնատ հեղինակին խառնուածքէն եւ զարգացումէն ներքէն։

Բայց երբ գրութիւնը բառերու հիւսք մըն է, ապա ուրեմն ո՞ւր փրկուի անոր արժէքը։ Այս հարցումին պատասխանը կը հանդիսանայ արդի գրութեան քննադատութեան հիմքը։ Ըստ Պարթի, մէկ կողմէ կայ ա՛յն՝ որ կարելի է դրել, իսկ միւս կողմէ ա՛յն՝ ինչ որ կարելի չէ գրել, այսինքն՝ ա՛յն, որ գլորդի մը սահմաններուն մէջ կը գտնուի եւ այնինչ սահմաններէն դուրս կու գայ։ Ուրեմն, գրութեան մը արժանիքը կը սահմանափակուի առաջին մասին մէջ, որովհետեւ գրականութեան նպատակը ընթերցողին հրամցնել է ո՛չ թէ սպասումի արտագրութիւն մը, այլ այդ ընթերցողին հրամցնել աշխատանք մը, որմէ մեկնելով կարենայ ստեղծագործել։

Մեր գրականութիւնը, կը շնչտէ Ռուս Պարթ, կը յատկանշուի արդի կտրուկ ապահարգանով, որ գոյութիւն ունի հեղինակին եւ ընթերցողին միջեւ։ Ընթերցողը պէտք է ըլլայ ստեղծագործող մեկնաբան մը եւ ոչ թէ ծոյլ սպասող մը։ Գրութիւն մը մեկնաբանել չի նշանակեր անոր տալ իմաստ մը, ոչ չի՝ զանազանել անոր բազմակողմանիութիւնը։

Կը կարգած գրութիւնը։ Կարողալը պէտք չէ ըլլայ մակարոյթ գործադրութիւն մը, նախորդութեան եւ ստեղծագործութեան համառով զարգացում գրութեան մը ամբողջացումը։ Կարողալ՝ կը նշանակէ իմաստաւորել, եւ իմաստաւորել՝ կը նշանակէ ունենալ։

Գրութեան մը բազմակողմանիութիւնը վեր առնելու համար, պէտք չէ նկատի առնել անոր ամբողջութիւնը եւ կամ ծաւալուն պարբերութիւններ, այլ՝ սահմանափակ կառոյցներ, տող մը, նախադասութիւն մը եւ, նո՛յնիսկ, նախադասութեան մը մէկ մասը։

Ռուսյան Պարթ էր այս տեսութիւնները գործադրած է Պալլաքի «Սառա-
զիմ» պատմութեան մէջ և տուած է հարուստ եւ հիւ-
նալի գործ մը, բայց իր առաջարկած այս նոր գրականութիւնը կը յանգի ա-
նելի մը, որովհետեւ իրեն սկստ ընթերցողներ քիչ կը գտնուին: Այն ատեն
գրականութիւնը կը դառնայ ընտրանիի մը, խժրակի մը գրողութեամբ, տեսակ
մը շատիւ-էլիպ, որուն անգամները միանգամայն հեղինակներ են եւ ընթեր-
ցողներ: Մէկ խօսքով՝ գրականութիւնը կը դառնայ գրողութեամբ, ինչպէս
թողթախաղը կամ ճատրակը, եւ անկէ կը դիտուին զանգուածները:

Բարեբախտաբար նոր գրականութիւնը չի սահմանուիր նոր քննադա-
տութեամբ, ուլլ կայ նոր բանաստեղծութիւնը, նոր վէպը, նոր թատրոնը:
Պահ ետեւ հարուստ ենթաէնդ ունեցող ընթացականներ, որոնք անձանօթ կամ
քիչ մշակուած էին ժամանակին, կայ ոստիկանական վէպը, կայ դիտաբե-
ականական վէպը, կայ էրօթիզմը:

Ռուսյան Պարթ եւ իր գաղափարները բաժնողները չեն կրնար ուռերկել,
որ ատենք գրականութիւն չեն, չեն կրնար լսել, որ սպառումի արտադրու-
թիւններ են ատենք, որովհետեւ հակասած կ'ըլլան իրենց իրենց: Այս ատեն
ալ կարելի է մեկնարանել լանկաթի տեսակէտով:

Եւ յետո՛յ՝ ո՛վ կ'ըսէ, որ այս բոլոր տեսութիւնները զիտի չի-
րարկուին եւ շարքաաւորեն աւանդական կոչուած գրականութիւնը, որ ժխտ
կենդանի է եւ կը շարունակէ իր դարաւոր հոսանքը:

Գրականութիւնը, ինչպէս մարդկային միւս բոլոր արժէքները, ունի
եւ ունեցած է իր երեւելիները: Ներկայիս անկա կ'ապրի տեղատուութեան
չըլլան մը: Բայց մակընթացութիւնը չի կրնար ուշանալ եւ կրնայ ըլլալ աշն-
քան ու թերեւս աւելի զօրաւոր, քան տեղատուութիւնը եւ դերը կրկին կը
յեցնէ իր հուշը, կը յորդի եւ կ'արգասաւորէ գեղաստեղծայն գաղտնիքը:

Ուրեմն՝ արդի գրականութիւնը կ'ապրի տեղատու չըլլան մը, մարդ
արարածը եւս միւրճուած է խուլ տագնապի մը մէջ եւ չըլլապատուած է ժող-
ժաւանդով:

Ո՞րքանք այս տագնապին պատճառը կը տեսնեն աւանդական գրականու-
թեան դէմ մղուած պայքարին եւ անոր արժեքը միւր մէջ, ուրիշներ կը
մտածեն սակայն ճիշդ հակառակը, այսինքն՝ այդ աւանդական գրականու-
թեան հիմը եղող գրեթէ անհիշատակ միջոցները:

Աւանդական գրականութեան առաջին հարուածը տուողը եղաւ վիպա-
պաշտ շարժումը: Դասական լանկաթը այլեւս չի կրնար եւ ժամանակագրիկ
եւ չի համապատասխաներ մեր ձգտումներուն, զգացումներուն եւ յղացում-
ներուն: Եւ վիպապաշտութիւնը կը ստեղծէ իր լանկաթը աւելի ճոխ, աւելի
գոյնաւոր: Սակայն վիպապաշտութիւնը կը նկատէ, որ մարդը աւելի կարե-
ւոր է, քան իր լանկաթը եւ անոր հանդէպ կը սնուցանէ որոշ անտարբերու-
թիւն մը: Լեզուն եր դառնայ որոշ ճամայութիւններ արտայայտող գործիք
մը եւ ասիկա մինչեւ 20րդ դարու կէսերը, երբ կարգ մը մտաւորականներ
եւ գրողներ կը ծրագրեն լանկաթը ազատագրել իր ստեղծութենէն եւ գայն
գարձել անկախ եւ ինքնաբերաւ:

Աւանդական գրականութեան կողմնակիցները կը պահանջեն, որ վե-
րաւերդուին գրականութեան դասական պայմանները: Պէտք չէ կարծել, որ
այս վերջիններս անձանօթ եւ աւանդապաշտ անձեր են, ընդհակառակն, ա-
նոնք ժամանակակից գրականութեան վաւերական դէմքերն են, ինչպէս՝ Արա-
կուն, Փիեռ Էմմանուէլ, Փաթրիս տը յա Թուր տեւ Փէն, Ժիւլիէն Կրաք:

Սակայն շատ մը ուրիշներ կ'արգարացնեն գրականութեան վերջին ձե-

ւափութիւնը, տնոց համար գրականութեան ապագան ապագրական է : Նախընտրելի է, կ'ըսեն, կենդանի, քան մեռած լեզու մը, եթէ հոյնիսկ այդ կենդանի լեզուն չի յարմարիր ունի խաղերուն : Գրողը պէտք է ունենայ իր սեփական լանկածը եւ զայն մաքրագործէ անցեալի հետքերէն :

Այս երկու ծայրայեղութիւնները գրականութիւնը պիտի մզեն անեղի մը : Ասիկա պիտի նշանակէր գրականութեան մահը :

Իր ճիշդամտական նոր գրականութեան համայնապատկերը գործին մէջ, կտէթան փոքրն կ'ընէ հետեւեալ խորհրդածութիւնը .

« Ես չեմ հաւատար վերականգնումներում : Դասականութիւնը չէր մեռնի, եթէ կարենայիմք գայն վերստին ապրեցնել : Արդի գրականութիւնը չի կրնար կրկին գառնալ դասական գրականութիւն մը, որ կը հնագա՞ղի աւանդութեան ճշգրիտ քաժանումներում եւ օրէնքներում :

« Բանաստեղծութեան ապագան իր ձեւին կատարելութեան մէջ չէ, ոչ ալ արձակին ապագան դասական կշռութեամբ նախադասութեան մէջ :

« Սակայն ես չեմ հաւատար նաեւ ապագրական գրականութեան մը բարգաւաճման . . . : Գրականութիւնը կրնայ գոյատևել, եթէ գաշիմք մը կնքէ լանկածին հետ : Այդ գրականութիւն կոչուած թեքնիքը, որ գարնալ հա՞ղիսացաւ մարդկային մտքին պահանջներէն մէկը, կրնա՞յ անհետանալ : Կարծողներ եղան եւ կան տակաւին, որ պատմութիւնը մարդում կը պարտադրէ յաջորդաբար մերժել եին մտածելակերպեր եւ որդեգրել նորեր, բայց նկատուած է նաեւ, որ պատմութեան այդ ձեւափոխութեան հրամայականին, մարդը կը հակադարձէ իր մտքի հիմնական կառոյցներուն պահպանումով եւ գործածութեամբ : Հակառակ չարագոյշակ մարգարէ՞իբու, կրօնքը, աթուեստը, փիլիսոփայութիւնը կը մնան կենդանի, ինչո՞ւ այն ատեն նախադասել գրականութեան մահը :

« Գրականութիւնը եւս կենդանի կը մ'այ վերափոխուելով, եւ այդ ձեւափոխութիւնները ունի ձեւափոխութիւններ եւ : Գրականութիւն չի կրնար գոյութիւն ունենալ առա՞ջ ձգի եւ առանց հոնտութեան, յայց ռըր եւ հոնտութիւնը այլապէս եւ եւ սեփականութիւնը չեն գասականութեան : Իրա՞հանգիստ գրողի կը մնայ ստեղծել իր ուրոյն ռըր, հոնտութիւնը, պատկերները » :

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

(Շար - 4)

Թ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

ԶՕՐԱՅՐ ԽԱԼԱՓԵԱՆՆԻ

«ՄԵՌՆՈՂ - ՅԱՌՆՈՂ»

Յարդ քսան տարեկան գրական գործ
Պժը ունի Զօրայր խալափեան, եթէ նկա-
տի ունենանք իր առաջին վիպակին՝ «Հե-
ղեղ»ին աւարտումը՝ 1961ին: Յաջորդող
գործերը տատնական զարգացում եւ
այլ հարցերու ու թեմաներու այլազա-
նութիւն մը կը բերէին:

Եթէ «Հեղեղ»ն ու «Նրիցուկի քեր-
թիկներ»ը գեղեցիկ, մտածուած ու ոճա-
յին խաղերով արձակի մը տպաւորութիւ-
նը կը ձգէին, «Որտե՞ղ էիր, մարդ առ-
տուծոյ» վէպը իր պարզութեամբ, Երե-
ւանէն հեռաւոր գիւղի մը մէջ ինկած բը-
ժիկի մը պատմութեամբ, արդէն ուշա-
գրաւ իրազօրծում մը կը հշտէր, իսկ «Մե-
րադարձնելով ձեր դիմանկարը», «Մեռ-
նաղ-յառնաղ» վէպերն ու «Ձերմանց միւս-
քարտէքիւն» անուն վիպակները խալափե-
անի անհատականութեան ամբողջական
պատկերը կը յայտնաբերէին:

«Հեղեղ»ը դասական վիպակի մը բո-
լոր յատկանիշները ունի — ուսուցիչին,
բժիշկին, ճարտարապետին ու տիկնոջ
զգուշօրէն կառուցուած տիպարները, խո-
սակցութիւններն ու նկարագրութիւննե-
րը, դիպաւարը, հողեկան հանգոյցները,
հեղեղին տնձրեւոտ գիշերը, հողերանա-
կան պրկումը, հւայլն, ներկայի հողերա-
նութեան ու հարցերուն արձագանգող ու
քիչ մըն ալ քնարական արձակի մը ապա-
ւորութիւնը կը ձգէին ու կը ձգեն:

1962ին աւարտած «Նրիցուկի քեր-
թիկներ»ը կամ Յունանի երեք որդիներ-
ուն պատմութիւնը, իր մուտքով ու ա-
ւարտական բաժինով, որ նոյն նկարա-
գրութեան կրկնութիւնն է, այսինքն՝ հա-

րին սարէն երեւցող ու կարծէք դէպի գիւղ
ուղղուած երեք բարտիներու պատմու-
թիւնը կը յիշեցնէ Յունանի երեք որդի-
ները, որոնք դէպի գիւղ կ'երթան, սո-
կայն երբեք չեն հասնիր... Այս մէկը
եւս, նախորդին մէկ աւելի ամբողջական
միջոցառում ունի: Ժիշէ է, որ պատերազ-
մին աւերչուած գրական ու ժխտական,
սեւ ու հերմակ երեսները կը ներկայաց-
ւին (Յունանի դասալիք երկրորդ որդին,
Մուշիկի զբաւառութիւնները Արմենակի
դէմ, Մինասի մահը, հւայլն), սակայն
Արմենակի ու Հոփոսի մէկ կապին մէջ
կամ Արմենակի ողբերգութեան ու ձգ-
տումներուն՝ յստակ ճիշդ մը կայ կեան-
քը արդիւնաւորելու, դրական կամ շինիչ
ազդակի վերածելու, հւայլն, որ գեղեցիկ
է, սակայն վիպապաշտ յստակ երանգ մը
ունի — օրինակ, Արմենակին ճիշդ թուա-
բանութեան դասաւանդութեան մեթոտը
արդիականացնելու եւ մահուընէ առաջ
իր դասադիրքը հասցնելու...

«Ոսկէ միջինը» (չոյս տեսած «Պատը»
վիպակին ու «Մեռնաղ-յառնաղ»ին հետ,
այս վերջին խորագիրը կրող հատորին
մէջ), իր պահանջներու ու բանտարկեալ-
ներու յարաբերութեամբ՝ արդէն իմացա-
կան ու բարոյական հասկացողութիւննե-
րու հարցադրելու արժանազրութիւն մը կ'ընդ-
գծէ:

«Որտե՞ղ էիր, մարդ առտուծոյ»
(1966) գործը արդէն չունի խորացում
կը բերէ, ինչպէս նաեւ խալափեանի գը-
խաւոր հարցերէն մէկը՝ ժամանակի տապ-
նապը:

Վէպի վերջին պարբերութեան մէջ՝

ահա բժիշկ Ստեփան Եսայանի շիրմաքարը:

«Գրել էիմ ամուսնը, ազգամուսնը, ծր-նրանքս ու մահուան թիւը: Իսկ ի՞նչ էր եղել այդ երկու թիւերի միջեւ: Մի փոքր գլխի վրա դրել:

«Ի՞նչ ոչինչ չի եղել»:

Յայտնական կը սերէ մարդոց «կենսազրույթներ» հետեւիլ: Անկախ հոգեբանական վերլուծութեն, որ մարդու ամբողջ կենսութեն վրայ կ'երկարէ եւ անոր բոլոր շարժումները, վերաբերումներն ու մտածումները կ'ընդգրկէ, յոտակ, մինչեւ իսկ թանձր ժամանակի ազդեցութեան կը հետեւի: Բժիշկ Ստեփանը այդ երիտասարդ տղան չէ այլեւս, որ պարագայաբար զիւզ ինկած էր: Ո՛չ միայն իր սիրած կ'իներ՝ Անտիկը կը մեծնայ, այլեւ կը մեծնան անոր զաւակները՝ Արտուշը, Մարգուշան, Մովսիկը ու կ'ամուսնանան: Պատերազմէն առաջը, պատերազմը, պատերազմէն ետքը, ու նոր սերունդը յետադարձ թնոթողով ու պայմաններով չըրջանան եւ, ուր եւ այս բոլորին մէջ՝ դանդաղ կը մաշի բժիշկին ամբողջ կեանքը:

Տարի մը ետք սուրտած «Պատը» կու գայ բերա իրականութեամբ մը ներկայացնելու հարցերը: Լիպարիտի եւ Ջարուհիի միջեւ երկարող հոգեբանական կռիւ, որ ժամանակի ընթացքին հաղարձեւ կ'անէ, այն տրամաբանութեամբ չի վերջանալ, ինչ որ սովորաբար վիպակներու կամ գեղարուեստական աւանդական ձեւերու մէջ կ'աւարտի... Վիպակին վերջին տողը պերճախօս է այս իմաստով. «... նրանց միջեւ պատմութիւններ կան, ար երբեմն վերաբնութեան այսպէս»: Ասկէ անդին կը սկսին կենցաղային, հոգեբանական ու ընկերային հարցեր դաստիարակութեամբ մը կամ զոյներով ներկայացուիլ:

«Ջերմանց միտքարութիւն» վիպակը նախ այս մթնոլորտէն կու գայ: Պատերազմի հերոսը կամ հերոսուհին ընդհանրապէս իր զրական երեսով կամ պատկերով կը ներկայացուի: Ահա Գայեանէն, Փաշիգի միջոցով պայթարած հերոսուհին,

որուն ամբողջ հոգեբանութիւնը խանգարուած է պատերազմին պատճառաւ, ինչ որ տարբեր պատկեր մը կը գծէ պատերազմի սթերիոտիպ յինձու տիպարներուն դիմաց:

«Մովսիկ»-ը տարբեր պատկեր մըն է այս իմաստով, ուր դասական բարոյախօսութեան ու հայ կնկան տիպարին դիմաց՝ աւելի իրական ու մերօրեայ պայմաններուն ծնունդ կնկայ տիպար մը կը ներկայացուի:

Կենցաղային ու հոգեբանական նորն ձեւի հարցեր կը բերէ նաեւ «Սպիտակ մուկը» խորագրուած վիպակը (1978), որ շատ անուշադակիօրէն, մահացած բժիշկ հօր տիպարին դիմաց կը յիշեցնէ «Որտե՞ղ էիր» բժիշկ Ստեփան Եսայանը:

Սուկայն այս շարքին ամենահետադրեալն է զորքը «Գիգիմ զիկի մօտ» վիպակն է հաւանաբար (1977), ուր կենցաղային իրականութիւնները եւ ինքնաշարժի մը զննում միջին տարիքի եւ այլեւս ամէն ինչի նկատմամբ անտարբեր Գիգիին կողմէ, զայն ամբողջովին տարբեր ու աշխոյժ տիպարի կը վերածեն: Ինքնաշարժը նոր աղբակ կ'ըլլայ Գիգիին համար, որ հոգեմիտումէ մը կ'անցնի եւ կարծէք... նոր երիտասարդութիւն մը կ'ապրի:

Յայտնականի զրականութեան մէջ առանձին հանգրուան է սակայն «Վերադարձնելով ձեր դիմապատը» (1978), որ գրուած է երկու բաժինով: Առաջինը լոյս տեսած է «Նյութական թերթիկներ»-ուն հետ եւ աւարտած 1966ին, իսկ երկրորդ բաժինը՝ 1975ին:

Հարցը միմիայն Մարտի մը, Արփենի մը կամ Լէոյի մը պատմութիւնը կամ յարաբերութիւններու ցանցը չէ, այլ՝ ամբողջ կենսամեծի ու ընկերութեան մը պատմութիւնը, որ շատ ալ զուարթ պատկեր մը չի պարզեր (գուցէ պէտք ալ չունի պարզելու):

Վէպին երկու հանգրուանով հրատարակումը կը նշէ իրականութիւն մըն ալ. կը հետեւինք այս տիպարներուն (կամ սիրունի մը) դարպասներին: Ժամանակային շուրջ տասը տարուան հետաւորու-

Ժամանակին մէջ Թափառող խօսքն է Զորայր Ռալփինի «Մեռնող-յառնող» վէպին մտահոգութեան հիմնական առաջնայքը, սեւեռակէտը: Իսկ Տաւրոսը կամ տարբեր ժամանակներու մէջ ապրած Տաւրոս մը, որ հայ դիցաբանութեան մէջ նշուած մեռնող ու յառնող բնութիւնը մարմնաւորող պատանի աստուածը կրնայ ըլլալ, այդ խօսքին ծնունդ տուող պատճառներէն մէկն է եւ այդ խօսքին բանահաւաքը միաժամանակ:

Եւ արագօրէն ճարտարարուեստականացող ու քաղաքային դարձող ընկերութեան մը մէջ, բանահաւաքները պիտի փնտռեն կորսուող խօսքը հեռաւոր դիւզերու եւ տուններու մէջ, Ժերուէիներու կամ վերապրողներու բերէն: Հարիւրաւոր տարիներ հայ դիւզի կենցաղը մնացած է անփոփոխ, իրեն հետ պահելով սովորութիւններու, զրոյցներու, աւանդութիւններու եւ կենցաղային առանձնայատկութիւններու ամբողջ շարք մը, որ կը կորսուի արագօրէն փոխուող կենսամիջին հետ:

Իսկ հայկական շատուածներու համատեղութեամբ ու ազգային դիւցազնավէպով՝ «Սասունցի Դաւիթ»-ով զբաղող բանահաւաքները պիտի երթան Էպոսին կորսուող պատմիկները փնտռելու Արեւմտահայաստանէն կամ Սասունէն զաղթած վերապրող ծերունիներուն մօտ, եւ կամ՝ վերածնող բնութեան ու արդաստանութեան ոգին խորհրդանշող պատանի աստուծոյ մը հետքերը գտնելու՝ աւանդութիւններու ու բանաւոր խօսքին մէջ...

II.—

Այս իմաստով գրուած գործի մը մէջ տիպարները երկու եզրերու վրայ կարելի է հասկնալ: Առաջին՝ իրրիւ առօրեայի մէջ գործող անհատներ, երկրորդ՝ խորհրդանշական, նոյնիսկ առասպելական եզրով մը, որ կ'առնչուի մեր հեթանոս աստուածաբանութեան հետ. որովհետեւ վէպին գլխաւոր տիպարներուն անունները հայ հեթանոս աստուածներու անունները կը կրեն եւ կը մարմնաւորեն անոնց

հիմնական առանձնայատկութիւնները: Եւ ինչպէս Տիրան տեղ մը կը բացատրէ.

«... Փաստեր կան, որ խոր անցեալում հայերն ունեցել են իրենց սեփական կրօնը, որի հետքերը դեռ կ'ենթադրենք ժողովրդական բանահիւսութեամբ մէջ: Բազմաթիւ գրաւոր աղբիւրներում պահպանուել են գեղեցկութեամբ՝ Աստվիկ, առաքիճութեամբ՝ Արուսեակ, սիրոյ՝ Անանիոս գիցուիմների մանրամասն ճկարագիրները եւ կցկտուր տեղեկութիւններ Վանատուր՝ Ելիւրեմկալ, Տիր՝ զարթութեամբ, Մաժման՝ քրմաց աւ գիտութեամբ հսկանաւոր աստուածութիւնների մասին» (էջ 407):

Տիրը Տիրանով փոխարինելու հանգամանքը, որ խորքին մէջ նոյնն է, ոչինչ կը փոխէ Մաժմանի, Աստղիկի, Վանատուրի կամ Արուսեակի անհատականութիւններէն, որոնք կը համապատասխանեն վերի բնութագրումներուն:

Տաւրոսը այն տիպարն է, որ ոչինչ ունի, ուրիշ՝ որ կու գայ՝ հարցնող չունի եւ մ'ը որ կ'երթայ՝ կանչող չունի (էջ 200), ունեցածը՝ հագած հագուստներն են, զրուանները պարզապէս եւ հեռուէն եկածի տպաւորութիւն կը ձգէ (էջ 299):

Հետաքրքրական է, որ վերոյիշեալ անուններու ծննդագոյրին կամ պայմաններուն մասին յստակ տեղեկութիւններ չկան եւ արդէն կը յիշատակուին իրենց առաջին անունով միայն, մինչդեռ այլ անձնաւորութիւններ, ինչպէս Միքայէլ կանանեանը կամ ուրիշներ, կը նշուին իրենց անուն-մականունով, եւ այն: Քիչ մը տարբեր է պարագան Աստղիկին, որ գերեզմանատունը կը գտնուի, պարտը տակաւին թաց եւ աջ թաթիկին մէջ քրքումական մատիտով անունը գրուած՝ Աստղիկ, ինչ որ նոյնպէս զինք խորհրդաւոր անցեալի մը (ծնունդի) մէջ կը պահէ:

Յիշելու երկու մակարդակներու վրայ տուեալ տիպարներուն ընկալումը կը զարգանայ հետաքրքրական ընթացքով մը: Վանատուր «Հայաստան» ճաշարանը դարձնող հսկան է, որ քաղաքի բոլոր որրերը կը հաւաքէ եւ կ'որդեգրէ, բոլորին ծառայութիւն մը ունի կատարելիք՝ պե-

տական սպասարկութիւններէն մինչեւ անհատներու հետ վերջացող հարցեր: Դիւցարանական մակարդակի վրայ՝ ան հիւրընկալ վանատուն է, խորքին մէջ սակայն ծառայաւոր մարդ մըն է, որ բոլոր իրեն զիմողներուն կը փորձէ գոհացում տալ, անտէր որբեր մեծցնել, եւայլն: Անահիտ Մեծածորի ծօռ մեծցած եղապահ հովուհի մըն է, որ կը սկսի պնդումներէն դուրս ելած քաղաքին մէջ իրբեւ կիտ, առաջնորդ աշխատիլ: Չայն իրբեւ այդպիսին կարելի է տեսնել եւ, միւս կողմէ՝ իրբեւ Անահիտ դիցուհիի մէկ մարմնաւորումը, քանի որ ան նոյնպէս ցլապահ է, նոյն անունը կը կրէ, նոյն պնդակութիւնն ու բարբերը ունի, իսկ Մեծածորը Անահիտին նուիրուած լիճերէն մէկն է, Մեծածորի հեթանոսական տաճարին մօտ...

Տիրան եւ Արուսեակ բանահաւաքներ են եւ իբր այդպիսին իրենց աշխատանքը կը տանին: Սակայն Տիր գաղութեան աստուածն է, այսինքն՝ Տիրան կ'ըսէ՝ ա՛յն՝ որ իր կոչումով պիտի կատարէր, իսկ Արուսեակ աստուածութեան խորհրդաւորներն է:

Ասոնք աստուածներու գերբնական կարողութիւնները չունին եւ պէտք չունին առնելու, պարզապէս նկարագրային որոշ գիծերու խտացումը կը կազմեն: Ասոր մէկ օրինակն է Մաթանը, որ բանահաւաքներու պատարանատունն է եւ աշխատատեղութիւններու հեղինակ: Մաթան՝ Տիրանին եւ Արուսեակին կը պատմէ իր ուսուցիչին մասին (էջ 359), հին աստուածներու անոր կենդանի նկարագրութեան մասին եւ այն ուղարկութիւնը կ'ունենանք, որ ինքն իր մասին կը խօսի կամ այն Մաթանին, որ երեւում կու գայ մէկպէս առաջին էջերուն: Թերեւս խօսքը նոյն Մաթանին մասին է կամ Մաթաններու, որոնք իրբեւ նախատիպային միշտ եղած են կամ պիտի ըլլան: Նոյն ձեւով պէտք է տեսնել նաեւ միւս տիպարները: Ռեքեկային երկասարգութիւնը կը յիշեցնէ Աստղիկը:

Եւ, ահա նման շրջագիծի մը մէջ կու գայ Տաւրոսը:

III.

Բանահաւաքներ, ժողովուրդի զբոյցներուն մէջ պէտք է փնտռել կապուած լեզու պատանի աստուածը, որ մեռնող ու յառնող բնութիւնը կը խորհրդանշէ:

Մօտաւորապէս 100 էջի վրայ կարծէք հեթանոսական շրջանին մէջ կը գրանւի (էջ 189էն 197): Մաթանը, որ իր յաճ գրոյցները կամ ամէն ինչ կ'արձանագրէ, խաւարէն դուրս եկող Անահիտը իր ցուլերով՝ ժողովուրդը եղէգնեցող լոյսին մէջ, կապոյտ աչքերով պատանին, որ կը սիրաբանի լիճին մէջ՝ ցուլերուն հետ լողացող հովուհիին հետ: Դարուն է, գըլխուն վրայ զոյգ մը ծիծեռնակներ (էջ 200): Եւ Տաւրոսը կը սկսի հայկական գիւղերուն մէջ իր համբարգումներն: Ճամբան կը հանդիպի Մանուկին եւ միասին Նաւասարդ կ'երթան, ապա՝ Հոռի է, ուր Մըրիսիկին հայկական տառերը կը սորվիցնէ, ապա՝ Սահմի է, ուր աղջիկներուն հիւսած կարգադր կ'ուզէ տեսնել եւ աղջիկներուն հիւսածներուն թիւիւն ու կծիկները իրար կ'անցընէ... Աւելի ուշ՝ Գամ քաղաքն ենք, ուր կ'իմանանք թրաղացական Զարդարին ու Գրիգոր տղային պատմութիւնը: Ապա՝ Արեգ, ուր կը հանդիպի Աւեամին ու անոր համար կենցիկն է կը գիշերէ Գօզոսին տունը: Ապա՝ Ահեկ ենք, ուր Մովսիսարի, Կորիւնի ու Վահրիճի պատմութիւնը կու գայ եւ լախտակութիւն նկարագրութիւնը: Դեռ կը հանդիպի հեթանոս Սպիւրիգոնին ու կ'ուզէ լսել անոր հայտնող կնկան լուսանկարը, ինչ որ կը մասնէ Տաւրոսին բանահաւաք ըլլալու իրողութիւնը կամ այս իմաստով նանեներէն մէկը ըլլալ կը թուի: Ապա՝ Հրոսից ենք եւ Աւելաց, ուր կը լսենք անհիւրընկալ գիւղին առաւպելը եւ, էջ 297էն ետք է, որ յատկօրէն կը վերադարձինք ներկային:

Սակայն այս էջերուն վրայ յատկօրէն կը գրուի հարցը, երբ Տաւրոս լեռան ու Հովիտի անունն առաջ իւրաքանչիւր գիւղացիին կ'ըսէ.

«— Ես աւելի տեղ Երամ եմ փնտրում:

«— Ո՞ւմ:

«— Որ գնում է եւ նրա նախագար-
նի՞ կանաչ ու ծաղիկ է բուսնում:

«— Դա ագրիւրն է, եղբայր, որ կեանք
է տալիս կանաչին, ծաղիկին, ամէն ին-
չին» (էջ 297):

Մինչ այդ, սակայն, Սպիրիդոնը մէկ
այլ բացատրութիւն տուած է.

«— Իսկ դու չե՞ս տեսնիլ, որ մէկը
գնացի եւ նրա կոխած տեղում կա՞նչ բուս-
նի: Ես նրան եմ փնտռում:

«— Ինչո՞ւ չեմ տեսնիլ: Սերմացանն է
այդպէս քայլում, եղբայր» (էջ 288):

Անկախ այս առաջին 100 էջերուն վը-
րայ գործադրուած մեկնաբանութեան ե-
ղանակէն, նկարագրեալ յառակ նշաններ կը
ձգէ թէ՛ յառնող պատմութիւնի աստիճան մտ-
տին եւ թէ՛ Տաւրոսին հանդիպած վայրե-
քուն ու ղէպերուն:

Սպիրիդոնին վերոյիշեալ բացատրու-
թիւնը, անոր կնիւն հայհոյանքներուն
ունկնդրութիւնը, Հրոսիցի մէջ ամէն ա-
ւելորդ առարկայ պահող (աղբ պահող)
մարդուն պատմութիւնը, ակունքներուն
կենք տուող աղբիւրին պարագան, եւ-
տայն, հեռագհետէ երեւան պիտի գան եւ
պիտի առնչուին առաջին բաժնին: Ասոր
մէկ օրինակն է Նսեւ պատմութիւնը Ա-
Շամի ու անոր դրացի Պօղոսին, որոնց կը
հանդիպինք եւ առաջին բաժնին մէջ
(այսինքն՝ մինչեւ էջ 297), եւ աւելի ուշ
(էջ 244-ի վրայ եւ էջ 401-ի):

Իսկ Տաւրոսի բոլոր շարժումները կը
թելադրեն այն իրողութիւնը, որ ինք այն
պատահի աստուածն է, որուն մասին կը
խօսուի:

Ինչպէս Տիրան կը բացատրէ՝ այս մէ-
կը մեռած ու վերակենդանացող բնու-
թեան հետ եկած պատմութիւն աստուածն է,
որմէ ներշնչուած եւ որմէ բխած մարդ-
կային հոգիին մէջ թաղուած է վերածը-
նունդի առեղծուածը, եւ ուրկէ ծնունդ
կ'առնէ յարատեւիւ եւ վերադարձիւ.
մարդկային տենչը, շնորհիւ անմահու-
թեան գաղափարը» (էջ 336): Սակայն
պէտք է երթալ այս հարցին հետ առնչ-
ւած բոլոր մանրամասնութիւններուն.

«Իսկ գարնան, գարնան, ծաղիկ,

ստիպարակ բուսականութեան աստուա-
ծութիւնն էր, գարնան պաշտամունք, հա-
տիկի պէս էր, մեռնում էր եւ յարութիւն
էր առնում: Այս պաշտամունքի հետքերը
առասպելներում, հաւատալիքներում,
խաղերում, փոփոխութեան եւ այլուր
յարատելի են մինչեւ մեր օրերը, եւ փը-
շուրներով հասնի են մեզ: (...) Դա շատ
հասկանալի, շատ մարդկային եւ շատ գե-
ղեցիկ պաշտամունք էր, եւ հետագայ կը-
րօնների պէս միասնաւոր գաղափարա-
խօսութիւն չէր կրում իր մէջ, այլ բոլոր
մարդկանց ապրիւն ու յարատեւելու հա-
ւատար իրարմէ էր բաշխում: Մեր հա-
գում էլ լուսն է կատարում, շատ մեծած
յայտերի փոխարէն ծնւում են նորերը, ա-
մենայնուհանդերձ փնտրում անգամ՝ հագու-
թախարհներում ծնւում, ծաղկանում
են նոր յայտեր, այլապէս անհնար կը լի-
նէր ապրիլը: (...) Վերածննդի այս պաշ-
տամունքը չափազանց մարդկային է նաեւ
նրանով, որ հետագայ կրօնները եւ գա-
ղափարախօսութիւնները եթէ բաժանում
էին ժողովուրդները միմեանցից, տուղ-
ծում գաղափարախօսական պատեհներ,
սպառնալիքներ, որոնք մարդկանց կա-
պում էր իրար, որովհետեւ բոլոր ժողո-
վուրդներն էլ ունեցել են յաճախ բնու-
թեան պաշտամունք... Ահա գարնան ծը-
նունդի նկարագրութիւնը, ըստ մեր բանա-
հաւաքի բերած մէկ միութիւն, երկինքը իջ-
նում է լեռանց կատարներին եւ ծածկում
թա՛ճը մշուշով, ամպերի մէջ քննում է
որոտը, ցոլում է փայլակը՝ լուսաւորում
երկրից երկինք, եւ լեռնակատարում, ուր
մուտք է եւ ոչինչ չի երեւում, մշուշի, մը-
թութեան, փայլատակումների եւ որոտի
մէջ ծնւում է գարունը, եւ այդ քանիւ հե-
րածինը հեղեղներով վազում է ցած, դէ-
պի ստորոտներն ու լեռնահովիտները, եւ
քանի գնում է՝ ծաղիկ ու կանաչ է բուս-
նում նրա կոխած տեղում: Նրան պատկե-
րում էին հրաշալի պատմաւոր տեսքով, որ
կապույտ աչքեր ունի երկնքի հման եւ այդ
երկնքում երեւում են լեռները. պատմին
իւր աչքերում անդրադարձնում էր երկի-
րը, բնութիւնը, երկինքն ու լեռները...
Այս աստուածութիւնը նաեւ ագրիւրների

ակունքին էր ծնունդ, ջրի մեծամ էր, որ գնում էր եւ նրա կոխած տեղում ծագիկ աւ կա՛նչ էր բաւում: Նրան իր կանաչ ետեքերով եմ մանաչում: Նրա վեգետացիոն, բաւական բնայթի մասին է վկայում ետեքերով փառսը. մեր բանաստեղծի հարցին, թէ այն ա՛վ է, որ գնում է եւ նրա կոխած տեղում կանաչ է բաւում, մէկ՛ի այսպէս է պատասխանել. Սերմնացանը, որ սերմ մետելով գնում է ցեղերում եւ նրա գնացած տեղում կանաչ աբտ է բաւում: Որպէս զարմեւ, նա ելնում է մարտնչու դպար. ճիւղերի պսակը գլխին, նրա շարքը զարման անտառեր ծիծեռնակներն են թնամում: Որպէս բաւասկան բնայթի պաշտամունք՝ անտառը նա հասում հասկերի պսակ է դնում գլխին, նրա առիթ տակից մտնակներն ու գնումներն են օդ ելնում: Նաեւ հովիւների խըմամակայն է, շնորը հեռուից ճանաչում եմ նրա՛ն եւ չեմ հաշում, ամէն ինչով ցոյց են տալիս, որ ցանկանում եմ նրա շունը լինել, եւ հովիւները նրա մօտեմայր դրանով եմ ճանաչում: Որպէս իրրիգացան, ջրային կամ ցրառագման աստուած՝ նա ցրառացաններին, ցրառներին եւ ջրի բոլոր մնացած մարդկանց ավորեցրել է անձրեւի շփշփշով, ջրվէժի աղմուկով եւ այլ ճայներով ջրի սակաւութիւնն աւարտաւսութիւնը որոշել: Որպէս բեղմնաւորութեան աստուած՝ որոշ հաւատալիքներով նա ծնունդ է տալիս չքեր կանաց (էջ 336-338):

Տաւրոս ունի այս բոլոր յատկանիշները, իր անունէն իսկ մեկնած, որ կը նշանակէ՝ լեռներ: Մըջիւնիկը ամէնէն առաջ կը ճանչնայ զինք, երբ կ'ըսէ. «Նրա աչքերում լեռներ կային, պապ» (էջ 214):

(Մնացեալը յաջորդով)

Մինչ այդ, իր որոշ յատկանիշները յատակ են արդէն: Իր քունին մէջ, Հորոր պապը շուին կը նուագէ եւ Տաւրոս, յորհորհ օրը, իր քնացած ատեն լսած եղտոնակները կը սուլէ...:

Ջրաղացպաններուն մօտ Տաւրոսին երեւումը, հանդիպումը հովիւներուն՝ Արեւիկէն Ահեկ մամբուն վրայ, որը շունները վրան չեն հաջեր, անհիւրընկալ դիւղին պատմութիւնը, որը աղբիւրը կը չջանայ եւ լին մը կը կտրուի, եւայն, բոլորը Տաւրոսին հետ աղբիւս ունին:

Առաջնականին կամ խորհրդանշականին եղած յղումներէն առաջ՝ կարելի է սարել բացատրութիւն մըն առ առ, որ, ամէն պարագայի, կրկին կարելի է առնչել այս բոլորին: Տեղ մը, Արուսեակին ու Տէրանին խօսելով՝ Տաւրոս կ'ըսէ.

«... Հիմա պատմեմ ցուլերի մասին... Եւ ցլապան աղբկայ մասին, ինչպէս լսել եմ: Չեմ տես, թէ տեսել եմ, գուցէ թերահաւատ մնամ, բայց ես ինչ լսում եմ՝ տեսնում եմ ինչպէս իրական: Այդպէս տեսել եմ նաեւ ցլապան աղբկան, բայց դուք գրեք, թէ լսել եմ շամբուտում իր ցլերին թաքցնող հովաւիտ մասին» (էջ 321):

Գուցէ իր բոլոր տեսածները իսկապէս կ'ապրի Տաւրոս եւ կամ ի՛նք է անոնց գերակատարը, գուցէ կը պատմէ անասպել դարձող իրականութիւններուն մասին, որովհետեւ իր պատմածներէն կամ հաւաքած զրոյցներէն է, որ տակաւ ծնունդ կ'առնէ բնութեան յառնող աստուածը եւ իր պատմածներէն, որ կը ճանչնանք զինք...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

«ՕՒՆԻԱՆԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գարեգին Բազինեանցի (Բաղէշեանի — Գ. Ա.) խոստովանութեամբ այս կուսակցութեան ծրագիրը նոյնն է, ինչ որ հնչակեաններինը, միայն առ յաւակնութիւն չունի ազատելու բոլոր հայերին, այլ միայն թիւրքահայերին, որով եւ կուսակցութիւնը իրան անդամադրում էր առաւելապէս վերջիններին, բուն ազիտացիա է մղել թուրք կառավարութեան դէմ եւ մասնակցելով անյաջող ապստամբութեան (66) բուն փորձին՝ իր մեծամասնութեամբ եւ բոլոր նիւթական միջոցներով կործանուել է, իսկ ողջ մնացած անդամները առանձին-առանձին իրանց պատասխանատուութեամբ ոկսել են շարունակել գործը Ռուսաստանում:

Գրագրութիւնը պարզեց, որ հայերի անյաջող ապստամբութեան ողջ պորձը ամբողջովին պիտի վերագրել բոլոր հայ յեղափոխական կուսակցութիւններին ջանքերին, բայց առաւելապէս հնչակեաններին, դրօշակեաններին ու արմենականներին, որոնք զործում էին ինքնուրոյնաբար, ուստի եւ նրանց գործողութիւնները բաւարար չափով չէին համաձայնեցուած եւ ապստամբութեան ճշումից յետոյ յանգել են միանալու անհրաժեշտութեանը: Հաստատուած է նաեւ, որ առանց ազիտացիոնների ներգործութեան թուրքահայեր չէին ապստամբուիլ, որովհետեւ նրանք վայելում էին իր ու հարուստ կեանք եւ իբրեւ աւելի կուլտուրական տարր՝ զանազան պաշտօններ էին վարում երկրի վարչութեան մէջ ու իրանց ձեռքում պահում ամբողջ առեւտուրը, իսկ նրանց գիւղերը աչքի էին ընկնում իրանց բարօրութեամբ, մի բան, որ չէր լինի մշտական իրական ճնշման ներքոյ (67): Սա պարզուեց եւ նրանով, որ ինչպան ջարդին, շատերը այստեղ հետազայում ունեւոր դուրս եկան:

1897 թ. Դեկտեմբերի 27ին, № 2715ով եւ Ոստիկանութեան Դեպարտամենտին ներկայացրել հայ յեղափոխական կոմիտէների անդամների համապետարի Փրահսերէն բնագրից ռուսերէնի թարգմանած արձանագրութիւնը, որ վարչութեանս էր ուղարկել կառավարչապետի գիւնատուներ: Այս համապետարը՝ տեղի ունենալով Լոնդոնում 1896 թ. (68) Հոկտ. 26ից մինչեւ 1897 թ. Յուն. 13ը՝ որոշում էր հանել ի մի ձուլելու բոլոր հայ յեղափոխական կուսակցութիւնները, կենտրոնական (գլխաւոր) կոմիտէին ենթարկելով բոլոր միացածները Եւրոպայում, Թուրքիայում եւ Ռուսաստանում ու հակառակ ներկայ եղող մի քանի պատգամաւորների կարծիքին՝ շարունակել հայ յեղափոխական գործի բուն եւ յամառ պրոպագանդը գաղտնի եւ ազատ մամուլի հրատարակելով, դրամ ժողովելով եւ զէնք պատրաստելով: Այդ տեղեկագրով հաստատուեց պատասխանատուութեան կանչուած արմենականների ցուց-

մունքները բոլոր հայ յեղափոխական կուսակցութիւններէ միացման մասին։ 1897 թ. Վարչութիւնն հարցաքննութեան ենթարկեց Իվան Բալուբէկեանին, Մարտտ Ծրոյեանին եւ Յակոբ Աւետիսեանին, մեղադրելով նրանց պատճառքի 250 յօդուածով եւ 1898 թ. մի շարք մանր դրազրութիւններ ունեցաւ առանձին հատորներէ մասին, որը ոչինչ նորոյթ չուրաւ հայոց շարժման նկատմամբ եւ միայն մատնանշում էր նրա տեսականութիւնը։ Այս հաստատուած է Վառնայի(69) փոխ-հիւպատոսի 1899 թ. Փետրուարի 16ի № 40 հաղորդագրութեամբ, որ նշում է, թէ Վառնայում գործում են երեք յեղափոխական կուսակցութիւններ՝ դրօշակներ եւ հնչակեաններ, որոնց կենտրոնական կոմիտէն գտնուում է Լոնդոնում։ Փոխ-հիւպատոսի մատնանշած երրորդ կուսակցութիւնը Դաշնակցութիւնն է, որակաւորուող, միմիայն Թուրքաց հայերին ազատագրելու ծրագրով։ Ունի «Հնչակ» լրագիրը (?), որ տարածուած է Հայաստանում(70)։

1898 թ. աշնանը Թիֆլիսում նորից սկսուեց ունեւոր հայերի ահաբեկումը։ Վարչութեանս յաջողուեց յանցաւորին ձերբակալել իր այդ գործունէութեան հենց սկզբում։ Նա Գորիի տեղական գնդի փախստական զինուոր Պատուական (նիկոլայ) Մամչեանն էր, որն անկասկածօրէն Հայաստանի խռոնակութեան ժամանակ զէնքը ձեռին մատնակցել էր հայկական հրոսակաւորներին։ Նրա մասին եղած գործավարութիւնը հաստատեց, թէ նա իր երկու թաքնուած եւ ճանչցուած ընկերների հետ համարձակօրէն այցելում էր հարուստ հայերին, ներկայացնում «Դրօշակ» թերթի համարը, յանձնարարում իրան դրօշակեան յեղափոխական կուսակցութեան գործակալ եւ ճանապարհածախս պահանջում, յախշուակելով ինչ յաջողում էր ստանալ։ Անհրաժեշտ եղաւ որոշելու՝ թէ նա իրօք կոմիտէի ներկայացուցի՞լն է։ Գարեթէ է ենթադրել, թէ նա ինքնուրոյնաբար գործող զինակից հայ յեղափոխական էր, որ գուրկ մնալով միջոցներից, դրամաշորթութեամբ էր զբաղւում կոմիտէի անունից։ Գալստեֆի ազատուելով՝ նա գունդն ուղարկուեց, բայց փախաւ եւ լուրերին համաձայն մտել է մի աւազակային խումբ եւ սպանուել Գանձակի նահանգում պարսկական սահմանի մօտերքը։

Հայկական շարժման յարատեւման մասին եղած մանր տեղեկութիւններից ու ցուցմունքներից զուտ միաժամանակ 1899 թ. Օգոստոսի 14ին Վարչութիւնն պաշտօնական յայտարարութիւն է ստանում Ախալքալաքի ոստիկանական պրիստաւ Մարդարեանից, թէ հայոց շարժման մասնակցութիւն են ցոյց տալիս տեղական երեք պաշտօնական անձինք — քաղաքային դպրոցի ուսուցիչ Զաւուլ Տէր-Գրիգորեանը, հարկային տեսուչ Ղուկասեանը եւ Բարալէթի գաւառամասի ոստիկանական պրիստաւ Մեծատունեանը(71), իսկ սրանց հետ հայոց դպրոցների մի շարք ուսուցիչներ, որոնք նուիրատուութիւններ են ժողովում, զենք փոխադրում եւ կապ պահպանում։ Հայ յեղափոխական կոմիտէի հետ։ Այս մասին 1899 թ. սկսած գործավարութիւնը կոտորելուպէս հաստատեց ամբաստանութիւնը եւ պարզեց, որ այդ անձանց գործունէութեան մի մասը վերաբերում է Ախալքալաքի հայ յեղափոխական կոմիտէի անցեալին, կոմիտէի, որի անդամն էր Տէր-Գրիգորեանը, իսկ միւս մասը ընդգրկում էր 1899 եւ 1900 թ.թ. հայկական յարատեւող շարժումը։ Այսպիսով յիշեալ գործավարութիւնը հաստատեց, թէ որքան խորն է աւազակային շարժումը, որ նրան մասնակցում են այնպիսի անձինք, ինչպէս ուսուցիչներ, հարկային տեսուչ եւ անգամ ոստիկանական պրիստաւ, ուսումնական կառավարութիւնից թուակ ստացող ծառայողներ, որոնք հաւատարմութեան երդում են տուել նրան։ Եւ պարզուեց նաեւ այն, թէ ինչու այդ շարժումը այնքան վարպետօրէն խուսափում է կոտորածի։

թեան իշխանութիւնից եւ տոանձին անհատներէ մասին եղած հետապնդումները վերջանում են նրանով, որ նրանք չեն գտնուում ու ժամանակին էլ նախազույգում են:

1890 թ. Մարտին Թիֆլիսում յայտնաբերուեցին զանազան բարենպաստ պատրուակներով հայերի գողտնի հաւաքութիւններ, որոնք վերջանում էին դրամաժողովարարութեամբ: Մի այդպիսի հաւաքութի մասնակիցներէ ինքնութիւնը պարզելուց յետոյ՝ խուզարկութիւններ եղան եւ 1899 թ. Սեպտեմբերի 15ից նրանց մասին գործադարութիւն սկսուեց, որի հետեւանքով յայտնաբերուեցին մի շարք ինչպէս ուստահատակ, նոյնպէս թուրքա եւ պարսկահապատակ անձինք, որոնք մասնակցում էին հայկական յեղափոխական շարժման մէջ, ինչպէս Վարդան Ղազարեանը(72), Բարսեղ Գրիգորեանը(73), Նաստալիա Մատինեանը(74) եւ միւսները, թուով 33 հոգի: Այդ գործադարութիւնը իր մէջ առաւ նաեւ Յակոբ Գոշարեանին(75), որ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Բաժումի ճիւղի նախագահն էր. Գոշարեանի՝ թէ՛ իբրեւ անհատի եւ թէ՛ իբրեւ յիշեալ ընկերութեան ճիւղի նախագահի՝ մօտ եղած խուզարկութիւնը ընդարձակ տեղեկութիւններ հայթայթեց նրա մասնակցութեան մասին հայոց յեղափոխական շարժման մէջ: Բոնուեց ընկերութեան ճիւղի տեղեկագրի սեւագրութիւնը, որի մէջ նշանակուած է, թէ ինչի վրայ էին ծախսուում հաւաքուած գումները, մի տեղեկագիր, որ միանգամայն չէր համապատասխանում պաշտօնապէս տեղական նահանգապետին ներկայացրածին, ինչ պահանջում է ընկերութեան կանոնադրութեամբ: Իրան սպանաւորող ծանր պատասխանատուութեան երկիւղից, Գոշարեանը պարզ խոտուովանց, թէ իշխանութեան ներկայացուած բոլոր տեղեկագրերը թուական են եւ այլ տուեալներով հաւաքուած գումներին եւ ծախքերի բովանդակութեան մասին՝ չինքնու են եւ որ ընկերութեան բոլոր իսկական եկամուտները աւելի խոշոր են, քան ցոյց է տրուում տեղեկագրերում, եւ դադար տրուում է հայ յեղափոխական գործին, թէ՛ տեղը երեւացող յեղափոխականներին եւ թէ՛ ուղարկուելով յեղափոխական կոմիտէներին Հայաստանում եւ Եւրոպայում: Այս լիովին հաստատուեց խուզարկութեան բռնած վաւերագրերով եւ հիմք ծառայեց առաջադրելու, որ փակուի Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը(76): Սրա հետեւանքով միադեալ ընկերութիւնը բաժանաբաժան արուեց իր ճիւղերի համեմատ, իսկ Բաթումի, Ալեքսանդրապոլի եւ մի քանի ուրիշ վայրերի ճիւղեր խափանուեցին իրանց վնասուկար գործունէութեան համար: Գործադարութիւնը հաստատեց եւ միւս մասնակիցներին աչքի ընկնող գործունէութիւնը, որ արտայայտուում էր դրամահաւաքումով, հրացանների ու փամփուշտների գնումով եւ փոխադրութեամբ: Գնում էին ո՛չ միայն բերդանի հրացաններ, այլեւ՝ վերջին երեք պիստոլի սիստեմի, որ ընդունուած է մեր բանակում, եւ այդ զէնքը փոխադրուում էր արտասահմանի տնօրէնութիւն տեղական յեղափոխական կոմիտէներին:

Եւ այդ գործադարութիւնը, աստիճանաբար ընդգրկելով նոր գէժքեր՝ մզմուռեց մինչեւ 1901 Փետրուարը: Այն նչեց պատասխանատուութեան կանչը անձներին վիճակի, կրթութեան եւ կարողութեան արտակարգ տարբերութիւնները եւ հաստատեց, թէ տուեալ սրահուն կուսակցութիւններն արդէն ձուլուել են, քանի որ ոչ ոք չխոստովանեց որոշակի իր պատկանելիութիւնը նրանցից մէկն ու մէկին, այլ ամէն ոք իրան անուանում էր հայ հայրենասէր, որը գործում է անկախաբար, վոտահանուով միւսի աջակցութեանն ու համերաշխութեանը այնպէս, որ կարծես Լեթարկում է յեղափոխական կենտրոնի ընդհանուր ցուցմունքներին: Այդ կենտրոնի ծրագիրը չի յայտնաբերուած եւ մեղադրուող քաղցենի Ալեքսանդր Ծաթիբեանի մօտ գտնուած

հայ յեղափոխական զբոսիկը — «Երևանական շաղկապ» (հրատ. Եղիսյան, 1898 թ.) (77) հաստատեց, թէ իրանց հայերը անհրաժեշտ են դատում առանձին կուսակցությունները դրանի ապիկար եւ անարժան անդամներին ու նրանց ընդհանուր ազդեցությունից, որպէսզի հետաւոր լինի ընդհանուր սպառնալիքով եւ ապստամբութեամբ միացած աշխատանք տանել հայերի ազատագրութեան համար:

1901 թ. Վարչութեան գործակալութիւնը՝ հետամուտ լինելով սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան մի քանի անդամների գործունէութեան՝ ցուցմունքներ ստացաւ այն վնասակար եւ լուրջ յեղափոխական աշխատանքի մասին հայ բանուորների մէջ, որ կատարում էին Թիֆլիսում բնակւող թուրքապատկաններ — Գաբրիէլ Կարապետեան Կողիկեանցը (78) եւ Պօղոս Գրիգորեան Փիլոսեանցը (79): Նրանց բնակարանները որոշելուց պարզուեց, որ երկուսն էլ անցադէր չունին, փոխել են Թուրքիայից Մասսաչուսէթսի Վարդից յետոյ եւ դանձում են Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան խնամակալութեան տակ: Կողիկեանցը ծառայի պաշտօն էր ունեցել ընկերութեան բնակարանում, բայց բաւարար ինտելիգենտութիւն յայտնաբերելով՝ պաշտօնի էր ընդունուել ընկերութեան անդամ բժիշկ Ջարդարեանի մօտ նրա կաթնասնտեսական ֆերմայում, սակայն՝ ծառայելով բժիշկ տընտեսութեան մէջ՝ նա ինչ որ պատճառով օգտուում էր իր նախկին բնակարանից, որը կից էր ընկերութեան գիւնաստանը: Կողիկեանց իր գրաւոր աշխատանքների համար օգտուում էր այն գրասենյակից, որի վրայ պարապում էր ընկերութեան քարտուղար իշխանուհի Թումանեանը: Իր զբաղմունքների ժամանակ Կողիկեանցի մօտ խուզարկութիւն կատարուեց, ըստ որում նա բռնուեց այն պահուել, երբ դրում էր հայ յեղափոխական ձեռագիր «Բանուոր» (80) թերթի ընթացիկ համարը: Այստեղ էլ նրա պաշտակալում գտնուեցան տպարանական հայ տառեր, ակներեւ նրա համար, որ կարելի լինի նոյն սենեակում գտնուող ընկերութեան ընդօրինակող մամուլի օղնութեամբ անցնել թերթի տպագրութեան ձեռքով (81): Խուզարկութիւնը բռնեց եւ շատ խճապաբարձր յեղափոխական նիւթ, մասամբ տրոհեց տեղափոխական թերթում, մասամբ պատրաստած հետապնդների համար: Փիլոսեանցի մօտ եղած խուզարկութիւնը, որը ծառայի պաշտօնում փոխարինել էր Կողիկեանցին եւ ապրում էր միանգամայն ուրիշ տնում, իր արդիւնքներով հաստատեց լիակատար կապակցութիւն Կողիկեանցի գործունէութեան հետ: Իր բացատրութիւնների մէջ Կողիկեանցը բացայայտօրէն ճանաչեց իրան հայ յեղափոխական, պատրաստ՝ կրելու ամէն մի պատիժ եւ յամենայնդեպս շարունակելու իր գործը: Նրանց մասին 1935-րդ յօդուածի կարգով յարուցած հարցաքննութիւնը պարզեց, որ հայ յեղափոխական կուսակցութիւնը բացառապէս ազգայնական պրոպագանդը բաւականաչափ ուժեղ միջոց չի համարում յեղափոխական գործին մասնակից դարձնելու հայ ժողովրդի հասարակ դասին, մասնաւոր բանուորներին, որոնք ապրուստի համար անձնատուր են լինում կողմնակի հողատերի: Այս պատճառով նա իր ծրագրերն է մուծել անարխիզմին հակուած սոցիալ-դեմոկրատական քաղաքականների պրոպագանդը բանուորների մէջ, բացառելով ամէն մի կառավարութիւն եւ օրէնք, որոնց հովանաւորութեան տակ եւ ուր էլ որ ապրում են հայերը, այս կերպ աջակցելով եւ ոռու յեղափոխականներին, որոնց հետ, ինչպէս ասուած է, դեռ վաղ նրանք համաձայնութեան են եկել: Կողիկեանցը բացասում էր «Կոմիւնիստ» եւ «Զնչակ»ի ծրագրերներին հետեւողութիւնը եւ պնդում էր, որ գործել է անկախաբար հայ յեղափոխականների արդի գործունէութեան ընդհանուր ուղղութեամբ, չբացասելով նրանց գլուխ ազգայնական ձգտումները եւ ասում էր, թէ իր գործը

լաւ է ընթացել: Բանուորները լրագրելը կարգում էին սիրով եւ այն հայ բանուորների մէջ քարոզելով ընդհանուր, բոլոր բանուորների յեղափոխական շարժման հետ մուլուելու միտքը՝ շօշափելի յաջողութիւն ունէին: Բանուորական հարցի մասին Վարչութեան կատարած շատ դրագրութիւններից ու հարցաքննութիւններից երեւում է, որ այդ շարժմանը մասնակից են բազմաթիւ հայեր(82), յաճախ աւելի ձեռներէց ու յամառ, քան նրանց ընկերակից ուսաներն ու վրացիները, որ աւելի առաջ են յարել շարժմանը եւ աւելի յախուռն են իրանց ազգային բնաւորութեամբ: Այս հարցաքննութիւնը միանգամայն արատաւորեց Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան գործունէութիւնը, որովհետեւ լիովին ապացուցուած է, որ իշխանութեանը տրուող նրա տեղեկագրերը աւելի քան կասկածելի են եւ որ նրա ամբողջ բարեգործութիւնը նպատակ ունի օժանդակելու Թուրքիայում տառապող եղբայրներին եւ շատ անշնան ու անիրական է տեղական հայերի համար: Նա չունի մի խնամատարական օթեւան եւ հաստատութիւն, չնայած որ պաշտօնապէս ցոյց է տալիս 12-000 ու եկամուտ, անշարժ կայք ունի քաղաքում եւ 200-000 ու աւելի դրամազուլիս, պահում է մի ձրի դրագարան-ընթերցարան, որը հազիւ թէ պատշաճում է բարեգործութեան: Այս պատճառով առաջադրուած թիւն եղաւ խափանելու այդ ընկերութիւնը, որովհետեւ նա ոտնահարել էր եւ իր նոր կանոնադրութեան շրջանակները:

(Շար. 4 եւ մնացեալը յաջորդով)

ՏԵՂԵԿԱԳՐԻ ՆՈԹԵՐ

06. Խոսքը հաւանաբար կը վերաբերի Վանի 1896ի ինքնապաշտպանութեան:

07. Հոս կը դտնենք հայկական շարժման կրկնակիւրէն հազարուոյ թշնամական գրոյթ մը, ըստ որում՝

1) Հայութիւնը ժամանեան պետութեան մէջ կը վայելէ անտեսական եւ մշակութային բարձր մակարդակ. ուրեմն, յեղափոխական շարժումը արգարացնող տնտեսական-ընկերային տաքնապ գոյութիւն չունի:

2) Թեղափոխական շարժումը արուեստական բնոյթ ունի, արտաքին կոմիտէներու կողմէ ստեղծուած:

Առաջին տեսակէտը շատ տարածում ճանչցած է եւ կը շարունակէ ճանշալ՝ բոլոր տեսնց ժամ, որոնք հայութիւնը կը դատեն իր յըռանքին սակաւորականներու ընդմէջէն: Փիւն Բիլլատ, Վօր Լիւմիսիայի խմբագիր եւ Մարգկային Իրականց Լիկայի ընդհանուր քարտուղար, կ'ընէր սա հաստատումը. — Եստե՛ր կը կարծեն, որ մենք սխալ կը ճանշանք հայ ժողովուրդը: Եւ երբ կը դատեն զձեզի ու աշխատաւոր Հայաստանը հարուստ եւ տնտեսաբար հայ անհասանելու ընդմէջէն, Եւրոպայի կեդրոններուն կամ Եդիպոսթի մէջ հաստատուած, դժուար կը դառնայ մարդ հետաքրքրել հայութեան դատով (տես Վօ. Գիլյանի յիշատակիմք հատորը, Փարիզ, 191, էջ 220):

Երկրորդ տեսակէտը զարմանալիորէն արժազանդ պիտի դտնէ գերմանացի ընկերավարականներուն ժամ, որոնք մինչեւ 1896, Եկատի ստեղծով Հնչակեան եւ Գալանկական կազմակերպութիւններու կովկասեան Ժագումը, հայկական շարժումը պիտի դիտեն իբր որոս պետութեան մէջ դաւը: Իսկ առաջին հայ բողեւիկները պիտի դատապարտեն կովկասահայ սակն շարժում Թուրքիոյ մէջ, ի նպաստ Թուրքիոյ հայութեան:

08. 1896ին, վերջ կը դտնէ Հնչակեան կուսակցութեան գարձակողականք եւ միանգամայն սքնագործոս շրջանը: 1887ի իր հիմնադրութենէն մինչեւ 1896, կուսակցութիւնը կը զիկավարուի կեդրոնէն, այսինքն՝ Նաղարէհեան սմոլին եւ Վնչակցի շուրջ խմբուած իրենց ընկերներուն կողմէ: Կուսակցութեան գործունէութիւնը 1890էն 1895՝ պատճառ եղած է Զարդեան եւ դիւանագիտական միջամտութիւններու, որոնք սակայն մնացին են անհետանալ: Այս ձախողութիւնները կուսակցութեան, քայքայեալ ընդհանրապէս հայութեան մէջ տեղի կաւ տան բուռն վէճերու եւ բուռն քննադատութիւններու՝ կուսակցութեան հասցէին, անոր մարտավարական ըմբռնումներուն շուրջ:

Թուրքիոյ ու Եդիպոսթի (ուր հարուստ հայ քաղքենիութիւն մը կար սեղանաւոր-

ներու, պետական բարձր պաշտօններու եւ հոգատէրերու) հնչակեանները կողմանան իւրեանց կուսակիցները կը ձեռնադրեն թուրքիոյ հայութեան դատը ուսուսանողի եւ հայապահպանի կողմէն: Ենչտը զննելով դատակարարին պայքարին վրայ, կողմանալ հնչակեանները խրախուսեցին են ո՛ր միայն մահմեդական պահպանողական ընկերութիւնը, այլեւ՝ հայ քաղաքներու, որ չէ հետաքրքրուիլ ողջայնի հարցով, ինչպէս եւ արեւմտեան զբաղման ընկերութիւնը, որ ա՛յլ կը մերժէ յենարան դառնալ հայկական շարժման:

Այս հարցը լուծելու համար էր որ, 1898 Օգոստոս-Սեպտեմբերին, Լոնտոնի մէջ կը կայանայ հնչակեան առաջին համագումրը: Մարտավարութեան եւ ընկերվարական գաղափարաբանութեան մակարդակներուն է, որ կը ստեղծուին երկփեղկումն ու խորմը հնչակեան կեդրոնին (նաղարէկեան) եւ հակա-նաղարէկեանականներուն միջեւ: Վերջինները, որոնք կը ներկայացնեն մասնաւորաբար թուրքիոյ, Եգիպտոսի եւ Միացեալ Նահանգներու հնչակեանները՝ 1898ին իրենք զիրենք կ'անուանակոչեն «Վերակազմեալ Հնչակեան»:

1898 Սեպտեմբերին, հնչակեան կեդրոնը կը կազմակերպէ ուրիշ համագումր մը, խառնէն անմիջապէս ետք: Գլխաւորաբար կողմանան տալիքով, ան կը ստեղծէ հնչակեան յեղափոխական կուսակցութիւն մը, որ կը պահէ իր ընկերվարական նրազրը, մարտահրապարակութիւն կը արձակէ, բայց կը լքէ հանրային ցոյցերու քաղաքականութիւնը: Սեպտեմբերէն լատ տկարացած՝ կուսակցութիւնը պիտի կծկուի կողմանի եւ Պարսկաստանի վերանայ (տե՛ս «Պատմ. Ս. Դ. Հնչակեան. . .», անդ, էջ 270-276):

60. Պաշկարաւորապէս լատ Հինգէն կու գայ: Ժ. դարէն մինչեւ ի. դար հայկական յաջորդական ներգաղթներ տեղի ունեցած են այս երկրէր: Սակայն, զազու-թի ծաւալումը (ինչպէս Բուսանիոյ եւ Յունաստանի պարագային) տեղի կ'ունենայ մասնաւորապէս իւրիշ լիւրճերու շրջանի սկսած հետ: Ժ. դարու վերջերս եւ ի. դարու սկզբին, հայկական բնակչութեան կեդրոններն են՝ Վանան (որ ժամ է հ'ա. Կ. Պոլսոյ, հ'ա. Մալմիկի), Բուսանքը, Ֆիլիպիոսի, Սուրման եւ Սոփիան: Ներկայ տեղեկագրի ժամանակաշրջանին՝ տասնչ զլիսուորը Վանան է: 1834ին սկսեալ, Վանանի մէջ կը ճատարակուի պարբերութիւն մը — փաստը՝ համայնքի կենսականութեան:

90ական թուականներին սկսեալ, Պաշկարաւորապէս պիտի դառնայ թուրքիոյ եւ Սահ-կան ժամիկ յեղափոխական խորհուրդ, հ'ա. հնչակեաններուն, հ'ա. զանազանականներուն հա-մար, ինչպէս պիտի ըլլար Պարսկաստանը: Այսուհանգիւրդ, հիմէ հոն զիսուորական պատ-րաստութիւններ կը կատարուին, եւ զիսուորական տնտեսական տեղի կ'ունենան (Գրի-տարափ Միջագետքի Սոփիանի մօտ է, որ պիտի սկսենուի, 1905ին, ուսման փորձի մը ըն-թացքին), ինչպէս կը զբոսի աւելի քարոզչութեան, սեւական-ընկերվարական պատրաստու-թեան վրայ: Պաշկարական ընկերութեան մէկ աղկալութիւնը արդեօք, ճիշդ է, որ Փոլս-տիւ իր կեցութեան շրջանին, որ կը դառնայ 1894ին 1897, Տիմիթի Պաշկա. որը թիւ մը հայ երկրասարդներ մարքտիստ կը դարձնէ: Բայց, փոխադարձաբար, պէտք է շեշտել, որ այս թուականին հնչակեան ու զանազանական՝ տարածիներն են իրենց կարգին ընկերվա-րական զազափարաբանութեան Պաշկարայ մէջ, զորմիկներ պատրաստող զարդի մեկն տակ: Իրենց մրցակցող զորմուկութիւններուն կարեւորութիւնը կը լափուի իրենց մա-մուլի ներկայութեամբը (տե՛ս Գ. Հնչակեան, անդ):

70. Ըզանը չփոխ մըն է, անշուշտ: «Իրօշակեան» հոմանիսն է զանազանականի: Եւ անշուշտ «Հնչակ» Դանակցութեան օրգանը լի է:

71. Ախալքալաքը շրջան մըն է, որ Հ. Յ. Դանակցութիւնը զորաւոր խորհուրդներ տեղեկաց: Հաւանաբար հոս հշտած անմիջը Դանակցութեան համակրիներն են: Զաւալ Տէր-Գրիգորեան (ուսուցիչ, թարգմանիչ, լրագրող՝ կապուած «Մշակ»ի, «Մուրճ»ի), Լեւոն Ղուկասեան, Ս. Մանասեան — կը վաշիւնին մեծ ժողովրդականութիւն, որովհետեւ յեղափոխականներու հետ զորմակցաբար (տեղեկագրի մէջ յիշեր այս մանրամասնութիւնը) պայքար տարած էին վաշխատուկերու դէմ: Դարմանի կողմէ ինքնաձի պատրաստուած վիճակագրութիւններ ցոյց կու տան, որ շրջանի 108 գիւղերու հայ, վրացի կամ թուրք ազգաբնակչութիւնը 10-20 վաշխատուկերու կամ կուսակցութեան կը պարտէին 1:200-000 ուսուրի (տե՛ս Գ. Անանեան):

72. Հաւանաբար զանազանական մը:

73. Բարեկ Պրիգորեան, կամ Մեկիք Գրիգորեան, կամ Դարա-Մեկիք՝ Հին յեղա-փոխական մըն է, մահացած թիֆլիս 1915ին (տե՛ս Գ. Անանեան): Դարա-Մեկիք (Բարեկ Մեկիք Պրիգորեան) կը պատկանի կողմանան յեղափոխու-կաններու առաջին տերունդին: 1890ի շուրջ, Բարեկ հետադարձաբար պաշտօնային է, որ կը կազմէ երիտասարդ հայկականներու խումբ մը, հայ ժողովրդական բանակի նրազրը մը

մշակելով՝ կը մեկնէր Երկիր, Վան, Էրզրում։ Էրզրումի մէջ կապ կը ստեղծէ Պաշտպան Հայրենեացի կազմակերպութեան հետ (1881-82) (տե՛ս աւելի վեր) եւ յարաբերութիւն կը հաստատէ Տերմիտի զեւրոստի հետ։ Վերադառնալով Բագու (1883 ?), կը հաստատուի քարիւղային շրջանին մէջ եւ կը մեծաւարժ հայ ճարտարապետներու եւ բանուորներու կապ-մակերպման, չին է, որ կ'ըլլայ առաջին անգամակցողներէն մէկը Դաշնակցութեան (1890), որուն առաջին պիտատար խումբի (1892) կազմակերպիչը կը դառնայ, Պարսկաստանի մէջ, Մինչեւ 1890, կ'ըլլայ կապը պահուող՝ Պարսկաստանի, Երկիր եւ Կովկասի միջեւ։ Երկու մասեւեռում ունի. զինքն չայտնութիւնը եւ ապահովել զեւրոստի պորտակցութիւնը (տե՛ս «Հայրենիք» Ամսագիր, 10 Օգոստոս 1898, էջ 150-160)։

74. Նախաժողովարան, Նիկոյա Մատենանի (տե՛ս վերը, տեղեկագրի նոթ 14) քոչորէն մէկը։ Դաշնակցական։ Հաւանաբար պորտն միայն Կովկասի մէջ, ուր սակարէ-զով մանկապարտիկականութիւն էր։

75. Յակոբ Քոչարեան (1865-1933) նման է Երեւան։ Ուսած՝ Երեւանի պիտակցութեան, ապա՝ Մոսկուայի համալսարանին մէջ, պատմութիւն եւ լեզուաբանութիւն։ Այս վեր-ջինի մէջ օժանդակ դաստիարակ պաշտոն մը մեծելով՝ կը վերադառնայ Կովկաս, զբաղուի Հայութեան դասով։ Նախ կը դասաւանդէ, ապա՝ քարիւղի բազմամիլիոնաւոր Հայապետ Մանթաշեի փոքրիկ մէջ պաշտոն կ'ընդունի։ 1890ին՝ Դաշնակցութեան հիմնադրողներէն կ'ըլլայ։ Միակեան եւ գործած, բուն գործունէութիւն կը վարէ. միանգամայն հոգաբարձու վարժարաններու, դրական, թատերական հայ կազմակերպութիւններու անդամ, բարեգործ-ժաւան ընկերութեան նախագահ, պատասխանատու գործիչ Դաշնակցութեան, լրագրող, թարգմանիչ, Ազգային Բիւրոյի քարտուղար, եւայլն։ Երկուր ասոն Փարիզի մէջ վարելէ ետք Հ. Հանրապետութեան պատմութեան զարգացման պայանը, կը վերադառնայ Խորհրդ. Հայաստան, ուր, մինչեւ մահը (1933), կը ստանձնէ պաշտոններ Կարմիր Ռաշէ մէջ։

76. 1898ին, ցարին ուղղուած գաղտնի տեղեկագրով մը (հրատարակուած Պաշտպանի մէջ եւ վերջերս՝ Անկախի կողմէ, անդ, էջ 61) փոխորդայն Կովկասի Բարեգործական ընկերութեան մասին կը գրէ. «...Հայ քաղաքային ընկերութիւնները ասիայի քաղաքա-կանութեան կը զբաղին, բայց քաղաքայինութեամբ (...) Յետակ տեղեկութիւններ աւելնէ, ըստ որոնց անդամակալ յիշատակներու գործակալներն շատեր՝ այս ընկերութիւններու ան-դամ էին...»։ Քոչարեանի պարտական (տե՛ս վերը, տեղեկագրի նոթ 75) կը փաստէ, որ այս ընկերութիւններու անդամները երբեմն յեղափոխական շարժումի լծուած կ'ըլլային։ Ինչ որ անհերք է՝ այդ շարժումին անդամական ըլլալն է։

1899ին, Կովկասեայ քոչոր ընկերութիւնները (Բարեգործական Մարզադպրակական ընկերու-թիւն, Տիկնանց Բարեգործական ընկերութիւն, Կովկասեայ Հայ Բարեգործական ընկերու-թիւն) լուծուեցան. իրենց արտօնուեցաւ վերակազմութիւնը՝ Նոր Կանոնադրութեամբ (մեր ան-դիւղէրը կը յիշատակէ ասիկա)։ Նոր կանոնադրութեամբ կ'աւելիւնէ մշակութային ամէն գործու-նէութիւն (օժանդակել նիւթապէս զարգացնելու, ազգայն ուսանողներուն, գիրք հրատարա-կել, զբաղարան պահել, եւայլն), ընկերութիւններու միակ մարդ մընով զոչորմութիւնը։

1901ին, ընկերութեան կեդրոնին մէջ խուզարկութեան մը շնթաղէին, կը դառնուի արգելաւած թերթ մը։ Հակառակ անոր, որ ոչ մէկ կապ փաստուեցաւ ընկերութեան հետ եւ թերթին միջեւ, ցարական վարչութիւնը կրէին արգելիչ ընկերակցութիւնը։

77. «Իմալուտընդմեր», 64 էջոց գրքով մը, հրատարակուած է 1898ին, Երկր-աստի մէջ. հեղինակ՝ Յարութեան ճանկիւնան, հեղինակ։ Ձրի բաշխուած այս գրքովը, քա-նական միջակարակ, կը մտնէ ճարտարութեան, զինգիւտութեան ու զաւանդութեան անհատները, հերոս ու նահապետ մեծացող, որոնք կը վիտան յեղափոխական շարժումին մէջ ու կը խան-դարեն Վրոյր Գործը։ Ուղղուած է ն'ա Հնչակեան Կեդրոնի, ն'ա Վերակազմակերպութեան զըն-թաւոր զեկաւարներին՝ Ա. Արփիարեանի գէտ։

